

ἰ ³Ññ³Ü Ø³ñiÇñáèl³Ý
°ì ðàä²Î ²Ü ä²îØàôÂÚàôÜ



Օր ծառայող շնորհակալություն

‘Կուրվա, կուրվա’, - հայհոյեցի ես՝ մեծ դժվարությամբ դուրս քաշելով Հայաստանից հետս բերած, խղճալու չափ փոքր ջեռուցիչը՝ ‘կիպիտիլնիկը’, լոգարանի հայելուն կից պահարանի՝ անելիների համար նախատեսված վարդակից՝ միակ տեղից, ուր կարող էի օտար էլեկտրական սարք միացնել, որի պատճառով ‘Նեսկաֆեի’ ամանն ու թեյի գրալը հայտնվել էին ատամ մաքրելու պարագաների ու միանգամյա օգտագործման ‘Ժիլետի’ կողքին: Եվրոպական մի շարք երկրներում խիստ գործածական ‘կուրվա’ բառը հայերեն ‘բոզիկ’, ‘պոռնիկիկ’ է համարժեք, ուրեմն, ինչքան պետք է համը հաներ որևէ մեկը 2-3 օրում, որ սուրճ սարքելուց բարձր հայհոյես՝ պատկերացնելով մաս առաջիկա ներկայացումը, երբ ձեռքերդ վառելով մեծ բաժակը կտանես հավաքասրահ, բայց իրեն բաժին չես հանի: Ջեռուցիչի հետ կապված վտանգավոր անպարարությունից (եռման ջրի բաժակը կարող էի շուտ տալ վրաս, եթե ձեռքս թափով ետ գար), որի շնորհիվ օրը մի անգամ մեծ բաժին սուրճ էի խմում ոչ ռեստորանային գներով, միտքս թռավ ճամփեզրի բուֆետը, որտեղ նախորդ երեկոյան փակել էի իմ ու 2 իտալուհիների խմիչքի հաշիվը, ինչն ինձ երկրորդ անգամ վերջին շաբաթում ստիպել էր զոջալ առատաձեռնությանս համար, որն իմ վիճակում եղող մարդուն խստորեն արգելված էր * - խայի պես երկրում, ուր ծորակի ջուրը խմելու չէր, խանութից կամ սրճարանում ամեն օրվա գնածն էլ գումարվում - ահագին փող էր դառնում:

Միայն թե այս ավստսանքս շատ ավելի դառն էր, որովհետև նախորդ անգամ խոսքն ընդամենը մի հարբած ամերիկացու էր վերաբերում, որն ինձ գոռով մի քանի գավաթ գարեջուր էր պատվել, որի փոխհատուցումն իր ծնողներին պատկանող ‘Ռոբերտ-այլընդ’ կոչվող կղզու փառաբանությունը լսելու պարտադրանքն էր, որը, սակայն, ոչ միայն չկասեցվեց հարևան ռեստորանում, ուր արդեն ե՛ս էի իրեն հյուրասիրում, այլև հայրենի կղզու հանդեպ կիրքն արտահայտվեց՝ նրա անունն անթիվ անգամներ տարբեր թղթերի վրա նկարելով, ասպա գրպանից հանելով ու սեղանի վրա ջարդելով միգուցե հենց այդ նպատակի համար նախատեսված միանգամյա օգտագործման գրիչների խուրճը, որոնց հաջորդեց դիմացս դրված իմ թանկանոցը, որն անասունը փչացրեց: Թեև անմիջապես ներողություն խնդրեց, բայց թե դա էլ քթիցս բերեց՝ իբր չհիշելով, թե որ երկրից եմ ու հարցնելով՝ արդո՞ք պարսիկ, ավելի ճիշտ՝ իրանցի չե՞մ, ես արդեն պատասխանում էի. եթե դա է ուզում լսել՝ ե՛մ, երբ տռեց՝ իբր պատահաբար, որից հետո ես արհամարհաբար փողը սեղանին շարտեցի-հեռացա, որքան էլ մի շվեդ տղա նախորդ ռեստորանում հասկացրել էր, որ ինձ պարտավորված չզգամ դրա հյուրասիրությունից՝ իր մշտական վիճակն է, ինչ որ տեսնում եմ:

Այս մի ավստսանքս ուրիշ էր, քանի որ ծախսից ավելի (այս երկրում ընդունված չէ իրար հյուրասիրել. նշանակություն չունի մաս, որ դիմացինդ կին է, դու՝ տղամարդ), զոջում էի անձնագրիությանս համար. 2 օր շաբունակ մատներս (աշխատանքային գործիքնե՛րս) խաշելով, ամառային բարակ գլխարկովս բռնած մեծ ասպակյա բաժակ տաք ‘Նեսկաֆե’ էի տարել հավաքույթի սրահ և շափարիս գրպանից հանելով ‘Վերնիսաժի’ փոքր կավե գավաթ՝ սուրճը կիսել իտալուհու հետ, այսինքն... ցուցադրել մեր կապն ու մեկընդմիշտ փակել ուրիշ աղջիկների հետ մտերմություն հաստատելու ճանապարհը, որոնցից մի քանիսն արտաքինով որ հաստատ գերազանցում էին իրեն:

Ինչ վերաբերում է ի՛ր պահվածքին, ասպա մեր ծանոթության առաջին իսկ րոպեներից՝ մերձքաղաքային գնացքից, որը մեզ մայրաքաղաքից հասցրեց Լրագրողների ստեղծագործական տուն (այն կրում էր ‘Միլվըր-քլաբ’ ցուցանակը), ուր տեղի էր ունենալու * - երեկից գեղարվեստական թարգմանիչների միջազգային կոնֆերանսը, որ իրենք կոչում էին Ճամբար, գովաբանում էր իմ հուճկոյը, որը հազվագյուտ մի բան էր համարում մեզ

հյուրընկալած երկրում, ամբողջ ցերեկն էլ, որ ազատ էինք (առավոտյան ժամը 11-ին արդեն յուրաքանչյուր 4-5 հոգիս մի տնակ ընտրել-պրծել էր, մինչդեռ օրվա ծրագրի միակ կետը ազդարարում էր, թե՛ 16.00-ին մեր ‘Ժամանումն’ է), անընդհատ շուրջը շուրջ էր: Այդպես շարունակվեց մինչև գիշեր՝ մինչև հարբեցողության վերջնագիծը, որին հասավ միայն երեք մարդ՝ ես, ինքն ու վիեննացի Չաբան՝ ծագումով *-ացի, որը ոչ միայն օձի լեզու էր թափում՝ անխտիր բոլոր աղջիկներին կապելու փորձեր անելով, այլև ուշ ժամին քաշով մեկ ոսկի արժեցող պլոնիոլ հոսեցնում նրանց բաժակները: Չաբան 50-ն անց էր, փորով, քթով ու երկար բեղերով, իտալացի աղջիկը (‘աղջիկ-աղջիկ՝ եմ ասում՝ արդեն 30 տարեկան էր) ճշտեց, որ նա 56-ի մեջ է, մինչդեռ ես 43 էլ չկայի / առանց փորի, ‘արվեստագետի՝ տիպ), առանց ամոթխածության նշույլի բարձրաձայն հաշվեց, որ 13 տարի ջահել եմ մյուսից, և ինչ-որ գիրք փնտրելու պատրվակով քարշ տվեց ինձ մեր բացօթյա սեղանին նայող ընթերցարանի տնակը, որտեղ դեռ նախքան լույսը հանգցնելը (վիեննացին կարող էր պատուհանից տեսնել՝ նրան հրաժեշտ չէինք տվել) արեցինք համարյա ամեն ինչ՝ զգուշանալով միայն հղիություն պատճառով վերջաբանից: Իր թվաբանությունից վիրավորվելու փոխարեն, մինչև առավոտ 8-ը ձգված մեր սիրատառության ընթացքում, երբ տեղանքն էլ փոխեցինք մի քանի անգամ, ես իմ հեքիներն միջոց գտա հակառակորդիս սևացնելու, թե սրանք (*-ացիները) կան 56 տարեկան են, կան 56 թվականի մոլագարներ, որը տգեղ քայլ էր իմ կողմից՝ 1956 թվին տեղի ունեցած իրենց ազգային խռովության մի երկրպագուն էլ ես էի եղել տարիներ ի վեր:

Բողբոքվածությունիցս ելնելով՝ ամեն հայ տղամարդ, դեռ նախքան իմանալն ինչն-ինչոց է, մտքի մեջ հիմար կամ, եթե ինքնապիտոթյունս չխնայեմ, ուղղակի ‘հարիֆ’ կհամարի ինձ՝ համոզված, որ ինքը երբեք չէր ընկնի նման վիճակի մեջ, այդպես դառը չէր խաբվի: Բայց կարիք կա՞ մարդուն դատել՝ առանց գործի էության մեջ խորանալու. մեր սիրավեպը հրապարակայնացնելու իտալուհու պատրաստակամությունն այնքան ակնառու էր, որ երկմտանքի ոչ մի տեղիք չէր տալիս (չնչին վարանում ցուցաբերեց թերևս միայն իմ կողմից մտերմության ամենաառաջին նշանները ոչ այնքան արտահայտելուց, որքան չթաքցնելուց անմիջապես հետո, այն էլ սա ավելի ուշ, հետահայաց քննության ժամանակ կատարված դիտարկում է, երբ արդեն գիտեի իր մինչճամբարյա անձնական կյանքի որոշ մանրամասներ):

Օրինակ, մեր հանդիպման հաջորդ գիշերը, 3-ի կողմերը, երբ արդեն երկուսս էլ օրորվում էինք հոգնածությունից, ինձ կանչեց իրենց տնակ, ուր 4 կին էր քնում 2 ննջարանում, բացեց հյուրասենյակի բազմոցը (ստացվեց մինիֆուտբոլի դաշտի չափ տեղ, ճիշտ է, չորությամբ էլ նրան չզիջող), որի վրա ես մեկնվեցի լոգանք ընդունելուց հետո: Ավելին, նա իմ գալուստը նախօրոք համաձայնեցրել էր միակ արթուն տնակակցի՝ վիեննուհի Իվոնի հետ, ինչն իմանալով՝ մազ էր մնացել, որ ասեի՝ իրեն էլ հրավիրի, քանի որ կինոդերասանուհու չափ սիրուն էր, թեև՝ լուրջ դերերի, միասեր, ասենք՝ Անուկ Էմեի տիպի կինոդերասանուհու: Միայն թե շուտով փառք տվեցի Աստծուն, որ զսպել էի ինձ, քանի որ Ֆրանչեսկան (էլ ինձ չեմ տանջի՝ իտալուհու անունը չտալու ցանկությունից պատմությունս շարադրելն ավելի ու ավելի բարդացնելով) լոգանքից հետո հայտնվեց մի շապիկով, որի կրծքին 5-տողանոց անգլերեն մակագրություն կար: Պնդեց, որ կարդամ: Ուր-որ է լույսը բացվելու էր. այս կողմերում ամառն ավելի վաղ է լուսանում, քան՝ մեզ մոտ, ընթերցանության տրամադրությունս գրոյի էր հավասար, եթե չասեմ, որ մի բան էլ սակավ էր, չհաշված որ անգլերեն էլ ընդամենը ամիսուկես էի սովորել մի քանի տարի առաջ, բայց հայտարարեց, թե իր հետագա ասելիքը բխում է այս մակագրության բովանդակությունից: Մտիպված կարդացի ամբողջը, որ պարզ, կարճ ու կտրուկ տեքստ դուրս եկավ, ինչը երևի անգլերենի մենաշնորհն է, և կոչ էր անում հրաժարվել սեքսից, ծխախոտից, նարկոտիկներից, խմիչքից... ‘Եթե որևէ այլ ցանկություն չունեք՝ (ավելի մանր տառերով վերջանում էր պատգամը):

Իտալուհին տեղեկացրեց, որ վերջին վերապահմանն ուշադրություն չդարձնեմ. իրենց տնակում մնալու պայմանն է, որ մեզ մարմնական վայելքներից հեռու պահենք, ինչին նա, որքան էլ որ կողքս պառկելով իր մաշկի վրա զգաց ցանկությունս, հետևեց ընդհուպ մինչև այն պահը, երբ աղջիկներից 2-ն արթնացան ու բարեկրթորեն մեզ բարի առավոտ մարթելով զնացին լոգարան, որից հետո ես էլ արանք գտա շուտ լվացվելու ու սանրվելու, որ դուրս գամ (միայն ակնոցս մոռացա լվացարանի ապակում):

‘Կուրվա՛ս ասիր-պրծա՞ր’, - արձագանքեցի ինքս ինձ՝ հիշելով, որ իտալուհին ոչ միայն անընդհատ հռչակում էր կատակներիս վրա, փարվում էր ինձ տեղի-անտեղի, միշտ փնտրում էր հայացքս ու բռնելիս ժպտում, այլև ինչ-որ ծրագրեր զարգացնում միասին Տրասիլվանիայի *-ական գյուղերում իր ծանոթներին այցելելու, ինչն աշնանը սովորաբար արել է մեծ ընկերախմբով, կամ համատեղ ֆիլմ նկարելու, որի մի հաջող փորձ՝ տարբեր երկրների արվեստագետների ներգրավմամբ ու մշակութային հիմնադրամների աջակցությամբ, արդեն ուներ, իմ օգնությամբ հայկական աղերսներ, նույնիսկ արյուն էր ենթադրում հայտնաբերել իր բազմալեզու պասյի գրավոր ժառանգության մեջ, 2 վեպերիս բովանդակությունը մանրամասն պատմել տալուց հետո, խնդրում էր դրանք նվիրել, որ հայ ընկերուհին կարդա ու թարգմանի իր համար, իսկ գրականության մասին խորհրդածումներս չզլանալ իր հետ քննարկելուց, որովհետև աշոյիսով ուղեհիշներ եմ մատուցում իր սեփական տեսակետների ձևավորման համար:

(Այս պատմությունը գրում եմ Անանուրին աղջկաս նվիրած դեղին ծոցարեպրում, որն այս պահին թերթելիս աչքիս ընկավ մի նշում, որն ինչ կորեց իրալուսու սարքած խառնաշփոթից ու միտքս զցեց վերջին տարիներին գործած մեղքերս, որոնց պատճառով նույնիսկ չէի ուզում Հայաստան վերադառնալ: Բայց վերհուշներիս մեջ կար նաև իմ շիասկացվածության-չգնահատվածության սրբնեղությունը, որը մեծ ջերմեռանդությամբ փարսարում էր այս օրսարուսին՝ ասիտասնք հայրներով, որ գրվածքներս հասանելի չեն եվրոպական ընթերցողին մեր եզակի այբուբենի թերմամբ, որը տեսնելով՝ քոլորը ճամբարում հիանում էին և անմիջապես էլ հարցնում, թե այնուամենայնիվ աջից չսա՞ր, թե՞ չսախից աջ ենք գրում հայոց խորհրդավոր լեզվով):

Երախտագիտությունը որոշակի դեր էր խաղում, որ ուշադրության իր ցույցերին ես համարժեք կրքոտությամբ պատասխանեի, որովհետև անձնական վերջին ցնցումներիցս դեռ այնքան ուշքի չէի եկել, որպեսզի հոգեբանորեն պատրաստ լինեի նոր ճանաչած որևէ կնոջ իսկույն որպես պաշտոնական ընկերուհի ընդունել, մանավանդ որ արտաքինն այնպիսին չէր, որ սեր հարուցեր առաջին հայացքից. հասակը միջինից ցածր էր, միջինից գեր էր, ձայնը՝ կոկորդային ու խոսքու, իսկ շարժումները, որի կանացի շլինելը միգուցե կարելի էր արդարացնել իտալական տեմպերամենտով, ինձ սևեռուն կերպով ինչ-որ մեկին էր հիշեցնում: (Բարեբախտաբար տեղը բերեցի, թե՛ ում, հակառակ դեպքում, գիտեք, քուն ու դադար չունես, մինչև չհիշես տվյալ անձին, եթե իհարկե նմանությունը կենդանու կամ առարկայի հետ չէ: Ինձ իրավունք չվերապահելով հանդերձ քամահրել այն մարդկանց սպասումները, ում հետաքրքրել է նմանության եզրը, մանավանդ որ հայաստանցիներից շատերին ծանոթ մարդու մասին է խոսքը՝ այս անկարևոր առիթով նրա անունը չեմ բացահայտի, պարզապես կասեմ, որ լրիվ սպիտակահեր է՝ չնայած միջին տարիքի է, չնայած սպիտակահերությանը՝ թեթևամիտ է, որոշ ժամանակ բարձր պաշտոն է վարել, որի ընթացքում ծեծկռտուք է սարքել մի երկու անգամ, իսկ նույնիսկ ամենասովորական իրավիճակում այնքան աշխույժ է ու շարժուն, որ մտածում էի, թե հոգեբանության դասագրքերում սանգվիլիկի տիպը նկարագրելիս հենց սա է ծառայել որպես նախանմուշ):

Ճիշտ է, Ֆրանչեսկայի կուրծքը լավն էր՝ լիովին կանացի, փոքր-ինչ արծվաքիթ դեմքը ևս հմայքից զուրկ չէր, իսկ գանգուր, խարտյաշ մազերն ու կլոր աչքերի ուղիղ հայացքը համապատասխանում էին անմիջական բնավորությանը: Չնայած, երբ շարունակելով երկուսիս մեջ նոր առնչություններ փնտրել՝ իտալուհին ընդհուպ մոտեցել էր մեր ազգանունների համահունչությանը՝ Կարապետյան-Կարաբինների, Էվանսը՝ Ճամբարի անգլիացին, չհապաղեց սառը ջուր լցնել ինքնառեռ հրապուրանքիս վրա, թե արտաքինով էլ եք նման, մանավանդ՝ եթե Ֆրանչեսկան մորուք պահի, և իրար բավական նման եք բրթջում, թեև Ֆրանչեսկան որ մի քիչ մեղմ ծիծաղեր,

չէր խանգարի, կին է, չէ՞, վերջապես... ինչ խոսք, մեղմացուցիչ հանգամանք էլ կա, ախր... իտալուհի է: Մինչ իմ աչքերը բացվելուն մնացել էին հաշված ժամեր. **Ֆրանչեսկա.** - Բոլոր իտալուհիները չէ, որ ինձ նման են: **Ես.** - Այ ըտենց կըլնի իսկական հայրենասիրությունը - արտահայտություններով հակահարված տվեցինք տղայի ցինիզմին (ավելի ուշ պարզվեց, որ բարձրահասակ, կարմրաթուշ, մի տեսակ կլոր ուսերով էվանսը 29 տարեկան է):

Ով կհավատա, թող հավատա, ով չի հավատա՝ իր գործն է. այս վերջին տողերն էի գրում, երբ նկատեցի Ֆրանչեսկային, որն ինձանից մի 40-50 մ հեռու, ծառերի ստվերի տակ իր մեծ էջերով նոթատետրում նույնպես ինչ-որ բան էր գրում կենտրոնացած: Պարզաբանեմ, որ նախ կարդալու, հետո գրառումներ կատարելու համար արդեն 2 օր էր, ինչ մինչճաշա 1 (12.00-1.00) և ետճաշա 2 ժամը մեկուսանում էի պանսիոնի դիմացի լճակի ավին, որը ոմանք (ինչ մեղքս թաքցնեմ՝ ես) ճահիճ էին կոչում պղտոր-կանաչ գույնի պատճառով, ձկնորսների համար նախատեսված տախտակամածներից մեկի վրա, որը հենասյուների շնորհիվ ջրից կես մետրի չափ բարձր էր, և հանում շապիկս, որպեսզի միաժամանակ արևառվեմ (ճամբարականների մեծամասնությունը հանգիստը գրական աշխատանքի հետ չէր խառնում և գերադասում էր հասարակությունը մեղմությունից, խորը լողավազանը, իր բոլոր կից հարմարություններով հանդերձ՝ անտառամեջ լճակից):

Ինձ հունից հանած մոճավանջը ճամբարի 3-րդ գիշերն էր պատահել, և այժմ, գրելով ավելի արագ, քան երբևէ՝ կյանքումս, որպեսզի հասնեմ բուն իրադարձություններին ու այդ կերպ սիրտս թեթևացնեմ, տհաճություն զգացի, որ Ֆրանչեսկան ներխուժել է իմ թաքստոցը: Վստահ էի, որ շարադրում է տեղի ունեցածի իր տարբերակը, որն ինձ բանավոր ներկայացնելու փորձը կասեցրի նախաճաշի մատույցներում (ինչին նա կարծես թե պատրաստ էր): Գուշակում էի, որ դեռ առավոտյան էր նույն այդ երկի վրա աշխատում, և ոչ թե՝ ‘90-ական թթ.-երի * -ական պոեզիան՝ զեկուցումը սղագրում, որը կարդում էր 2 մետրանոց, մորուքավոր, հին ժամանակների ծովահենների բոլոր տվյալներով հաղթանդամ մի երիտասարդ, որին նախորդ երեկոյան հեռվից մեր հավաքի կազմակերպիչների հետ տեսնելով՝ ենթադրել էի, որ տեղական դրամաշրջանների ներկայացուցիչն է, և լուրջ մտահոգվեցի եվրոպական շուկայում աշխատուժի կիրառության ողջամտության հանդեպ, երբ պարզվեց, որ գրականագետ է, որը բանախոսելիս թեմային վայել քնքուշ ձայն, իսկ հակափաստարկներիս պատասխանելիս՝ խոնարհություն ի հայտ բերեց:

Եթե Ֆրանչեսկան գրածն առավոտյան քննարկումից հետո ինձ հանձներ, աղբի զամբյուղն էի զցելու բոլորի աչքի առաջ, նախօրոք հարցնելով՝ կարո՞ղ եմ նամակն իմ սեփականությունը համարել... Հիմա, երբ ավից ձայն տվեց (ինչքան էլ որ իրեն տեսել էի, վեր թռա տեղիցս՝ հանկարծակիի գալով), և, առաջ չգալով (տախտակամածի ու ցամաքի կամրջակը փտած էր, մի աստիճանն էլ՝ պակաս. երևի վախեցավ, որ իր քաշին չի դիմանա), իմ կողմը մեկնեց երկու թուղթ, ես մոտեցա դրանք վերցնելու, բայց չհարցրի, թե կարո՞ղ եմ նամակն արդեն իմը համարել, որ գցեի լճակը. նրա ջուրը պղտոր էր, բայց մակերեսին աղբ չկար՝ անհարմար էր կեղտոտել: Չնայեցի իտալուհու երեսին, ինքն էլ ոտքը կախ չզցեց՝ գնաց, և ես որոշեցի, որ պարզապես նամակը չեմ կարդա, ու դա կլինի իր ամենամեծ պատիժը... Կամ էլ՝ չեմ կարդա, մինչև առավազն չնկարագրեմ նախորդ օրվա դեպքերը, որպեսզի վրաս որևէ կերպ չագրի: *(Կներեք՝ շեղվեմ՝ առաջին անգամ կյանքումս ջրային օջտեսա, այսինքն՝ ավի քարերի մեջ էր, գուցե ցամաքային էր, բայց մի նյարդային գորտ թովոսց քիչ հեռու, ու երբ հայացքս հեղ շրջեցի, օջտ չքվել էր՝ հասցրի նկարել միայն, որ մեծ չէր ու սև-սպիտակ էր):*

Որպեսզի շուտ հասնեմ բուն գիշերային սարսափներին, նախորդ օրվա անցուդարձը պատմում է երեկոյից, երբ ես ու Ֆրանչեսկան մի կարճ ժամանակով իրար կորցրինք: * -ացի գրողի հետ ժամը 20-ի հանդիպման ավարտից հետո մի քանի հոգով զնացինք մի բան խմելու մեր հանգստյան տան դարպասից քսան քայլ հեռու գտնվող ճամփեզրի խղճուկ բուֆետում, որը ժամը 23-ին ‘ընդմիջտ’ փակվում էր, իսկ վերադարձին ես մտա ընթերցարան պարզելու, թե արդյո՞ք մեծ է Ինտերնետի հերթը: Ճամբարի միայն 3-րդ օրը, այսինքն՝ երեկ էին 5 հաստ կոմպ բերել-տեղադրել ընթերցասրահում, որոնցից մեկն էր միացած Ինտերնետին, ինչը շատ քիչ էր 25 մասնակցի ու խիտ աշխատակարգի պայմաններում (ես գրողի ասմունքի պահին հանդիպեցի ընթերցասրահ, բայց այն կողպեքով փակ էր, լույսն էլ մարած՝ հավանաբար որպեսզի ոչ ոք ‘պարապմունքից’ չփախչեր): Ռուս Սաշան՝

50-ն անց, ակնոցավոր, երևի շոտլանդական մորուքի շնորհիվ բևեռախույզ հիշեցնող մի մարդ, խոստացավ ու այնքան արագ վեր կացավ ինտերնետավոր համակարգչի առջևից, որ չհասցնելով բաժակակիցներին, այդ թվում և՛ Ֆրանչեսկային, ոչինչ զգուշացնել, զբաղեցրի նրա տեղը: Ուրախ-ուրախ հավաքեցի www.freenet.am-ը և բացեցի փոստարկը: Նախ տղայիս նամակը կարդացի, որին, չհամալով, թե հետաքրքրական ինչ կարող եմ պատմել, պատասխանեցի, որ հերթ կա թիկունքումս՝ հնարավորություն չունեն մանրամասն գրելու, բայց ճամբարից 1-2 բան նկարագրեցի, և ի վերջո իմն էլ արդեն կարգին նամակ կստացվեր, երբ, կարծես ինձ սուտ դուրս չբերելու համար, Ֆրանչեսկայենց տնակի բուլղարուհին մատեց շնչիս, թե՛ նամակս պատրաստ է, սկավառակի վրա է, մի վայրկյան կբաշի՝ ուղարկեմ: Ձիջեցի տեղս, բայց նա 15 րոպե չհաջողեց իր բուլղարական հասցեստուովին միանալ: Ներողություն խնդրեց-վեր կացավ, միայն թե այդ մարդաչափական էվանսն անմիջապես ինձ դիմեց, որ թույլ տամ մի րոպեով կապը միացնել իր ‘նոթբուքին’, պատասխանեցի, որ արդեն գիտեմ, թե * - իսկյուն ինչքան է տևում 1 րոպեն՝ կես ժամ... Թեև որ խնդրում է, չեմ մերժի, ջհանդամը: Ինքն էլ հերստեց, թե ուզածը մի բան չէր, այնուհանդերձ փորձեց միանալ՝ գիծը զբաղված էր, 1-2 րոպեից ասաց՝ վերջ, էլ իրեն պետք չի, ես մի բերան առաջարկեցի նորից փորձել, բայց ինքս զուգահեռաբար կապս վերականգնեցի՝ հիշելով, որ նամակներին մեջ նկատել էի Կենտրոնական Եվրոպայի Համալսարանի հետադարձ հասցեն, որը պետք է զբաղվեր * - իսկյուն կացության բույլավորությունը երկարացնելու գործով, քանի որ ժամկետն օրեր առաջ լրացել էր, ես օրինազանցի կարգավիճակում էի, և բանը կարող էր ավարտվել կամ նրանով, որ ինձ վտարեին երկրից, կամ, առնվազն, անցանկալի անձանց թվին դասեին՝ սահմանի անցնելուց ժամկետանց կնիքը նկատելով: Նամակի 3 file-ից ոչ մեկն ինձ հետաքրքրող թեմային չէր վերաբերում, Սորոսի հիմնադրած այս համալսարանի նոր դրամաշնորհների հայտարարություններ էին: Դրանց քիչումիչ ծանոթացա, 2 ուրիշ նամակի պատասխանեցի, որոնցից մեկի կապակցությամբ ուղեղիս միջից պետք է պեղեի ֆրանսերենը. նախորդ տարի Ռոն-Ալպերում ծանոթացածս աղջիկը՝ Նինա Պեյզանն էր հանձնել բակալավրի քննությունները՝ սիրտս քար չէր, որ շնորհավորեի:

Գլխավերևս արդեն բազմաթիվ ճամբարականներ էին կուտակվել, նրանց նոթոսած տեսքերից մյուս նամակներս չբացեցի և զնացի տեսնելու, թե որտեղ եմ բուֆետի մեր ընկերախմբի անդամները շարունակում զվարճությունը:

Արդեն ավանդական դարձող տեղերից մեկում՝ Ֆրանչեսկայենց տնակի առջևի սպիտակ, կլոր, ձևավոր ոտքերով, փոքր, բայց ծանր մետաղե սեղանի շուրջը նա չկար: Լողավազանի մոտ հավաքվածների մեջ էլ չէրևաց: (*Այս րոդերը տանջանքով եմ գրում, քանի որ մարմնիս նույն մասերն արևով չվառելու համար, գնում-գալիս եմ տախտակահանածի վրա, որը երեքում է ուրբերիս տակ. ով որ կուզենա ավելի լավ պատկերացնել վիճակս, թող հիշի՝ ‘Անհաջողակները’ ֆիլմի վերջին կադրերը՝ Պիեռ Ռիշարի հերոսի ու միլիարդատիրոջ չախորդ աղջկա մասնակցությամբ, որոնց տակ տախտակահանածը «ծալվեց» ջրի վրա ու լողաց դեպի լճի կենտրոն: «Իմ» տախտակահանածի տակի հարյուրավոր ջրասարդերը, - մինչև այժմ մեն-մի հարիկ էի րեսել անցյալ տարի Հանքավանում, մի զույգ մեծ կոշիկի չափի չորացող ջրափոսի մակերեսին աղղայիս, - թվում է ամմիր դեստրենն են ներսվում, բայց ավելի ուշադիր նայելով՝ կնկարես, որ շարժվում են քսանուն հակառակ, որպեսզի արևի տակ չքշվեն):*

Զգիտեմ միգելու, թե շորերս փոխելու համար մտա մեր տնակ, ձայներ էին հասնում միջանցք բացօթյա մեծ պատշգամբից, որի լույսը վառը չէր, կարծես աղմուկ անելով նախ զուգարան մտա, հետո դուրս եկա պատշգամբ, որ մեր հյուրին (ձայներից մեկը կանացի էր) բարևեմ, տեսնեմ Ֆրանչեսկան ու վիենացի 56-ամյա Չաբան համարյա ծունկ-ծնկի մթան մեջ փափսում են: Այնհայտորեն շփոթվեցին, Ֆրանչեսկան թե՛ խոսակցության հետաքրքիր թեմա են գտել, ես չհավատացի. Չաբան կին գայթակղեցնելուց բացի ուրիշ նյութի վրա չէր չարչարվի (հետագայում տեսա, որ մեկ էլ ղեկավարությանն է հաճոյանում, որն արտահայտվում էր դամ պահելով կամ խոնարհ ու հարգալիք ուշադրությամբ, քանի որ ճամբարի կազմակերպիչներն իրենք քծնանքը, նույնիսկ իրենց շուրջ կատակները չէին խրախուսում, թվում է՝ մյուսներից որևէ բանով չառանձնանալու համար): Ինձ հրավիրեցին մրգօղի խմելու, քաղաքավարությունից դրդված համաձայնեցի, բայց սառնարանը բացելով մոլորվեցի՝ հանքային ջրի մի քանի մեծ շիշ կար, որոնցից մեկում պետք է տնական օղին լիներ, մինչդեռ բոլորն

էլ փակ էին թվում: Նվաստացուցիչ թվաց մեկ առ մեկ ստուգել կափարիչները, այդ պատճառով նախօրոք վերցրած օրո ընպանակի մեջ մի բացած շից կարմիր գինի ցրի, հետ գնացի պատշգամբ, բայց նոր էի նստել՝ ինձ օտարտոնի զգալով, երբ մարզասենյակից, որ ուղիղ մեր պատշգամբի տակ էր, պինգ-պոնգի զնդակի կտկտոց առա, որը բարենկրթության պաշարների վրա բացասաբար ազդեց. ասացի, որ գնում եմ խաղալու: Ֆրանչեսկան ասաց, խնամ՛ է, չի կարողանա խաղալ, ես իջա, սկսեցի խաղալ Հելենի հետ՝ կանադոսի, որը լավ չէր խաղում, նաև բոլորից վատ էր խոսում * -երեն, և ես միայն այն բանի համար էի շփվում հետը, որ մենակ չզգա իրեն՝ ինձ թույլ չտալով ձանձրանալ այն բանից, որ հաճախ իրար չէինք հասկանում: Քիչումիչ կատակ արեցինք, ընպանակիս գինին վերջացավ, ինքը շից ‘Հոլսթեն’ էր խմում, առաջարկեց, հրաժարվեցի խառնելուց, բայց կամքի դրսևորմամբ չկարողացա ներքուստ հպարտանալ, որովհետև ուշքս ուրիշ կողմ էր:

Համոզված էի, որ վիենացին իր մրգօղին աննպատակ վատնողը չի, բայց եթե 2-ի մեջ ոչ մի բան չէր էլ եղել, միևնույն է, ինձ համար այնքան զգվելի էր Չաբայի ու Ֆրանչեսկայի շփումը, որ ի վիճակի չէի ընկճվածությունս հաղթահարել: Երևի թե՛ վատահ, որ ես այդպես էլ մտածելու էի, շատ չանցած Ֆրանչեսկան եկավ, և կարծես ինձ օրինակ ծառայելու համար, որ անտեղի չխանդեմ, սկսեց քծնել ու հաճոյախոսել խեղճ կանադոսին՝ կանացի բարենասնությունների առումով Տիրոջից անտեսված, բայց՝ ջերմ ընկեր, որն իրենից մի տարի էր փոքր՝ 29 տարեկան, իմ ամեն խոսքից էլ հռչում էր, իբր անբռնագրոս՝ փաթաթվում: Հետո, իբր թե Հելենին է դիմում, ասաց, որ ինքը կուզենար ճամբարի բոլոր մասնակիցներին ճանաչել, որի լավագույն ձևը 2-ով շփվելն է: Բարձրացանք մեր պատշգամբը, Չաբան այնտեղ չէր, Ֆրանչեսկան սիրտս առնելու համար, բայց երևում էր, որ ուրիշի ապրանքն օգտագործելուն ներքուստ դիմադրելով՝ գնաց մեր ընդհանուր սառնարանից բերեց Չաբայի մրգօղին, խմեցինք, եկող-գնացողին էլ հյուրասիրեցինք, Հելենը բերեց մեզ ընծա յագրեց իր լազերային ձայնակավառակը, որտեղ բանաստեղծություններն էր կատարում ոռք երաժշտության տակ, խնդրեցի մեզ համար կարդալ, արեց: *(Բսկ այս տողերը գրելիս նորից տեսա օջին, նկատեցի էլ, թե ինչպես քաքնվեց, մտորկից երևաց, որ սև-սպիտակ չէր՝ մոխրագույն էր, եթե նույն օջն էր, իհարկե: Բրիկնադես, արև, բայց՝ զով. միանգամից 10-12 բաղ իջան ջրի վրա հակառակ սափի մոտ, կանոնավոր դասավորությամբ սրընթաց լողացին դեպի կենտրոն, հեյրո դանդաղեցին ու ցրվեցին):*

Կեսգիշերն անց էր արդեն, 7-8 հոգի էինք սեղանի շուրջը, ինչ-որ մեկը ռեստորանից այստեղ էր քարշ տվել ՋԲԱՂՎԱԾ Է ցուցանակը, ես ահագին տանջանքով (ստվարաթղթից էր), թաքուն, որ նախօրոք հարցուփորձ չանեն ու տպավորությունը չփչանա, այն փակցրի վերնաշապիկիս ձախ կողմի գրպանին, սրտիս մոտ: Շատ կատակներ արեցին՝ զբաղված սրտիս՝ թեմայով, բուրբերներից մեկը ջանում էր անեկրոտ պատմել, որ ուշադրություն գրավի, իտալուհին, որ ինչ էլ ասում էր, մի տեսակ վիրավորվածության երանգով էր ասում, վեր կացավ, թե գնամ միզելու, ես էլ՝ տանտեր-տանտեր (4-ից մեկը, որ զբաղեցնում էր այս մեծ, ի տարբերություն մյուսների՝ երկհարկանի տնակը) հարցրի, թե արդյոք տեղը գիտի՞: Մի քիչ ճոճվում էր՝ խնդրեց ուղեկցել, հետը տարավ լոգարան, պաչաչվեցինք... Վատ էր զգում իրեն: Սփրթնել էր: Լոգարանից դուրս եկանք միջանցք: Ուզում էի ասել, որ սառը ջրով լվացվի, բայց վախեցա՝ առաջարկս անընթաց կատ լինի, մերժումը դժվարանա պատճառաբանել, բայց չուզեմ օտար տեղում դեմքի շպարը լվալ: Իհարկե, վախս բավականին տարօրինակ էր, որովհետև քսված չէր:

Հարցրեցի, թե սի՞րուն է վատ, չարձագանքեց, մի անգամ վայր էր սահում, հագիվ պահեցի: Չևր ցույց տալով՝ ասացի, որ կրծքին սառը ջուր քսի, այդ ժամանակ ուշադրությունս գրավեց, որ սև վերնաշապիկի կոճակներն արձակ են և տակից կրծկալ չի հագել: Դա վատ ազդեց վրաս. անմիջապես կասկածեցի, որ Չաբայի հետ էլ մութ պատշգամբում արել է ամեն ինչ, որ այդ տեղում հնարավոր էր, թեև քիչ անց ինձ հաշիվ տվեցի, որ եթե սեղանի շուրջ նստած ժամանակ կոճակներն արձակ լինեին, աչքիս անպայման կընկներ: Բայց այդ վայրկյանին շատ տհաճ զգացողություններ ունեցա, չհաշված, որ հարբած մարդն ինքը վանող է (ինքս ինձ մխիթարում եմ նրանով, որ չնայած շատ եմ խմում, բայց, ըստ ընդհանուր կարծիքի, չեմ հարբում):

Միայն թե բոլոր այդ դատողություններից ավելի կարևորն իրեն օգնելն էր, նորից մտանք լոգարան, երևաց, որ սիրտը խառնում է, կռացավ լվացարանի վրա, ենթադրում էի, որ իրեն կհավաքի ու շուռ կզա գուզարանի կոնքը

գրկելու, ինչպես որ արևմտյան ֆիլմերի հերոսներն են անում՝ անկախ սեռից ու տարիքից, բայց բոլորովին այդ կողմը չնայեց, երբեմն-երբեմն որձկում էր, ես էլ կամաց շոյում էի մեջքը, չհամարձակվելով արորել, քանի որ վստահ չէի՝ այդ միջոցն իտալացիների օրգանիզմի վրա փսխեցնելու նույն ներգործությունն ունի^օ, ինչ՝ հայերիս, թե^օ ոչ:

Լոգարանից դուրս եկանք, մտանք հյուրասենյակ, համոզեցի, որ մատի բազկաթոռին, ներողություն էր խնդրում, պատասխանում էի՝ ոչինչ, բան չկա: Նստեցրի, մի համբույր խնդրեց ինձնից, որը ստացավ:

Հանգցրի լույսը, դուրս եկա պատշգամբ, մեր օրվա հյուր գրողը, որ չէր վերադարձել մայրաքաղաք ու մեր տնակում էր գիշերելու, խմիչքից լալոշացած՝ խոշոր ակնոցի ետևից աչքերը չռել էր Ֆրանչեսկայենց տնակի սևուլիկ բուլդարուհու վրա (որևէ կողմ նայելու համար էլ ողջ իրանն էր շրջում՝ հարկ եղածից շատ ավելի), որի ձեռքն ուզում էր անպայման բռնել: Աղջիկը չէր թողնում ու նայում էր կլորացած աչքերով: Դեռ կարգին չէի հարմարվել սեղանի մոտ, Ֆրանչեսկան եկավ հևալով, դեմքը կարմիր էր, մատեց ու ասաց, որ կյանքում երրորդ անգամ է իր հետ պատահում, որ հարբի, գրողն անմիջապես շուտ եկավ նրա կողմն ու նախատեց, թե չի կարելի: Ֆրանչեսկան նրա դեռ չիրապարակված վեպից մի հատված էր թարգմանել իտալերեն, իրար ճանաչում էին, զարմանալի չէր, որ գրողն այդպես անմիջականորեն խոսեց, զարմանալին այդ պահի բոլորովին սքափ ձայնն էր ու խստությունը, որով մի ակնթարթ առաջ ճիշտ էր հենց իրեն դիմել: Այսուհանդերձ, նրա դիտողությունն ինձ դուր եկավ, մենք երկուսս նույնպես իրար հետ ծանոթ էինք՝ նա ինքը հիշեցրեց. ես ամեն մի այցելությանս այնքան նոր գրողների հետ էի ծանոթանում * -իայում, որ ոմանց մոռանում էի: Որոշեցի ցույց տալ, որ անցած ժամանակամիջոցում (6-ից 14 տարի՝ նայած թե որ մի գալուցս էինք հանդիպել) ես էլ իմ հայրենիքում եմ առաջընթաց ունեցել, գնացի կողքի սենյակ, որ գրքերս բերեմ - ցույց տամ, բայց երբ վերադարձա, նա միայն մի թուցիկ հայացք գցեց իմ կողմը՝ նորից լալոշացել էր դեպի բուլդարուհին: Արդյունքում վերջինս արագ քեց սեղանը, գրողը նորից ճշտեց իր քնելու տեղը, որ 2-րդ հարկի՝ իմ ու Սաշայի ննջարանում էր, և գնաց:

Որոշ միջոց հետո իտալուհին նորից վատ զգաց, առաջարկեցի ուղեկցել իրենց տնակ, խնդրեց թույլ տալ մնալ մեզ մոտ: Եթե ուրիշ բան չլիներ՝ նախորդ գիշերվա իր խիզախությամբ ինձ պարտավորեցրել էր՝ բարձրացրի վերև, շորերով պառկեցրի անկողնուս: Մխիթարելու համար մի քիչ շոյեցի: Գրողը գորտի պես տձև փորի վրա պառկած քնած էր: Իջա պատշգամբ, Հելենը նորից իր գործերից կարդաց, ես էլ իր հուշելով CD-ի տուփի մեջ գտնվող տեքստերով հետևում էի, որն օգնում էր իմ քիչ անզլերենով ու անփորձ ականջներով հասկանալ իր կանադական արտասանությունը: Բանաստեղծությունները ծովի, տարերքի, բայց գլխավորապես ազատության մասին էին, ինչքան կարողացա որոշել:

Չաբան էլ էր միացել մեզ, ինձ հարցրեց, թե ինչ է պատահել Ֆրանչեսկային, չկարողանալով մեղադրական շեշտից զերծ մնալ, ասացի, որ շատ վատ է, մրգօդուց հարբել է: Չքմեղացավ, թե դա ծրագրված չի եղել, ես էլ չշարունակեցի, թե՛ բա ի՞նչն էր ծրագրված, միայն երբ Հելենի համար գովաբանում էր Վիենայում կայանալիք գրական ինչ-որ հավաք, կծեցի, թե դրանց բոլորին միայն կանա՞ք կարող են մասնակցել, բացի, իհարկե, իրենից՝ Չաբայից: Հեզմեց, թե խոսքն ա ն գ լ ի ա գ ի ը գրողների միջազգային հանդիպմանն է վերաբերում, ինչպիսին որ ես չեմ ըստ ամենայնի:

Երկրորդ հարկից գուգարան իջնելուց հետո մի պահ մեզ մոտեցավ գրողը՝ մի ներքնավարտիքով, սքափ էր, մի քանի բառ հետներս փոխանակելուց հետո, թե՛ գնամ: Մի քանիսը, իրենք էլ թարմանալու հույսով, թե՛ ինչի՞ ես գնում, մնա՛, թե՛ վերևում Ֆրանչեսկան մենակ է: Ասի՝ զգու՛շ. որովհետև ի՛մ մահճակալին է պառկած: Առանց ինձ պատասխանելու բարձրացավ, ես սառնասրտություն ցուցաբերեցի՝ անմիջապես չհետևելով նրան, քանի որ, կարծում էի, իր նոր ընկերոջ, այսինքն՝ իմ, ֆիզիկական ներկայությամբ չէ, որ եվրոպացի կինը պետք է պահեր իրեն հարկ եղածին պես, բայց և զգում էի, որ բոլորն աչքի պոչով նայում էին, թե ինչքան կոփմանամ:

(Վերջին պարբերությունը գրելու համար օգտագործեցի հերթական հանդիպման սկզբի չօգտունը. ճանապարհին խցանման մեջ ընկնելու պատճառով ուշանում էր ակադեմիկոսը, որը պետք է վարեր կլոր սեղանը՝ վերջին տարիների ամենահռչակավոր -ական վեպի 7 թարգմանիչների մասնակցությամբ: Մորեցավ, ինչ լուսանկարեց*

Ֆրանչեսկան, հարցրեց, թե ի՞նչ էն սևնում. վե՞ր էն գրում, ‘ասենք-թե’-ի տիպի մի բան ծամծամեցի, նարեց կողքիս, Հելենը եկավ մյուս կողմս նարեց, էս Ֆրանչեսկան իբր բարեսրբությունից ինդրվելով սկսեց կանադոտի ու սիսյուներն ուղղել, ինչը միշտ կարելի էր անել, որովհետև Հելենն այսպես էր խոսում -երեն՝ ‘Գու Երևանու՞մ է սպրում’, հետո անցավ տեղում քերականական ամբողջ կանոններ սովորեցնելուն):*

Տեսա, որ երկար չեմ կարողանա անվրդով եվրոպացի խաղալ, ասացի՝ բոլորիդ բարի գիշեր, գնում եմ քնելու: Հատուկ չէի աղմկում բարձրանալիս, բայց ասել, որ աշխատում էի անշունկ քայլել, բոլորովին ճիշտ չէր լինի, մանավանդ որ աստիճաններից մի քանիսն անաստված ճռնչում էին: Ննջարանի դռնն էլ սովորականի պես բացեցի, ինչին արդեն ներսում ուժեղ շարժում հետևեց: Լուսնի լույսի տակ նշմարեցի, որ գրողը իմ մահճակալին է, այդ պահին եզրին էր նստած, ներքնավարտիքով, Ֆրանչեսկան շորերով պառկած էր: Հոտ էր գալիս սենյակից, ուժեղ հոտ: Սերմնահեղուկի: Չզվելի էր, գարշելի, նման չէր, չէ՝ ոչ մի համեմատություն իմ սերմնահեղուկի հոտի հետ: Գրողը հասչտապ վեր կացավ, տեղափոխվեց իր մահճակալին: ‘Չէ, շտապելու կարիք չկա,- ասացի ես ու մտածեցի՝ սրանք ով գիտի իրար հետ ինչ կապ են ունեցել մինչև հիմա,- 3-ով էլ վատ չի լինի’: Գրողի ծպտունը դուրս չեկավ, ես շորերով պառկեցի մահճակալիս, այնպես որ Ֆրանչեսկային չկայչեմ (մահճակալի լայնությունը թույլ տալիս էր), անշարժ, միայն գլուխս մի քիչ դեպի հակառակ կողմ թեքեցի, որ հանգիստ ինքս ինձ հանձնեմ զզվանքին, որով համակված էի ոտքից գլուխ: Իտալուհին հևում էր, ինձ թվաց շավարի կոճակներն արձակված են, բայց առանց իր կողմը շրջվելու չէի կարող ստույգ ասել: Սկսեց կամաց շոյել ինձ, բայց վայրկյաններ անց, թեև իրեն էլ իմ դեմքի արտահայտությունը չէր երևա, վեր կացավ ու գնաց:

«Կարծում եմ, որ շատ վատ վարվեցիր ինձ հետ. այսպես պատժել ինձ, նախքան որևէ հնարավորություն ընձեռելը որևէ բառ արտաբերելու որպես արդարացում՝ չափազանց անարգ, մանկամիտ ու բռնադատիչ գործելաճ է:

Կարող եմ քեզ հասկանալ, հնարավոր է, որ համանման վիճակում ես էլ նույն կերպ արձագանքեի, բայց մշտապես պետք է կարողանալ որոշ ժամանակ անց ամեն ինչ գետեղել իր համապատասխան արժեքի շրջանակում: Այդ է պահանջում հավասարակշիռ կյանքը և բարձր մարդկային հոգեկան մակարդակի վարքը:

Խիստ մաքուր է խիղճս, և երեկ ՏԵՂԻ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ ՈՉԻՆՉ, այնպես հասկանալով եղածը, որ անակնկալորեն հարբեցի (մի ընպանակ ‘Ունիկումից’ և երկու մրգողու՛ց), ինչը որ չափազանց հազվադեպ իրադարձություն է ինքնին, և դու շատ սիրալիր կերպով ինձ քնելու պառկեցրիր քո անկողնում: Բավական վատ էի զգում ինձ, և այդ տխմար գրողը եկավ ինձ մոտ, որ հարցնի, թե ինչպե՞ս եմ և արդյոք ջուր չեմ ուզու՞մ:

Ես այնտեղ անգոր կերպով պառկած էի մահճակալին, և նա իր սեփական որոշման համաձայն բռնեց ձեռքս և ասաց, որ չմտահոգվեմ, շուտով ուշքի կգամ: Մա է եղել ամբողջը: Ես ի՞նչ կարող էի անել:

Հավանաբար պետք էր ասել կոպտորեն՝ հե՛տ գնա անկողինդ և մի՛ մոտեցիր ինձ: Խիստ անհաճո էր ինձ համար էլ. բայց ի վիճակի չեղա այդ բանն անել:

Հնարավորություն չտվեցիր, որ բառ իսկ ասեի: Հուսով եմ, որ կխորհես այս բոլորի մասին և կըմբռնես էականը, չես դատապարտի ինձ, նախքան առհասարակ իմ կողմից որևէ վատ բան կատարելը:

Շատ եմ ափսոսում, որովհետև աներևակայելի խորը զգացմունք էի տածում քո հանդեպ, այնպիսին, որ չգիտեմ նույնիսկ, թե քանի տարի չէի ունեցել: Այսքան կարճ ժամանակամիջոցում (միայն մի քանի օր է, որ ճանաչում ենք իրար) այսպիսի լուրջ զգացմունքը մի բացառիկորեն եզակի ապրում էր ինձ համար...

Իտալուիու ձեռագիրը պարզ էր, թերևս նույնիսկ պարզեցրած, որպեսզի ես ամեն ինչ հասկանայի: Հիմնական իմաստն ինձ մատչելի էր առաջին իսկ ընթերցումից, բայց երբ որոշեցի նամակը ճշգրտորեն թարգմանել, մի քանի տեղում տառերի միացությունները խնդիր դարձան: Ջղայնացա, որ չնչին պատճառով պարապուրդի եմ մատնվում, երբ որ մինչև վերևի մեջբերման վերջն ինձանից գոհ էի, որ հարազատ եմ մնում Ֆրանչեսկայի ոճին՝ իտալական վերամբարձություն, որը զուգակցված էր նույն բառերի կրկնությունից խուսափելու համար հոմանիշներ փոփոխելու բանասիրական դաժան կանոնի բծախնդիր պահպանմամբ, նաև՝ որոշ անհարթություն, որն անկասկած պայմանավորված էր ոչ մայրենի լեզվով արտահայտվելու հանգամանքով: Մի քիչ լսեցի մայրաքաղաքից ժամանած հերթական գրողի ընթերցանությունը, որն ամենամանրակրկիտ կերպով նկարագրեց մոր դիակը՝ ի հեճուկս իր լիրիկական անզգամ քրոջ, ասպա սկսեց ամբողջ սրտով խղճալ իր անձին ինչ-որ կայարանամերձ սրճարանում, որտեղ խմելու գիրկն էր նետվել գնացքը բաց թողնելուց հետո և տառապանքի վիթխարիությամբ այնպես հուզել մատուցողներին, որ նրանք, չնայած իրենց պարզամտությանը, նախ բոլոր ջանքերը գործադրեցին հերոսին սթափեցնելու համար, ասպա թողեցին, որ քնի սեղանի մոտ:

Հանդիպումը ջրավազանի մոտ էր, բացօթյա, և չնայած անձրև չկար, գրողն իր միօրինակ, մելամաղձոտ ասմունքի ընթացքում այդպես էլ չհանեց ֆլանելե լայնեզր գլխարկը (կտորները լավ չեմ ճանաչում, բայց պիտի որ ‘բեֆանելե’ չլիներ), որը համապատասխանում էր արևադարձային բացերանգ կոստյումին և, ըստ չմահավան էվանսի, լրացնում ‘արտիստի’ կերպարը, ինչպիսինը որ իբր ես էլ ունեմ, ինչն ինձ ստիպեց թվել իմ ու ընթացիկ *-ացի գրողի հագուկապի տարբերությունները, որպեսզի արդարանամ, ինչն էլ թերևս խորամանկ անգլիացու հեռագնա նպատակն էր:

Հարկավոր էր որևէ մեկին ճարել, որը ինձ համար կարդար չհասկացածս բառերը, այնպիսի մարդու, որ * -երեն ձեռագրից գլուխ հաներ, միաժամանակ տեղյակ չլիներ իմ ու Ֆրանչեսկայի հարաբերություններին: Բացի այդ, պետք է նամակը ցույց տալը թաքուն մնար իտալուհուց, որը եթե կողքիս չէր նստում, ուրեմն տեսադաշտում էր պահում ինձ: Երեկո էր, նստած էինք թույլ լուսավորության ներքո: Այդ պահին էր, որ լավեց մի կուպիտ ձայն, թե՛ մենք փնտրում ենք Վարդան Կարապետյանին: Մենք Վարդան Կարապետյանին ենք փնտրում, որովհետև վաղն առավոտ շուտ պետք է մայրաքաղաքում ոստիկանություն ներկայանա՝ վիզայի հետ կապված լուրջ բարոյություն կա... Մինչ ես նկատեցի, որ * -իայի հայկական ինքնավարության ղեկավարն է խոսողը, մինչ մոտեցա - հարցրեցի, թե ինչու՞ է գոռում, նա նորից ամբողջ հայտարարությունը կրկնեց, դեռ մի անգամ էլ սկսեց ինձ համար նույնը բղավել այն ընթացքում, երբ ես իրեն ու հետը եկած տեղակալին մի կողմ էի տանում: Մյուսները լուռ ու զարմացած նայում էին հայերի անհորոգող կերպարանքներին:

Իմ ծուլությունն էր պատճառը, անհոգությունս. մի շաբաթ էր, ինչ լրացել էր ժամկետը, որով Կենտրոնական Եվրոպայի Համալսարանն ինձ աշխատանքային կոնֆերանսի էր հրավիրել: Անձնագրիս մեջ նոր վիզա խփելու համար պետք էր երկրից դուրս գալ և նորից դեսպանատուն դիմել, ինչպես ստիպում էին վարվել, պարզվեց, նույնիսկ 'բարձրակարգ' պետությունների քաղաքացիներին, ինչպիսիք Կանադան կամ Իտալիան են: Ես բանաստեղծ ընկերոջս միջոցով, որը * -իայի 2 միլիոնանոց մայրաքաղաքի քաղաքապետի ճառերն էր գրում, վերջինիս երաշխավորական նամակն էի ձեռք բերել, որն, ասում էին, բավարար էր կացությանս թույլությունը տեղում երկարացնելու համար, բայց ինքս ոչ մի անգամ չէի փորձել զանգել-հետաքրքրվել իրերի վիճակով, քանի որ հայերը ստանձնել էին թեթև վազվզուքը՝ եթե անհրաժեշտություն առաջանար, կամ էլ պետք է զանգահարեին ինձ՝ այստեղ:

Կարճ հարցուփորձից պարզվեց, որ ինքնավարության առաջնորդներից մեկի մոտ մնացել էր թուղթը, որտեղ իմ հեռախոսահամարներն էին, մյուսի գլխում՝ հիշողությունը, որ դրանք գոյություն ունեն, և ի վերջո վեր էին կացել 1 ժամվա ճանապարհ կտրել, որպեսզի ասեին, թե այսօրվա առավոտը վերջին ժամկետն էր, երբ ես պետք է անձամբ ներկայանայի վկայագիրս ստանալու:

50-ն անց մարդկանց քաղաքավարության դասեր տալն անիմաստ էր. ես, հավուր պատշաճի զարեջուր առաջարկեցի, որի պաշար էի կուտակել սառնարանում, որ հանկարծ Չաբայի հույսին չմնայի, բայց հայերը հրաժարվեցին՝ թե ուշ է, ու գնացին: Վերադարձա ջրավազանի մոտ:

Հանդիպման ավարտից հետո համարյա բոլորն ինձ մոտեցան հետաքրքրվելու, թե ինչ է պատահել՝ լավ չեն հասկացել, 1-2-ին ճիշտը պատասխանեցի, հետո ձանձրացա, սկսեցի հորինել, թե այստեղի հայկական մաֆիայի ներկայացուցիչներն էին, որոնց արգելել էի առանց իմ կանչի հայտնվել, բայց եկել էին շտապ տեղեկացնելու, որ վերջին մի քանի պատվիրված սպանությունների համար կասկածվում եմ ոստիկանության կողմից, ոմանց էլ հակառակն ասացի՝ թե եկողները ոստիկանությունից էին, որոնց նորից ու նորից բացատրեցի, որ բանկի կողոպուտի հեղինակը ես չեմ, խզել եմ կապերս հանցագործ աշխարհի հետ, ինչպես որ հայտարարել էի, և դա կհաստատեն այստեղ ներկա քսանից ավելի խաղաղ գեղարվեստական թարգմանիչները... որոնց ցուցմունքների ետևից, ի դեպ, նրանք խոստացան վերադառնալ:

Գնացի ուսումնասիրելու ընթերցասրահում կայքրած գնացքների չվացուցակը, որն այնքան խիտ էր, որ իմ ցանկացած ժամին մայրաքաղաքում լինելը կարծես թե խնդիր չէր, մանավանդ որ կայարանն էլ մի 300 մ էր մեզանից հեռու: Մինչ ես հետդարձի մասն էի փորձում աչքի անցկացնել, մտնող-դուրս եկողն ինձ շնորհավորում էր, որ բացակայելու էի առավոտյան, երբ տեղի էր ունենալու Ճամբարի միակ գործնական աշխատանքի՝ * -ացի կին գրողի «Մոդեսի պոչը» վեպից հատվածի մեր թարգմանությունների քննարկումը: Չզիտեի, թե ինչու՞ էին հիմա նորից նախանձում ինձ եվրոպացիները, եթե մինչ այդ հերթով հուշել էին, որ թարգմանության փոխարեն իմ սեփական գործից որևէ կտոր դնեմ, միևնույն է, ուրիշ մեկը չկա, որ մեր լեզուն հասկանա: Մերժում էի՝ ասելով, թե ու՞ր կտանի այդ կարգի խաբեությունը. նույն տրամաբանությամբ Հայաստանում կարող եմ * -ական գրակա- նության անվան տակ տպել ինչ ասես՝ այնտեղ էլ * -երեն իմացող չկա, բայց իրենք ակնհայտորեն թերահավատ էին մնում, որ գլուխ պահելու նման աներևակայելի հնարավորությունն ունենալով, ձեռքիցս բաց թողնեմ:

Ինձ նախանձելու մի իմաստ այնուհանդերձ կար. թարգմանությունը վարժություն համարելով սկսնակների համար՝ ես վերջին օրվան էի թողել հիմնական գործը, և այժմ բոլորովին հրաժարվեցի: Սկսեցի թափառել ‘Միվըր քլաբում’, որի անվանումը միգուցե ակնարկ էր, որ լրագրողների, գրողների խոսքն արժաթ է, միայն լռելու վայրերը կարող են կոչվել ոսկի, ասենք՝ ‘Գողթն քլաբ’: Մի ‘գերազանցիկ’ բուլդարացի, որ վարուց ավարտել էր գործը, ջրավազանի մոտ մենակ նստած դժգոհում էր այն անպատասխանատուներից, որ ամեն ինչ թողել են վերջին րոպեին, թեև ուրիշներ էլ կային, որ վաղօրոք էին սկսել, բայց դեռ ընթերցասարսհում սքնում էին: Գիշերը մինչև շատ ուշ տանջվեցին, այդ թվում՝ Ֆրանչեսկան ու փորձառու Սաշան, որ շուտ-շուտ դուրս էին գալիս ծխելու, ես էլ, պարսպ, գարեջրի իմ պաշարներից հյուրասիրում էի նրանց և ուրիշ ‘աշխատավորների’: Մինչդեռ այդ օրը (այդ օրվանից) * -ացիներն սկսեցին իրենց օտարոտի պահել, որի բացատրությունը մինչև այս պահն էլ չգիտեմ. մեկուսացել էին մեր տնակում, մարդ մտնել-դուրս գալիս լռում էին, իսկ վիենացի Չաբան՝ ոչ թե քաղաքացիությանը, այլ ծագումին ապավինած, ընկերացել էր նրանց, և աղջիկների առաջ չբացեց խմիչքի պահեստը, որից տղաների մի մասն էլ էր օգտվում ու համաչափ խմում-ուրախանում: Բայց՝ իր համար ավելի վատ. անմիջապես զգացնել տվեց կաշառքի անարդյունավետությունը, երբ այն շարունակական չէ: Օտարերկրացի թարգմանիչներն սկսեցին մակդիրներ կայցնել Չաբային, որոնց ընտրանուց կազմեցինք ‘բեղավոր գունդուկօժիկ սալ’ արտահայտությունը, իսկ կազմակերպիչ-գրականագետներին, որ մի աղջիկ, մի տղա էին, հիշատակեցինք բանախոսներին ուղղված իրենց հարցերի առնչությամբ, որոնք համարվեցին այնքան տափակամիտ, որ ակամա կարոտում ես ‘զնայադարներին’, ինչպես կոչում էինք հարկադրյալ լռությունը, որ պետք է պահպաներ հավաքույթին ելույթ ունեցողը, երբ ‘Միվըր քլաբի’ հենց կողքով (թվում է՝ միջով) գնացքներ էին անցնում՝ ամեն 10-15 րոպեան մեկ:

Գիշերային այս մադճոտության մեջ մի պահ իմ երթևեկն ընդհատեց Ռեբեկան, Չեխիայում բնակվող ամերիկոսին, միակը, որ չէր հարցրել իրիկնային այցելուներիս մասին, և, հուզմունքից ավելի վատ խոսելով * -երեն, քան՝ սովորաբար, խնդրեց բացատրել, թե ովքեր էին այդ անտաշ մարդիկ, ի՞նչ է ուզում ինձնից ուստիկանությունը: Նրա բնականից կարմիր այտերը մուգ-մորեգույն էին դարձել, նեղ ուսերը, որ եզրափակում էին երկար հասակը, սեղմվել էին: Ես մտածեցի, որ արտառոց բացատրություններով նրան ավելի վախեցնել պետք չէ, և ասացի, որ հայրենակիցներիս անհանգստացրել էր իմ վիզայի խնդիրը, բայց հիմա արդեն ամեն ինչ կարգին է: Այստեղ Ռեբեկան, թերևս վերջինը՝ ‘ճամբարականներից’, որ նաև չէր հարցրել, թե ինչն է ինձ դողել հեռավոր Հայաստանում * -երեն սովորել, դիմեց այդ անխոհեմությանը, և ես չդիմացա՝ բոլորովին նոր մի վարկած պատմեցի, թե տուրիստական խմբով Կուբայում կոկորդիլոսների բուժարան այցելելիս գետանավի մեջ ծանոթացել եմ մի * -ուհու հետ, ցածրահասակ, լիքը-լիքը, բայց շատ գեղեցիկ կնոջ, անունը Արանյկա, որ հիմա գիտեմ՝ ոսկիկ (Ոսկեհա՞տ) է նշանակում, չհասցրինք հասցեներ փոխանակել, բայց խոստացա իրեն գտնել: Որոշեցի նախ լեզուն սովորել, բայց հետո իրեն չփնտրեցի, որովհետև անունը կարծածիս պես եզակի չէր, համենայն դեպս՝ 9 միլիոնանոց * -իայում, բացի այդ վախեցա, որ թմբիկ կնոջը լրջորեն չէ, որ դուր եկած կլիներ իմ նիհար կերպարանքը:

Ռեբեկան ապշած, կարեկցանքով լսեց պատմությունս, հետո ե՛ս գլխի ընկա իրենից հարցնելու, թե Չեխիայում ապրող ամերիկոսու ինչի՞ն է պետք եղել * -երեն սովորել: Պարզվեց, որ վերցնովի երեխա է եղել, մեծ տարիքում իմացել է, որ իսկական ծնողներն այս երկրից գաղթած հրեաներ են, գտել է ուսուցիչ, որից 5 տարում մասնավոր պարապմունքներով սովորել է լեզուն: Նա ինքը 2 տարեկան աղջիկ ուներ. թեև 40-ին մոտ կլիներ, գուցե՛ն՝ ավելի քիչ, որովհետև ցույց տվեց նաև ամուսնու լուսանկարը, որը երիտասարդ տեսք ուներ ու կլինների ամերիկացիներին էր նման. ինքնավստահ, համակրելի: Ես եզրակացրի, որ Ռեբեկայի ամաչկոտությունն իր ամերիկյան քաղաքացիությունից չէ, ոչ էլ՝ առոգանությունից, որի պատճառով առաջին պահ չէիր գուշակի, որ անգլերեն չի խոսում, այլ՝ * -երեն, այլ՝ նրանից, որ որբուկ էր՝ թե՛ իսկական, թե՛ իրեն որդեգրած ծնողներ ունեցող որբուկ:

Այդ տպավորություններից, թե իմ հոգսերի պատճառով երկար չէի կարողանում քնել. չգիտեի, վիզաս կլինի՞, թե՞ ուշացել եմ, չգիտեի՝ եթե ուշացել եմ, ինչպե՞ս էի ինքնաթիռիս տոմսը փոխելու՝ այս սեզոնին նույնիսկ շաբաթներ առաջ ազատ տեղ չէր ճարվում, չգիտեի, փողս կբավականացնե՞ր, որ տոմսս փոխելիս տուգանք մուծեի, ինչպես

մի անգամ արել էի, երբ ճամբարին մասնակցելու հրավերն ստանալով՝ որոշեցի այն ընդունել՝ անկախ վիզայի և այլ դժվարություններից, չգիտեի՝ օրինազանցությունս վատ չէ՞ր անդրադառնա Կենտրոնական Եվրոպայի Համալսարանի կողմից ինձ նշանակած 10-ամսյա թոշակի վրա, որն ապրուստի միակ աղբյուրս էր լինելու Հայաստանում, որտեղ ուրիշ ոչ մի գործ չէի նախաձեռնել, որ այլընտրանքի հեռանկար ունենայի...

Ø²ê âàððàð

Լուսադեմին աչքս կպավ, բայց շուտով ստիպված էի վեր թռչել, որ քունս թոթափեի կառամաստույցում, որն իրենից ներկայացնում էր բացարձակ դատարկ 2 ասֆալտե հարթակ գույգ երկաթգծերի 2 կողմում՝ այնպես բոլորապատված ծառերով, որ վերևում միայն երկնքի կապտավուն կտորն էր ջոկվում կանաչ համայնապատկերից, գետնին՝ գարեջրի ջարդած դարչնագույն շիշը: Մեն-մենակ կանգնած դեղին նոթատետրումս նկարագրում էի ինձ համակած անորոշության զգացումը, որպեսզի գնացքում արդեն վերադառնամ Ֆրանչեսկայի նամակին: Միայն թե գնացք նստել չհաջողվեց, որովհետև այն ինձ համար կանգառ չարեց... Շատ չանհանգստացա, մտածեցի, որ շուտով ուրիշը կգա, ուրիշը մի 15 րոպեից եկավ, բայց նորից չկանգնեց... Ճեպընթաց էր, հասկացա, որ այս կիսակայարանում չէր կանգնելու, բայց կանգ չառավ նաև արտաքուստ գուտ մերձքաղաքային 3-րդ գնացքը... Ուշանում էի, վազեցի հետ՝ մինչև ‘Միլվոր քլաբի’ վարչական տնակն, ու շնչասպառ հարցրի, թե գնացքներն ինչու՞ կանգ չեն առնում: Այդ պահին գնացա հեռախոսը, և գրասենյակի միակ առկա աշխատակիցը՝ շուրթերը հավաքած մի աղջիկ, 5 րոպե անընդմեջ խոսեց, հետո մի 2-րդ գանգողի գործնական հարցերին էլ պատասխանեց, ես ներսուդուրս էի անում, վերջում արդեն խցկված մնացի ներսում, որ օրիորդից տեղեկություն կորզեմ, կրկնեցի հարցս, զարմացավ, թե՛ ինչպե՞ս չի կանգնում, գնացքներից մեկն անպայման կանգնում է, հիմա ժամը քանի՞սն է, 8-ն անց 40, հենց 8.40-ի գնացքն էլ կանգնում է, այ, սա, որ հիմա դեպի մայրաքաղաք շարժվեց, հենց ձեր ուզածն է, որ կա:

Պետք է ամենաուշը 9.30-ին լինեի համալսարանում, բայց հաջորդ գնացքը կարող էի նստել միայն 9.40-ին. ընթերցասարահի չվացուցակը վերաբերում էր մոտակա քաղաքին, մեր ‘Միլվոր քլաբը’ հազիվ ժամը մեկ էր արժանանում գնացքների ուշադրությանը:

Գուրս եկա ճանապարհի եզր՝ ավտո կանգնեցնելու: Մեծ մասը հայացքներն էլ շուտ չէին տալիս դեպի ինձ՝ երևի կովկասյան արտաքինիցս խրտնելով, այլոք ձախ կամ աջ կողմը ցույց տալով, այսինքն թե՛ շուտով թեքվելու ենք, միևնույն է, չէին կանգնում: Ես էլ սկսեցի առանց որևէ տրամաբանության աջուձախս մատնացույց անել, քանի որ չգիտեի, թե մայրաքաղաքի ճանապարհը որ կողմն է, ոչ էլ մարդ կար, որ հարցնեի. հույս ունեի, որ եթե գոնե մի ավտո կանգներ, վարորդից կպարզեի:

Բան դուրս չեկավ: Հետ գնացի գրասենյակ, որ զանգեմ՝ զգուշացնեմ, թե կուշանամ, չգտա թուղթը, որին գրել էի համալսարանի հեռախոսը: Հիշողությամբ համարը հավաքեցի, ինքնապատասխանիչը նկատողություն արեց, թե սխալ համար եմ հավաքում: Անտարբեր աղջկանից խորհուրդ հարցրի, առաջարկեց ավտոբուսով ետ գնալ մինչև մոտակա քաղաքը, ուր բոլոր գնացքները կանգնում են, այնտեղից ճեպընթացով 10-ի մոտերքը կհասնեի մայրաքաղաք: Նորից, արագ կտրեցի մինչև ճանապարհն ընկած 30 մետրը, որ հասցնեմ նկատել, թե ինչպես է տեսադաշտիցս անհետանում խնդրո առարկա ավտոբուսը... Տաքսի անցավ, սիրտ չարի կանգնեցնել՝ գներին ծանոթ չէի: Մի փոքրիկ, երկրորդնակ ավտո հաջողվեց կանգնեցնել, վարորդը՝ տարեց մարդ, կողքին՝ լրիվ չամիչ տատիկը՝ մի 98 տարեկան, բայց խեղճերը սարսափեցին՝ իմանալով, որ մայրաքաղաք եմ գնում, և արագ շարժվեցին՝ տալով մի հավանաբար մոտիկ բնակավայրի անուն, որն այնքան երկար էր, որ մի լսելով չմտապահեցի:

Գնացի գրասենյակ, այնտեղից նորից՝ կայարան, որ հակառակ ուղղության մերձքաղաքային գնացքով հասնեմ ավելի ծանրակշիռ, «ճեպընթացային» մակարդակի բնակատեղի: Մերձքաղաքայինը չեկավ: Այս անգամ մենակ չէի՝ 4-5 ուրիշ սպասող էլ կար. լքեցին կայարանը: Համեստ աղջիկն այնպես ազդվեց այդ չտեսնված անհաջողությունից, որ փորձեց զանգահարել երկաթուղային տեղեկատու: Ոչ ոք չէր վերցնում լրավորող: Նույն

պահին (9.30) միտքս պայծառացավ՝ հիշեցի համալսարանի հեռախոսահամարը, հավաքեցի, տղաները, որ զբաղվում էին իմ փաստաթղթերով, դեռ չէին էլ եկել աշխատանքի, բայց ինձ անծանոթ մի կին ասաց, որ եթե այն հայն եմ, որին փնտրում էին անցած ողջ շաբաթը, ուրեմն երեկ պետք է գնացած լինեի ոստիկանություն, բայց բողոք դեպքերում հնարավորինս արագ շտապեմ մայրաքաղաք:

... Երբ հասա համալսարան, դիմումս վերաշարադրել էին սահմանված ձևով, մնում էր՝ ստորագրելի, կեսօրին նոր ժամադրություն էին վերցրել ոստիկանությունում, որտեղ պետք է ներկայանալի փոստից ընդամենը 6 դրվարի նամակահիշ գնելով, մինչդեռ նախապես 40 դրվարի կարգի վճար էի պատկերացնում, ու նաև այդ պատճառով էր, որ ուզում էի համայնքը ստանար վիզաս՝ միգրացիոն հետո ամաչեին ինձանից փողն ուզել, պետք էր նաև պատկերքս՝ անձնագրի լուսանկար, որը (համալսարանի բարյացակամ աշխատակիցներն արդարացան՝ ինձ տեղահան անելու համար) հնարավոր չէր ուրիշ մեկից արտագողել: Երկու ժամ ունեի փոստի գործի ու լուսանկարի համար: Գնացի փոստ, սխալ պատուհանիկի մոտ էի հերթ կանգնել, տեղափոխվեցի, հետո ավտոմատ ֆոտոխցիկը գտա բազմամուտք մետրոյի նախասրահներից մեկում՝ 10 անգամ կողքով անցուդարձելուց հետո, 4 լուսանկար էր տալիս, 4-ի համար էլ առանձին նկարում էր. ես չզիտեի՝ շարժվում էի, ու մեկը ակնոցս ուղղելիս դուրս եկավ: Վերջացրի՝ դեռ ժամանակ կար:

Այս երկրում սովորական ներքաղաքային ավտոբուսից իջնելու համար քո կանգառից առաջ պետք է վարորդին մտադրությունը իմացնես՝ համապատասխան կոճակը սեղմելով (որպեսզի դռներն անիմաստ բացուխվելուց չմաշվեն), բայց մինչև ոստիկանատան շենքը տեսա, արդեն ուշ էր, հակառակի պես այլ ուղևորի էլ իմ կանգառը պետք չէր եկել, մի խոսքով ահագին հետ քայլեցի՝ միփաթելով ինքս ինձ, որ կես ժամ էլ շուտ եմ հասցրել ամեն ինչ, միայն թե հենց այդտեղ հորդառատ անձրև վրա տվեց, փաստաթղթերը խցկեցի շապիկիս տակ, ուր ջանում էի չճնրթել, բայց և՛ քրտնած մարմնիս չկացնել, մինչև ինձ ներս գցեցի չոր ու զով ոստիկանատուն: Շատ չսպասեցրին, մի սառնարյուն աղջիկ դուրս եկավ, թերևս զարմացավ իմ բարձր երաշխավորագրի և շտապողականությունից հալածյալ տեսքիս, շորտիս, մաշված սև շապիկիս ու բոկոտիկներիս զուգադրությունից, իմ ջերմագին շնորհակալություններն ընդունեց չափավոր հուզմունքով և հանձնեց կացության նոր վկայագիրս:

Այդ պահի՛ց էր, որ ինքնագագադրությունս լրիվ փոխվեց, ես էլ փողոցի մարդկանց պես լիարժեք զգացի ինձ, նույնիսկ՝ ավելի, որովհետև իմ զգացումը թարմ էր: Անձրևի պահին բոկոտիկներիս մեջ հող էր լցվել, ուրեմն հենց կանգառում մեկը հանեցի ու հիմնավորապես սկսեցի թափ տալ, երկրորդն էի հանել, երբ ավտոբուսը եկավ, և ես՝ ‘հաջորդի՞ն սպասել, թե՞ բոկոտիկս հարևան ցանկապատին խփելու արարողությունը կրճատել’ երկընտրանքը լուծեցի հօգուտ երկրորդի, առանց մի ոտքս կոճկելու բարձրացա առաջին դռնից: Չնայած լիարժեքության զգացմանս, ծագեց նաև ‘տոմս դակե՞լ, թե՞ չդակել’ հարցը, որին այնուամենայնիվ պատասխանեցի՝ չդակել. մի գարեջրի գին էր, փողս պրծնում էր, ես էլ, մեկ է, այստեղ՝ ժամանակավոր մարդ էի: Իջնելուց հետո ևս խոհեմաբար ճանապարհս մետրոյով շարունակեցի, որն ավելի հարմար էր, այլ՝ ուրիշ ավտոբուսով, քանի որ մետրոյում կատաղած ստուգում էին տոմսերը, նույնպես խնայողության նկատառումներով սնվեցի ոչ թե սպասարկում ենթադրող տեղում, այլ մսի խանութում գրիլ կերա, ոտքի վրա՝ կես հավ, որովհետև պակաս չէին տալիս: Հագուստեղենի ցուցափեղկում էժան գինը տեսնելով՝ մի սիրուն շապիկ առա, երկար տատանվելով՝ մուգ կապտականա՞չը վերցնեմ, թե՞ կանաչավունը, ի վերջո եզրակացրի, որ եվրոպացին հանգիստ կանաչը կվերցնեմ, և նույն կերպ վարվեցի: (Ճամբարում երկար ցնցուղ ընդունելուց հետո, որ պետք է ջնջեր քրտինքիս, հոգնատանջությանս ու հուզմունքներիս հետքերը և պաշտոնապես երկարացված կացութագիր ունեցող մարդուն վայել տեսք տեսք տար ինձ, այդ շապիկը հագա, նախքան մյուսներին միանալս: Էն էլ տեսնեմ, մեր ռուսը՝ Սաշան, նստած է ճիշտ նույն գույնի ու որակի շապիկով՝ Աստված գիտե որտեղից ի հայտ բերած... Էլի մեր նախկին սովետական ճաշակն ու ծախսի երևակայությունը համընկել էին. ես զիջեցի ու հրաժարվեցի շապիկը հագնելուց ոչ միայն ճամբարում, այլև հաջորդ երեք շաբաթն էլ, քանի որ այստեղից Թարգմանչի ստեղծագործական տուն միասին էինք մեկնելու)...

Գնացքում շարունակեցի թարգմանել Ֆրանչեսկայի նամակը, մտքիս կար նաև դժվարընթեռնելի բառերը հարցնել կողքիս պատահական ուղևորներից, բայց ոնց որ թե ոչ մեկը հարմար չէր՝ գերադասեցի բազմակետեր դնել չհասկացածս բառերի տեղը.

«Չե՞ս կարծում, որ մի փոքր չափից ավելի մակերեսային (եր քո) վարքը, և միայն հպարտության կուրությունն էր դրա դրդապատճառը: Ես համարում էի, որ դու էլ ես ... կյանքի ու մարդկային արժեքի էությունը...

Շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ որ ինձ մինչ այս տվեցիր, կյանքիս ամենախորը ապրումներից մեկն էր: Հիրավի՝ հոգիների հանդիպում, կասեր գերմանացի գրողը...

Կյանքը մի հիասքանչ նվեր է, և դա ես շատ ավելի լավ ընկալեցի վերջին տարիներին, երբ տեսա մարդկանց մեռնելիս ու ինքս էլ քիչ էր մնում մեռնելի... (Ֆրանչեսկան ծանր ավտովթարի էր ենթարկվել 2 տարի առաջ, վիրահատության հսկա սպին մնացել էր իրանին):

Ես այստեղ եմ, դեռ ապրում եմ և սիրում եմ կյանքը, մարդկանց, կենդանիներին և բույսերին, հարգում եմ նրանց, որքան ինձ հաջողվում է, միշտ փորձում եմ հասկանալ:

Կարծում եմ, որ կյանքը մեզ ցույց է տալիս ոչ այն, թե արժե ..., մեր մեծ Էգոյի մեջ ապրել: Գիտեմ, որ ես նախ, պարզ մարդ եմ, և ոչ էլ՝ շատ խելացի, բայց ջանում եմ ուղղակիորեն և ճշգրտորեն վարվել իմ այս կարճ կյանքում: Գեղեցիկ, խորը հոգեկան համերաշխություն էր մերը...

Վեպերից, բանաստեղծություններից գատ, փորձենք այսուհանդերձ սովորել լիարժեքորեն, հարգանքով և սիրով ապրել գործնական կյանքը և՛ս: Եվ միայն ինքներս մեր մասին չմտածենք...

Եթե նույնիսկ հիմար, հասարակ կինչի քեզ համար, մինչև այս պահն էլ սիրում եմ քեզ,- ինչպիսին որ կաս,- և հիմա էլ (թեև բավականաչափ տխուր ու դառնացած եմ) շատ խորը սիրում եմ քեզ:

Ֆրանչեսկա»

Ահա սա էր նամակի բովանդակությունը, որն ինձ հանձնելու հաջորդ երեկոյան նա խնդրեց, որ ժամանակ տրամադրեմ, որպեսզի մի քանի բառ փոխանակենք: Ես որոշել էի քաղաքավարության սահմաններից դուրս չգալ, որ չմատնեմ, թե ինձ ինչպես է ցնցել եղածը, բայց բացատրություններից խուսափել, քանի որ նա կարող էր օգտագործել այն հանգամանքը, որ իմ աչքով ոչինչ չեմ տեսել, և կամաց-կամաց լրոզեր մահճակալիս վրա իր ու * -ացի գրողի միջև երկար բուսակների ընթացքում կատարվածի իմ պատկերացումը, որի իսկությունը վստահ էի իմ ողջ էությանը: Առաջարկեց գնալ մարզասենյակ, ձեռքիս սովորականի պես զարեջրի շիշ կար, ուզեց մի կում անել՝ չմերժեցի՝ որքան էլ տհաճ լինեք իրենից հետո շիշ բերանին հավելը. դա ինձ համար ոչ մի բան չէր փոխում, ինչի հույսը միզուցե ինքն ուներ այդ վիճակը ստեղծելիս: Պարզ է, հարցրեց նամակի մասին, ասացի, որ չեմ կարդացել, չհավատաց, բայց հետո խնդրեց վերադարձնել իրեն, որովհետև դեռահասական տարիքից հետո այսպիսի բան չի արել՝ ամաչում է: Ասացի, որ ձեռագիրը դժվար եմ հաղթահարում, չհավատաց, հարցրեց, թե ի վերջո ինչպես եմ վերաբերում բուն տեղի ունեցածին: Կիսատ-պռատ վերացական դատողություններ քրթմնջացի այնքան, մինչև համակերպված ընդհանրացրեց, թե հասկանալի է, ինքը քեզ փակել էս երկաթե արկղի մեջ, վրան էլ՝ 7 կողպեք կախել:

Հիմա, երբ նամակն արդեն թարգմանված ու ամփոփված էր նոթագրությանս մեջ, վիրավորվածությունս զգալի նվազեց: Մտածեցի, որ հարկավոր է որոշել. սա ինձ համար կյանքի խնդիր է, թե՞ ոչ... Թե՞ արդեն գրականության խնդիր է, երբ այսքան շարադրել եմ պատմությունը: Եթե՝ կյանքի, պետք է խոսել Ֆրանչեսկայի հետ ու պարզություն մտցնել մեր հարաբերություններում: Եթե գրականության, ուրեմն, պետք է Չաբային ու * -ացի գրողին էլ դիմեմ, որ իրենց նամակները գրեն ինձ՝ շարադրելով կատարվածի սեփական տարբերակը... Ծիծաղեցի այդ մտքի վրա, որովհետև Չաբայի երևակայությունը չէր հերիքի այդ խաղին մասնակցելու համար: Գրողին էլ ինչպե՞ս էի առաջարկելու, եթե այդ չարաբաստիկ երեկոյից հետո ամենաթունդ մարդատյացը կնախանձեր այն հնչերանգին, որով բարևել էի իրեն, իսկ իր գրականության մեջ մասնագիտացած քննադատին մեր տնակի պատշգամբում ասացի, որ այդ գրողից բազմաբեղուն ու արտիստիկ արվեստագետի շատ լավ կերպար է կերտել, բայց հումքն ինքը լավը չէ՝ այսօր սեփական գրվածքը ձևեր թափելով կարդալը, ասմունքելը խնդկատակություն է, պատմավեպ գրելիս բոլոր հերոսներին տարօրինակություններով ներկայացնելը՝ պարզամտություն: Քննադատը, որը ճարտասացող գլուխը սափրած, մեղմաձայն, նուրբ երկար քթով միջահասակ երիտասարդ էր, համախոհության արտահայտությամբ ինձ լսելով հանդերձ, շնջաց, թե գրողը վերևն է, իբր՝

կամաց խոսիր, ինչին ես պատասխանեցի, որ վերևում միշտ էլ մեկը կա, բայց փոխարենը մարդն ազատ կամքով է լույս աշխարհ գալիս: Ուրիշ առիթներով ևս չէի գալել ինձ այդ գրողին բնութագրելու որպես ժամանակավրեպ ու դասականներից թխող, հավանական է, որ ականջն ընկած լինեիր՝ չէր ընդունի առաջարկս:

Ֆրանչեսկայի նամակի անկեղծության շուրջ մտածելիս հիշեցի, որ *-իայի մայրաքաղաքում հարցրել էի քանդակագործ ընկերոջս, որի արվեստանոցում ապաստանել էի 2 կոնֆերանսներիս մեջ ընկնող շաբաթվա ընթացքում, թե այսօր Եվրոպայում հնարավոր է, որ տղամարդն ու կինը ծանոթության առաջին օրն իսկ իրար հետ քնեն, որին նա պատասխանեց, թե ինքն անձամբ կխուսափեի նման կանանցից, որովհետև նույնքան թեթև էլ լինելու է բաժանումը... Դատապարտեցի ինձ, որ հասակակցիս իմաստուն նախազգուշացումն ինձ համար դաս չի տրել, բայց նույն պահին աչքիս առաջ եկավ, թե ինչպես էր նա ինքը մի ողջ երեկո՝ ‘աշխատում’, որ նոր ծանոթացած մի կնոջ գիշերը քարշ տար իր մոտ, և, նորից ուղենիշներս կորցնելով, քնծիծաղեցի ինքս ինձ վրա:

Չհաջողվեց վարվելակերպս որոշել:

ՅԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ցերեկվա բանախոսությունն արդեն ավարտվում էր, երբ ներկայացա՝ լոգասենյակում սարքած մեծ սուրճով հանդերձ: Քննարկում էին Վալտեր Բենյամինի մի էջը, ուր նա բնագիրը դիմացի անտառափեշում ծվարած կենդանի էր համարում, որին թարգմանիչը պետք է հրապուրի իր կողմի անտառափեշը: Բոլոր առաջարկվող եղանակներն այնքան անհամոզիչ էին (իմ գլուխն էլ ոչ մի հնարամիտ ելք չեկավ), որ թվում էր ավելի է լավ կենդանուն հանգիստ թողնել իր հարազատ վայրերում:

Ընթրիքից առաջ հաջողվեց տեղ գրավել Ինտերնետային կապով կոնյակի դիմաց: Պատասխանեցի տղայիս նամակին, որը վերաբերում էր ‘Ֆորմուլա-1’-ի նորություններին և Ազաթա Զրիստիին:

Նինա Պեյզանն էր գրում, որ մեկնել է գյուղ օգնելու հորեղբորը և բողոքում, թե առօրյան (առավոտյան 4-ին սկսվող) միօրինակ է, նախ կովերին է տանում արածեցնելու, հետո՝ գնում խաղողի դաշտ, նորից կովերին է նայում, իսկ իրիկունը պապնուտատն ու մյուս հարազատներն իր հետ որևէ կերպ չեն հաղորդակցվում: Գրեցի, որ ես ուրբանիստ եմ, բայց կարծում եմ, որ ինքը հիմա անփոխարինելի տպավորություններ է քաղում բնությունից. դա է կարևորը: Կուզենայի տափակ դատողություններով մխիթարողի դերը չստանձնել, բայց 2-3 բույսեր է վիճակի չէի մտնել գյուղական ժուժկա կյանքի խորքը, որոնց մասին ամբողջ վեպեր էին գրել ֆրանսիացիները՝ մեկը մյուսից հիանալի:

Շվեյցարիայից հին օրերի ընկերուհիս էր ուզում Ճամբարի հեռախոս, որ զանգի՝ հետո հայերեն խոսի, ինչպես մի անգամ արդեն արել էր համալսարանի կոնֆերանսի ընթացքում (հյուրանոցում էի ապրում, մի ժամի չափ խոսեցինք, որի կեսերից մոկտում էի՝ մտածելով, թե էդ ծախսով Հայաստանում ինչե՞ր կարելի էր անել): Պատասխանեցի, որ տնակիս հեռախոսը չի աշխատում, ինչը ճիշտ էր, բացի այդ՝ ոչ մի որոշակի բույս չէի կարող նշել, երբ որ ներսում կլինեի: Ֆրանչեսկան մեր սիրավեպի (կամ, ավելի ճիշտ՝ սիրային պատմվածքի... տո, ոչ էլ պատմվածքի՝ մանրապատման) առաջին օրերից սկսել էր ծրագրել *-իսյում անցկացնելիք իմ ժամանակը, այնպես, որ իրարից համարյա չէինք բաժանվելու, մասնավորապես՝ 2 անգամ, 1-ական շաբաթով գալու էր Թարգմանչի ստեղծագործական տանը՝ մոտս մնար: Հիմա, երբ նրա տեղն իմ կողքին թափուր էր, մտածեցի, միգուցե շվեյցարահայուհուն հրավիրեմ, մանավանդ որ հեռախոսով ‘Ափսոս որ այսքան իրար մոտենալով՝ չենք հանդիպելու’ կարգի նախադասություններ էինք փոխանակել, թեև խոսքը հարյուրավոր կլիմատորերի մասին էր: Գրեցի իրեն Թարգմանչի տան հեռախոսահամարը:

Հարցազրույցի երկրորդ հրավերն էի ստացել ‘Արգելված ռադիո’ կոչվող կայանից, որի խմբագիրներից մեկի փոխիստվայական հարցադրմանը (մայրաքաղաքում) հենց այնպես պատասխանեցի, որ անհեռանկար է ինձ բարձր թեմաների շուրջ զրույցի մեջ ներքաշելը, որովհետև այն կարծիքին եմ, որ մարդը, համենայն դեպս նախկին խորհրդային մարդը, ինչպիսին ես եմ, մի ծխախոտատուփ է, որի բոլոր զվանակներն արդեն ծխված են: Նրա վրա ասածս հակառակ ազդեցություն թողեց. համառեց, որ հյուրընկալվեմ իր 2 ժամանոց, ուղիղ հեռարձակմամբ անգլերեն ծրագրին, ես հրաժարվեցի, քանի որ անգլերենիս իմացությունն արգելում էր առաջարկն ընդունել, այժմ կրկնեցի, որ կոկետությունից չէ, որ մի անգամ մերժել եմ:

Երեկոն տխուր ու լարված անցավ, քանի որ *-ացիների ու օտարերկրացիներիս հարաբերություններն ակնհայտ սառն էին, մեր անմեղ կատակներին տեղացիները պատասխանում էին տարբեր բունավոր ակնարկներով, որի հետևանքով թարգմանիչներից ոմանք ընկրկեցին ու սկսեցին նրանց քծնել (մեկ էլ տեսար՝ հաջորդ ճամբարներին չհրավիրեն), ոմանք, ինձ նման, սկսեցին տանձներին չդնել՝ թողնելով, որ հանգուցալուծումն ինքը գա (թեև ոչ մի հանգուցալուծում չի եկել առայժմ): Ես նաև առիթի դեպքում երեսներով էի տալիս, որ իրենց

ազատ եվրոպացի են համարում, բայց ցերեկը շատերը վախենում են պաշտամունքի աստիճան մեծարվող ժամանակակից գրողի մասին անկեղծ խոսել, մինչդեռ երեկոյան կողմ հոխորտում, միջակ հրապարակախոս են կոչում նրան:

Այս ոչ շատ հովվերգական մթնոլորտում նախաձեռնվեց վերջին երեկույթի ծրագրումը. երկար քննարկվում էր 2 առաջարկություն՝ 1200°, թե՞ 1300 դրամի կարգի գումար դնի յուրաքանչյուրս: Ջավեշտականորեն փոքր գումար՝ այսօրվա աղքատ-հպարտ հայերիս համար, եթե եվրոպական չափերի աշխատավարձ-թոշակ ստանալինք, բայց իրենք ուրիշ կերպ են ամեն ինչ հաշվում:

Խոսակցություններից մեկի ընթացքում պատահաբար իմացա, որ ինձ ու Սաշայի հետ, որ Թարգմանչի ստեղծագործական տանը մեր մայրենի լեզուներին էինք փոխադրելու նախօրոք ներկայացրած գրքերն ու թոշակ էինք ստանալու այդ ընթացքում, այնտեղ է գալիս նաև Ֆրանչեսկան: Նա պարզել էր, որ Թարգմանչի տան սենյակներից մեկը 4 օր ազատ է, և վարձել էր այն. չիրավիրված, բայց գրականության հետ կապ ունեցող մարդկանց խիստ չափավոր գումարով նման հնարավորություն ընձեռնվում էր:

Չգիտեմ ինչու, վերջին օրերից հիշատակելի շատ բան չեմ մտաբերում: Պինգ-պոնգ էի խաղում՝ ջուր դառնալու չափ քրտնելով, ու խմում մայրաքաղաքից հանդիպման եկած ինձ տարեկից մի գրողի հետ, որի ինքնատիպ պատմվածքները թարգմանել էի. զարմանալի գուգադիպությանը 2-իս հայրերն էլ երկաթուղային մեքենավար էին աշխատել, 2-ս էլ ամուսնավուծության գործընթացում էինք: Լավ էր խաղում, խմել էլ կարողանում էր, միայն իր գործերի նման սակավաբառ էր, այնքան, որ իր փոխարեն զարհուրում էիր, թե ո՞վ է անիծել մարդկանց, որ անպայման շփվեն ու խոսեն իրար հետ:

Ցերեկներին հակառակ, ճամբարի վերջին գիշերներն ինձ համար արտասովոր էին, որովհետև ոչ միայն երազ էի տեսնում, այլև հիշում էի դրանք: Օրեր շարունակ:

Մեր ամբողջ խմբով հայտնվել էինք Բաքվում: Բոլորն անտրամադիր էին, բայց հանգիստ, պարզապես զարմանում էին, որ մեզնով ոչ ոք չի զբաղվում: Ես մտածեցի, որ երկար չի շարունակվի այսպես խաղաղ, պետք է ինչ-որ բան ձեռնարկել, քանի դեռ աղբբեջանցիները գլխի չեն ընկել, որ հայ եմ, ինչը, հասկանալի է, անհավանական բան չէ, և հաշվեհարդար տեսնեն ոչ միայն ինձ, այլև օտարերկրացի ընկերակիցներիս հետ: Փողոցում էինք: Մեր շուրջը քիչ մարդ կար:

Մյուսներից առաջ ընկած, որովհետև իրենք դանդաղ էին քայլում, բայց և ոտքս կախ զցելով, որ խուճապս ցույց չտամ, մոտեցա մեծ ապակեպատ հսկայական նախասրահով մի շենքի, որը կուսակցության կամ կոմե-րիտմիության կենտրոն էր, ինչպիսին կլինեք սովետական տարիներին: Մտա ներս, երբ մի քանի կին հեռանում էին՝ գործը վերջացրած, ասացի, որ մի խումբ թարգմանիչներ ենք * -իսից, մեզ պետք է զնալ օդանավակայան: Կանայք պատասխանեցին, որ այսօր իրենց աշխատանքն ավարտվել է, վաղը կարող են իմանալ գործի էությունը: Ես հերթապահ ոստիկաններին դիմեցի, բայց սրանք էլ էին հավաքվում, հայտնեցին, որ բոլորով ծնունդի են գնալու, մեր պատճառով հետ չեն ընկնի: Դրանցից մեկը, որ ռուսի նման էր, ասաց.

- Մանավանդ որ դու կարծես թե հայ ես, մինչև վաղը հետաքրքիր ժամանակ կանցկացնես:

Ես առանց արձագանքելու դուրս եկա: Մինչ խմբին պարզաբանումներ էի տալիս, դժկամորեն, քանի որ փողոցում չէի ուզում խոսել, որևէ ուշադրություն գրավել, մեր շուրջը աղբբեջանցիների բազմություն հավաքվեց, որի միջից ոմանք սկսեցին ինձ մատնացույց անել:

Այստեղ զարթնեցի:

Մի անգամ էլ տեսա, որ Ֆրանչեսկան գլխավերևս կանգնած է: Ինչ-որ լավ բառեր էր ասում, բայց զգում էի, որ ուզում է ինձ սպանել, մորթել: Փորձում էի վեր կենալ, բայց մարմինս ինձ չէր ենթարկվում: Մինչև եկավ մի պահ, երբ որ ուղակի գործողությունների անցավ, որից զարհուրեցի, բայց միաժամանակ ինչ-որ գոհունակություն էլ էի զգում, որ ճիշտ էի գուշակել իր մտադրությունները, դեռ ինձ հաճելի բաներ ասելու միջոցին:

Նույնպես սարսափելի երազ էր, որ իբր խմբով կանգնած ենք, մեկ էլ իմանում ենք, որ * -երենից թարգմանելիք

գրքերը բերել են, լույսի արագությամբ մյուսները հարձակվում, բոլորը խլխլում են: Ես շվարած մնացել եմ, չեմ էլ վտորձում մոտ գնալ, այնքան որ ետ եմ ընկել, հետո երկար ժամանակ, կիսարթուն, ինքս ինձ մխիթարում եմ, թե ոչինչ, մի բան կհայթայթեմ, անհնար է, որ տակը մի բան թողած չլինեն, զոնե երկրորդական կարգի մի հեղինակ կճարեմ, եթե առաջնակարգ գրքերը բոլորը տարել են:

Բարեհաջող պինգ-պոնգել էի նախորդ օրը (*‘պինգ-պոնգել’* բառն իմ նորամուծությունը մի՛ համարեք, ավելի շուտ *-երեն-ից մեջբերում է, քանի որ այդ լեզվով նման բառեր արտակարգ հեշտ են կազմվում), գոհ էի, որ ֆիզիկական ծանրաբեռնվածությանը լավ եմ դիմանում, գիշերը, արդեն լուսադեմին մոտ երազիս տեսա, որ *-ացի բանաստեղծ Յոժեֆը՝ երբեմնի ֆուտբոլիստ, որ մեզ հետ էր ողջ ճամբարի ընթացքում, բոլոր օրինակները սպորտից կամ բանտից էր բերում և կանանց գրականության իրավահավասարության միջոցը տեսնում էր այն, որ նրանք չսպասեն, մինչև իրենց տեղ տան, այլ ձեռքները խփեն սեղանին, թե՛ կարո՞ղ ա ըստեղ ինձ բան ասող կա, ինձ խորհուրդ է տալիս՝ զգույշ մկաններդ կբռնվեն... Իրար հետ մի քանի անգամ պինգ-պոնգել էինք, ինքն ավելի նպատակալաց էր խաղում, երևի պարապել էլ էր ժամանակին՝ ավելի շատ էր հաղթում: Չգիտեմ, թե թվածս բաներից որն ինչ դեր ունեցավ, բայց միանգամից 2 սրունքներին մկաններն էլ, որ երբեք կյանքումս չէին բռնվել, այնպես կծկվեցին, որ ցավից զարթնեցի... 10-15 րոպե մերսում էի, մինչև կարողացա ոտքերս նորից հանգիստ մեկնել:

Վերջին գիշերը ես ու Սաշան ոչ մի վայրկյան աչք չփակեցինք. իմաստ չունեի՝ մեզ ‘Սիվլըր քլաբ’-ից Թարգմանչի տուն տանող մեքենան, որը Սաշայի ընկերոջն էր՝ կուսակցական ու պետական նախկին աշխատող Պետերինը, գալու էր առավոտյան 6-ին, որպեսզի մայրաքաղաք հասնեինք նախքան խցանումները: Դժվարությամբ, մեկ տնակի ներսից՝ ննջասենյակի փակ դուռը, մեկ դրսից՝ պատուհանը թակելով՝ արթնացրինք Ֆրանչեսկային. նա 3-ի կողմերն էր լքել երեկույթը, որին իր կողմից 4-5 կողմնակի մարդ էր հրավիրել մայրաքաղաքից, որոնցից մեկն իր ‘պաշտոնական’ ընկերն էր՝ մալանչավոր, նեգրական ոճի մագերով ու մորուքով շիկահեր մի *-ացի, որի հետ մայրաքաղաքում միասին էին ապրում, ինչպես ենթադրեցի խտալուի խոսքերի որոշ պատահիկներ համադրելուց: Պետերն արագ էր վարում ու մեզ տեղ հասցրեց իր խոստացած ժամին՝ 9-ը չեղած, չնայած անդադար խոսում էր, փնովում նոր կարգերն՝ օգտագործելով պրոլետարական, այն էլ լյուսպեն-պրոլետարական բառապաշարի ընտրանին, որից ես ամբողջը չէ, որ հասկանում էի, և մյուսների պես (ռուսը 25 տարի է զբաղվում էր այս լեզվով, իտալուհին 3-րդ տարին է, որ *-իսյում էր) ամեն արտահայտությունից հետո չէի քանդվում, ուստի չեմ բացառում, որ ճիշտ էր Ֆրանչեսկան, թե ինչ-որ պահից քնել էի, մինչդեռ ինքն էր, որ փլվել էր կրծքիս ճանապարհի մեծ մասը: Կանգ առանք *-ական հայտնի լճի ափի տիպիկ առողջարանային քաղաքներից մեկում, մեծ պարտեզով մի առանձնատան առաջ, որն էլ մեր նշանակետն էր, բեռնաթափվեցինք, մտանք ներս, ես, քնաթաթախ, այնքանը հասկացա, որ 40-ին մոտ, սիրալիք, տափակ դեմքով կիներ՝ տնտեսուհին, մեզ առաջարկում է սենյակ ընտրել՝ նախապատվությունը տալով ամենաերկարը՝ 5 շաբաթ մնացողին, որը Սաշան էր: Սա ամենաշքեղ չվերցրեց, որի դուռը դեպի ընդարձակ նախասրահ էր բացվում, այլ, Պետերի խորհրդով, փոքր միջանցքի ծայրի մեկուսին, ես, որպես հաջորդ արտոնյալը՝ 3-շաբաթյա երկարաբնակ, չտատանվեցի ձեռքս շքեղին զցելուց, մանավանդ որ 2,5-ը 3 մետրի վրա մահճակալը խիստ էական կդառնար, հենց հյուր ունենայի:

Ֆրանչեսկան թքվեց իմ ընտրությունից, բայց ես բանի տեղ չդրեցի. նրա հանդեպ ջենտլմենություն ցուցաբերելը չափազանցություն կլիներ, չհաշված որ ընդամենը 4 օր էր մնալու: Իտալուհուն ձեղնահարկի միակ սենյակը բաժին ընկավ (մնացած մասը զբաղեցնում էին գրադարանը, հեռուստացույցը և ինտերնետի հնարավորությամբ համակարգիչը), որը փոքր էր, բայց ուներ այն առավելությունը, որ լոգարանի մուտքը ներսից էր, մինչդեռ մյուսներինս առանձին էր, ընդ որում՝ հնարավորինս հեռու սենյակներից, կարծես մեկը ծրագրել էր անպայման տեղյակ լինել, թե ով էրը է գնում գուգարան կամ ցնցող ընդունելու: Փոխարենը Ֆրանչեսկայի սենյակի կողքով էին անցնում խոհանոցի օդափոխության խողովակները, որ անընդհատ տաքություն էին արձակում, որի կարիքը կենվորը հազիվ թե զգար հուլիս ամսին:

Մեծ, հարմարավետ խոհանոցն՝ իր ապակեպատ ճաշասենյակով, բոլոր 6 սենյակների համար ընդհանուր էր, ինչպես և՛ 2 սառնարանը, ուր ամեն մեկիս մի դարակ ու մի քիչ էր հասնում:

Կես ժամ չանցած, որի ընթացքում ինչ-որ թղթեր ստորագրեցինք, ծանոթացանք Թարգմանչի տան կարգ ու կանոնին, Սաշան ու Ֆրանչեսկան բունն ամենելու գնացին, իսկ ես ստիպված էի սպասել ևս 10 րոպե, մինչև գար համակարգչի մասնագետը, որն իմ սենյակի կոմպյուտերը պետք է հայկական տառատեսակներ տեղադրեր: Անձը, որն օրվա մասին նախօրոք զգուշացված էր, բայց ժամի մասին՝ ոչ, հայտնաբերվեց 10.30-ի կողմերը, չբարբելով իսկ ջինջ աչքերը, ինչպես բնորոշ է տեխնիկական մասնագիտությունների ներկայացուցիչներին, ասաց, որ առավելագույնն արել է՝ Ինտերնետում եղած-չեղածն իր սկավառակների վրա հավաքելու համար: Չգիտես ինչու, սկսեց ինչ-որ ծրագրերով վերալիցքավորել իմ կոմպյու, սա դրանք չէր ընդունում, հիշողությունը չէր ներում,

նեղարտեց այս նախնադարյան սերնդի համակարգչիչների գոյությունից, որ թույլ չեն տալիս հանգիստ աշխատել, ես ընդհատեցի, թե Հայաստանի իմ կոմպյու IBM-386 է, այնուհանդերձ հայերեն գրում է երբ ուզես ու ոնց ասես, նա խոսեց համակարգային թերությունների մասին, 12-ի կողմերն ի վերջո փորձեց կիրառել իր բերած բազմաթիվ տառատեսակները, որոնք հայկական վերնագրեր ունեին, բայց իրենց դրսևորում էին լատինատառ: Ես առաջարկեցի օգտվել Ինտերնետի ինձ ծանոթ 1-2 հասցեից, հրաժարվեց, թե ուրիշ խոչընդոտներ են խանգարում, որ գործն առաջ գնա, նոր ծրագիր մղեց կոմպի մեջ, սա կեսից կապտեց-սևացավ էկրանով մեկ, դիմադրեց, մասնագետը կանչեց տնտեսուհուն, որ ցույց տա, թե ինչ ստորացման է ենթարկվում ինքը ցածրակարգ սարքերի կողմից, ժամը 2-ին համաձայնեց իմ հուշած հասցեներից արտագրություն անել, ժամը 3-ին 2 հայերեն, կարծես թե՝ սփյուռքյան տառատեսակ սկսեցին գործել, բայց ամեն մեկից մի քանի տառ պակասում էր: Ինձ հարցրեց, թե վստահ եմ արդյոք, որ այդ տառերը պակաս են և, եթե՝ այո, ապա որքանով են կարևոր, ես, քնատությունից հագիվ գտնելով *-երեն ամենապարզ բառերը, պատասխանեցի՝ այո, վստահ եմ, դայրոցում անցածս տառերից մի քանիսը չկան, իսկ ինչ վերաբերում է դրանց անհրաժեշտությանը, դա պետք է ճշտել այբուբենը ստեղծողի հետ, ցավոք, այդ մարդը մոտ 16 դար է, ինչ չկա: Ասաց՝ այս պահին, այսպիսի պայմաններում սրանից ավելին չեմ կարող անել:

Իհարկե, քնիցս բան չհասկացա, երեկոյան 8-ից քիչ անց էլ զարթնեցի, որը հենց բավական էր, որ խանութները փակված լինեին: Ուտելու բան չունեի, Մաշայի ու Ֆրանչեսկայի հյուրասիրածից մի քիչ կերա, և ծանոթացա Տան մյուս բնակիչների հետ՝ *-ական ծագումով ամերիկացի 60-ին մոտ մի գույզ՝ Անտոնն ու Ինեսան, որոնցից թարգմանիչն ամուսինն էր, ժամանակին *-իայից Իսպանիա արտագաղթած Ժուժան, կար մեկը ևս՝ Էստոնացի տղա, որին ոչ ոք դեռ չէր կարողացել տեսնել, բացի Ժուժայից, ըստ որի՝ պետք էր նրա հետ զգույշ վարվել, բայց՝ վճռականորեն, ինքը մի անգամ, օրինակ, ուղղակի հրամայել է, որ նստի և ուտի, ինչ որ իր առաջ դրել են, և շփումը փաստորեն հաջողվել է:

Բաց նախամուտքում էինք նստած, երբ ինձ նով զբաղվելու հերթն էլ եկավ, բոլորը կարեկցեցին հայերենի խնդրիս համար, ես ձայնակցեցի իրենց, թե չեմ կարող թարգմանության մեջ և՛ բնագրի բոլոր առանձնահատկությունները պահպանել, և՛ միմիայն այն բառերը օգտագործել, որոնք գերծ են կոմպից բացակայող տառերից՝ ընթերցողին բյուրիմացության մեջ զգելով, թե դա նույնպես հեղինակի ռճական հնարանքներից է: Չհաշված այն, թե ոչ շատ ժամանակ անց ի՛նչ առեղծվածի կրախվեն անհետացած մշակույթներ ուսումնասիրողները, եթե այստեղ կատարածս հայերեն թարգմանությունը ընկնի ձեռքները: Հանկարծ Անտոնի կինը, որ խոսակցության կեսին միացավ մեզ, միանգամից, կարծես ամբողջ կյանքում ունեցել էր կիսատ այբուբենի պրոբլեմը, հուշեց, որ բացակայող ամեն տառի տեղը մի նշան դնեմ՝ աստղանիշ, դուարի կամ տոկոսի նշանը, որոնք հագվադեպ գործածելի են, հետո տանը փոխարինեմ իսկականներով:

Մաշայից հարցրին հաստ ապակիներով, մեջտեղում էլ ոսպնյակ ունեցող սկնոցի չափը, ինչը ես, օրինակ, ինձ թույլ չէի տա, պարզվեց մի աչքը միևնուս 16 է, մյուսը՝ շարքից ելած, համարյա չէր տեսնում, երկար-բարակ հարցուփորձեցին 8 անհաջող վիրահատությունների մասին: Նա պատասխանում էր անկեղծ, պատմեց նաև, թե ինչպես է *-ական դիվանագետներից մեկն իրեն փողով օգնել:

Ֆրանչեսկան իր մասին քիչ պատմեց, երևի ամաչում էր, որ թարգմանությունների պաշար չունեի թիկունքում: Ցավեցինք:

Առավոտյան առաջին մտքերիցս մեկն այն էր, որ իտալուհին Մաշայի մոտ է քնել: Դեռ ճամբարում մի երկխոսություն էր եղել Ֆրանչեսկայի ու ռուսի միջև, թե գիշերն ինչքան քնեցի՞ր, Մաշա, սա թե՛ ինչքան, կես ժամ՝ ինչքան, որը կարծես հատուկ ինձ համար էր հնչեցվել, թեև ճիշտ է նաև, որ դա «Մոդեստի պոչը»՝ «տնայինը» ներկայացնելու օրն էր, որին նախորդող անքուն տքնանքն արդեն նկարագրել եմ:

Տրամադրությունս ընկավ, ներսս փորփրեցի, թե՛ ինչու՞ ... Ինքնասիրությունս է խոցվել... Բայց արդյոք իմ կայացրած որոշման բնական հետևանքը սա չէ՞ր լինելու, ես չէի՞ վիժեցրել մեր կապը վերականգնելու Ֆրանչեսկայի բոլոր փորձերը... Մյուս կողմից էլ՝ ի՞նչն է բնական, դեռ... չի չորացել նամակի թանաքը (հները կասեին), որտեղ խոսում

Էր բացառիկ սիրո մասին, որով համակվել էր իմ հանդեպ... Թեև ուրիշ ի՞նչ էր սպասելի դրանից ճամբարում պատահածից հետո. ես հո չէի՞ հավատում իրեն...

Չնայած... Սաշան վատ տղա չի, թող սիրեն իրար. ինձ՝ ի՞նչ:

Այդ հոգեվիճակով չկարողացա երկար աշխատել, գնացի խանութ՝ բան-ման առա, եկա-կերա, հետո ցերեկով պառկեցի, քնեցի: Ջարթնեցի, որ մեկը դուռը ծեծում - անունս էր բղավում: Բացեցի՝ տեսա 2 մետրը անց, երկար խոշոր դեմքով կորացած ակնոցավոր մի տղա է, ենթադրեցի, որ էստոնացին է, թե՛ քեզ հեռախոսի մոտ են կանչում, շուտ արա, շտապիր: Գնացի հեռախոսի մոտ, որտեղ մնացի համարյա կես ժամ. շվեյցարահայ ընկերուհիս էր, որի հետ խոսակցությունն ավարտվեց նրանով, որ հրավիրեցի ինձ մոտ, ինքը համաձայնեց, դեռ մի բան էլ մեղա եկավ, թե իրեն պարտադրում է որպես հյուր: Հայտնեցի, որ շուտով ծննդյանս օրն է, ինքը թե՛ անցնի՞, հետո՞ գամ, ասացի՝ չէ, հենց այդ առթիվ էլ արի: Նույնիսկ մի օր էլ շուտ՝ համ էլ կօգնես: Հարցրեց, թե ի՞նչ բերի ինձ: Կարծեմ, չեք կասկածում, չէ՞, որ պատասխանեցի՝ ջանասադությունը:

Գեպքերի նոր շրջադարձը հետևեց, երբ զիջերով, այսինքն, այստեղի կյանքիս հասկացողությամբ ուշ երեկոյան՝ 12.30-ին, բարձրացա երկրորդ հարկ, որ նախօրոք պատրաստած նամակներս ինտերնետով ուղարկեմ, տեսա, Ֆրանչեսկան հեռուստացույց էր նայում: Ասաց՝ պատկերացրու, այս ծրագիրը 2 տարի առաջ էի տեսել, նույնն է, չի փոխվել, թե՞ զարմացել էր, որ նորից նույն թեմայով եմ խոսում. ուշադիր չէի, չեմ հիշում՝ նման մի բան: Օգնեց ինձ ինտերնետին միանալ. ես ամեն նոր տեղում նույն նախնական սարսափով էի մոտենում համակարգչին, ընթացքում խոսում էինք, բայց՝ հերթապահ արտահայտություններով:

Նամակներն անմիջապես չուղարկեցի, որովհետև ուշադրությունս շեղեցին 14 նոր ստացած ‘ի-մեյլ’-ներս, մասնավորապես Էվանսինը, որը պարունակում էր նրա հոդվածը՝ նախատեսված ‘Սանդղավանդ’ կոչվող ինտերնետային քերթի համար և մտահոգությունը, թե այն գրաքննության կարող է ենթարկվել, ինչը բնականաբար սրեց հետաքրքրությունս, Ֆրանչեսկային էլ տեղեկացրի: Խնդրեց իրեն էլ ցույց տալ, ասացի, որ արտագրել եմ սկավառակի վրա, հետո կտամ, խոսելու միջոցին փոստիս հետ կապված խնդիրները վերջացրի, չհաշված 2 ամենակարևոր նամակները, որոնցից մեկը չուղարկեցի՝ մոռացա, մյուսի հասցեն էկրանին չէր, չէի էլ հիշում, թե ինչ պատահական քթի վրա էի գրել՝ սովորությանս համաձայն (զվսի չընկա, որ կարող էի մի քանի նամակ հետ քերթել, ու հասցես ձեռքիս տակ կհայտնվեր, քանի որ վաղուց չէ, ինչ տվյալ մարդուց նամակ էի ստացել):

Ի վերջո, չեմ հիշում որ մեկիս առաջարկով մտանք Ֆրանչեսկայի սենյակ, որտեղ նա իր համակարգչի մեջ արտագրեց Էվանսի հոդվածը, և սկսեցինք միասին կարդալ.

«ՏԱՄՆԵՐՈՐԴ ՕՐՎԱԴԱՍԸ

Ճամբարի տասներորդ և վերջին օրը մրցության, արդյունքի ու անցածի արժևորման օր եղավ, և հուսով եմ, որ սույն պեսանկյունները ներկա հոդվածի տողերում ևս կարտացոլվեն: Ընթերցողներն արդեն «Սանդղավանդ» կոչվող ինտերնետային տրիբունում քարզմանի շնորհիվ լիովին տեսել են «Մոդեստի պոչի» վրա տրքնելիս՝ թե՛ հասակարգիչների առաջ, թե՛ շրավազանի, թե՛ չկոնրասական լնակի սպիհն, միևնչյեռ այն ժամը, երբ յուրաքանչյուրն անջանք պետք է արտասաներ իր քարզմանությունը, չորեքշաբթի հնչեց: Սրեղծագործողները կանգնած էին մի ոչ շար երևելի, բայց ազդեցիկ դատարկորի առջև, որը ձայնագրիչն էր՝ դիկտոֆոնը:

Յինիկության հավակնորդ ունանք հարցականի տակ կառնեն տասներքանի լեզվով հիշատակյալ վեպի մի պարբերության քարչրաչայն ընթերցանությունը, բայց քննությունից առավել այն երևան էր քերտում, թե նույն լեզվին քարզմանողները որքան տարբեր են բնագիրը ներկայացնում, չհաշված այս տարվա Ճամբարի իսկական էկզորիկան՝ երկի էտրոներեն և, մանավանդ, հայերեն մարմնավորումները:

Չնայած քարզմանությունների գնահատման հնարավորությունն ավելի լավ է ընթերցողիս թողնեմ...

Ես անցնեմ Հրաժեշտի երեկոյթին, որին, ինչպես ասում են, իսառը զգացումներով էինք սպասում: Միանգամից էլ ասեմ, որ նրա ամենահարկանշական կողմը ծերուկ Դեյվիդ Բոուիի համարներն էին՝ վաղուց մոռացված Անգլիայում և այլուր, բայց այսրեղ շուրջարի մեջ քառող խորվաթ, իրապացի, ֆին, ավարդիացի, հայ մարդկանց, թեև կային նաև այս տողերի համետար հեղինակի նմանները, ովքեր ի սրբե ուրախանում էին, նկատելով, որ ինչ-որ մեկի մանուկ հասակի մազը՝ պեղված մայրաքարաքից, սարկելու նշաններ է ցույց տալիս:

Մակայն տպավորություն չարեղծվի, թե այսրեղ միայն ինչպիսիեղ շուրջար էր, իսկ ինտերեկտուալ-արեղծագործական տարրը բացակայում էր իսպառ: Ո՛չ, պարզապես այն ևս ծայրված էր քարզմանական մրցույթի մեջ. օրվա ընթացքում ճամբարականները չեռքից չեռք հանչնեցին հնգարող մի քերթված, որը մեկը քարզմանում էր

մայրենի լեզվին, հաջորդը (այն իմացող)՝ դարչյալ* -երեն: Խառն իմաստը այն էր, թե ինչ կպահպանվի բնագրից: Մեր կանադոսի Հելենն ու Սաշան թերևս ամենահեռուն արմնկեցին բանասարեղծությունը. առաջինը հինգ տողի կեսը միայն թողեց, երկրորդը դրանք չգեց մինչև ութի, ընդ որում՝ որոշակի ութի՝ իրեն փոխանցված հերթական թարգմանությունից վերակերպեց... 19-րդ դարի հռչակավոր* -ացի բանասարեղծի երկու քառատողանի հայրենի արեղծագործությունը: Մինչդեռ այն, ինչ Վարդանը երկնեց՝ նա էր շղթայի վերջում, ծածուկ մնաց ամենքից՝ իր խորագրա, թեև բոլորովին ոչ համաշխարհային լեզու կոչվելու ենթակա մայրենիի պարճառով:

Ես այսպես հանգիստ գրում եմ, սակայն թարգմանությունների ընկալումը լավագույնս արտացոլում է այն, որ ավարտին մոտ շարերն արտասուք էին թափում հոռոտցից:

Երեկույթին պատշաճ շուք տալու համար* -ացի ու հայ գրողներն ասիից երեք վառվող մոմով մի փայլե մահճակ հրեցին ջրավազանի մեջըրեղը, ոմանց աս դրոց հակառակ սեռի թարեկանությունը շահելու վերջին փորձերն անել, կազմակերպչուհին ջանում էր անկեղծ կարծիքներ հասկաբել Ճամբարի մասին՝ հակառակը իրախոսող ժպիտով, կազմակերպիչը, որի արտաքինը նախկին ֆուրբոլիստ Յոժեֆի հետ է համեմատելի. երկուսն էլ այնպիսի տպավորություն են թողնում, թե քացու տակ կտան ճամփին հայրնված ամեն մի չորասքանու, ժակերտից վաղ մոռանալով իր այսրեղի կեսին, չեռքի հեռախոսով այլ անկեղծ կարծիք էր աշխատում պարզել սանս...

Երեկույթի եզրափակմանը, որ առավորյան եղավ՝ իր շար նախորդներից էականորեն չտարբերվելով, ես, ավաղ, ծուլությանս բերումով սկանսարես չեղա»:

Այստեղից Էվանսն անցնում էր Ճամբարի ողջ տասնօրյակի վերաբերյալ «օլիմպիական կարգի վիճակագրական ամփոփումներ կատարելուն», և թվարկում ամենահնարամիտ ազգանվան մրցույթի հաղթողներին՝ առաջին տեղում չեխ տղա էր, որի ազգանունը Երկաթգիծ էր թարգմանվում, Յոժեֆի անվան՝ ամենատեղաբող Ճամբարում մնացած հյուրի մրցանակը նախորդ տարվա նման Յոժեֆն էր շահել, Ֆրանչեսկան ամենաձայնեղ կին էր ճանաչվել՝ ետ թողնելով մի ռումին ուսանողուհու, որի արժանիքները գնահատելու համար Էվանսը բավարար էր համարել նշել, որ նա իր պատկից հարևանուհին է: Երրորդ տեղում գնացքներն էին:

«Հասանք պարտության վերջին, միաժամանակ և՛ զագաթնակերին. ճամբարաբնակների տղամարդ սեքս-կուռքի ընդորոշանը: (Հարկ չկա, որ ամուսիններին սպասող փիլիսոփայական տրիկոնալ և այլ չափից դուրս լուրջ ընդունեն այս առաջնությունն ու տիրույթը): Սեքս-կուռքի դերին համասպարասիանությունը պահանջում է շռայլություն, էլեգանտ պահվածք և խորամանկ քննադատ: Գուցե դա էր պարճառը, որ ճամբարականները վիեննացի Չաբային տրվեցին այս տարվա բրոնզե մեդալը: Գուցե մի ուրիշ պարճառ կար: Համեմայն դեպս, շնորհավորում ենք:

Այստեղից, սեքս-կուռքին հասնաբող հանգամանքներ չեն նաև որոշ խորհրդավորությունը, աներկրային խորեն մտավորական մտախորհիզողը: Եթե ասվածն առարկություն չի հարուցում, ուրեմն քչերը կզարմանան, որ ծիր-թարգմանիչներն 'արծաթի' են դարասպարել Սաշային: Սա և Սեքս Սաշայի համար ենք դրական նշան դիտում, և առհասարակ ռուս*-ական հարաբերությունների:

Կարծում եմ, որ հաղթողի անվան հատուկ հիշարակության կարիքն իսկ չի զգացվում: Վարդան, սա ևս քեզ բաժին հասավ: Կանայք միշտ էլ կույ են տալիս արանությունների, ծաղրական միջանկրությունների խայծը, որոնց նուրբ, իմաստուն վարպետն էս դու (ինչպես և, իհարկե՝ պինգ-պոնգի): Կենսացր: Դե, հիմա ասա, թե ինչպես կլինի հայերեն սեքս-կուռք»:

Կարդացինք, ծիծաղեցինք, Ֆրանչեսկան ավելի արագ էր վերջացնում էջը, քան՝ ես, բայց ոչ այնքան* -երենին վարժ տիրապետելու շնորհիվ, որքան տարիների հետ իմ ավելի դանդաղ կարդալու, ինչը երևի նրանից էր, որ հետաքրքիր տեքստերն անպայման մտովի վերլուծում էի, իսկ ինչը որ միայն ժամանցի համար էր, արդեն ուշադրությունս լարված չէր պահում: Ես չտապեցի հարմարվել իտալուհու տեմպին, որպեսզի գտնեի գրաբնության ենթակա կետերը, որոնց առկայությունը երաշխավորել էր գովագողը, մինչև հասկացա, որ Էվանսը պարզապես չի դիմացել՝ մինչև նյութը հրապարակվի, և Ինտերնետում կարդանք, այլ ցանկացել է ավելի շուտ պարծենալ իր ստեղծագործությամբ: Անգլիացիների հետ իմ շփումը առաջին անգամ չէ, որ այսպես էր վերջանում.

այն նախնական տպավորությունը, որ դեմքերին կարդացվում է՝ թե ի՞նչ տեսակ ազգեր կան՝ հայերի նման, ավելորդ բեռ են մարդու հիշողության համար, փոխարինվում էր բողոքական հետաքրքրասիրությամբ, թե այդ այլերկրացի՝ն տեսնես ինչպես կզնահատի իրենց... Ի դեպ, ոչ մի ակնարկ չէր արել բազելցի Իվոնին իր սիրահետելու մասին, որին մի անգամ մեծաքամակների շարքում էր թվարկել, երբ Ճամբարի կանանց էինք քննարկում, իսկ վերջին օրը կարծես թե լեզու գտան իրար հետ ու վիենուիին որոշեց մի շաբաթ էլ *-իայի մայրաքաղաքում մնալ այդ կապակցությամբ՝ հակառակ իր արվեստաբան ընկերոջը տված շուտ վերադառնալու խոստման:

Ժամն արդեն դարձավ 2.30, ես ասացի, որ քնելու եմ գնում, բայց առանձնապես վեր չկացա, Ֆրանչեսկան թե՛ այստեղ էլ կարող ես քնել: Որ այդպես է մի հատ մտնեմ լոգարան՝ ասացի, հիմնավորապես լվացվեցի, տո-սյո, վերադարձա, ուզում էի հանվել, ինքը, թե ինչի՞ ուրեմն չենք իջնում քո սենյակ, որտեղ ահռելի մահճակալ կա: Չայն չհանեցի, իջանք, հարցրեցի՝ զինի ուզո՞ւմ ես, ուզեց, գնացի խոհանոցից բերեցի՝ առնվազն 4 տեղում ճոճացնելով հատակը: Խմեցինք՝ **‘Էգերյան ցուլի արյան’** մեծ մասը, մնացածը սկսեց դանդաղ խմվել, այնպես որ առաջարկեցի պառկել: 2-3 ժամ հետո դեռ քնած չէինք, պահպանակ առաջվա պես չունեի՝ լարախաղացությամբ էի պարսպում, որից հոգնած մի պահ դադարեցրի շարժվելս ու ոչ միշտ անկեղծ տնքոցներս և հարցրի, թե ծանո՞թ է արդյոք հայկական կամաստուտրային: Այշահար ուզեց իմանալ, թե հենց մեր այդ վիճակու՞մ եմ մտադիր պատմել: Ասացի՝ հա, ի՞նչ կա որ: Շատ չոգևորվեց, բայց համաձայնեց, որ պատմեմ, ես թվեցի 3 հիմնական դիրքը.

1-ին՝ տղամարդը՝ մեջքի վրա պառկած, գործիքը՝ ձեռքը, ավտոն՝ վրայից,

2-ը՝ տղամարդը՝ կողքից, ավտոն՝ դռնկրատի վրա,

3-ը (ավելի այլանդակը)՝ ավտոն՝ կապոտը բաց, տղամարդը գլուխը մտցրել է մեջը:

Ծիծաղեց, մի քիչ էլ շարունակեցինք, ինձ քաջալերելու համար էր, երևի, որ հաճոյախոսեց, թե ի՞նչ մաքուր մազեր ունես, ես էլ զարմացա, թե՛ ինչ էլ բան գտար գովելու (24 ժամ տաք ջուր կար բոլորիս լոգարաններում), հետո միգրենի պես գլխացավ բռնեց ինձ: Մի ողորմելի բարձ կար էդ հսկա մահճակալին, որը նույնիսկ 2 նորածին կիսելու ի վիճակի չէին, իսկ ես սիրում եմ, որ գլուխս բարձր լինի. մի խոսքով՝ առաջարկեցի, որ գնա իր սենյակում քնի, մանավանդ որ լույսը բացվել է, Տան, մեզ չհաշված, 5 հոգանոց բնակչությունը շուտով ոտքի կելնի: Ու՞մ է հետաքրքիր, թե մենք ի՞նչ ենք անում,- ասաց: Իբր թե՛ ազատ Եվրոպայում ենք: Ո՞նց հետաքրքիր չէ,- ասացի,- հիմա բոլորը դռներին կպած մեզ են ականջ դնում: Քնծիծաղեց, մինչդեռ պարզվեց, որ լրիվ իրավացի էի, գիշերային ճոճոցների մասին հարցը հնչեց, մի օր ուշացումով, ուղղակի, չգիտեի՝ ինչ պատասխանեմ շփոթմունքից, որի համար շատ լուրջ հիմքեր կային՝ շուտով կիմանաք:

Իսկ իտալուհու մեկնելուց հետո իր վարքի մասին ակնարկներն ավելի թեժացան, երբ որ մեր կապը ես այդպես էլ մինչև վերջ թաքուն պահեցի այստեղի հասարակությունից:

Այլապես նրա մասին խոսողը ուրիշ մի բառ չէր օգտագործի, քան՝ ‘կուրվան’:

Հաջորդ օրը ուշ վեր կացա, շատ ուշ: Ֆրանչեսկան ինչ-որ իտալական ճաշ էր եփում ընդհանուր ընթրիքի համար, ավանդույթ, որի սկիզբը, Տան բնակիչներին մերձեցնելու նպատակով, Ժուժան էր դրել իսպանական հորջորջվող անհասկանալի մի կերակրով, որի անքանակ ամանները ես լվացի՝ հնազանդվելով վիճակահանությանը: Սաշան օգնում էր իտալուհուն, այդպես էր նաև օրվա մնացած ընթացքում, ճիշտ է, Ֆրանչեսկան ցերեկն ինձ հետ մի քիչ բան կերավ (եթե դա արդեն բրնձով փլավ սարքածս օրն էր): Լվացքի թեմայով էլ շփվեցինք. իմ հագուստները մեքենայի համար քիչ էին, ինքն էլ իրենը պետք է ավելացներ ու ամբողջը լվանար:

Ընթրիքի միջոցին Ֆրանչեսկան անընդհատ էր, նստած իմ ու Սաշայի միջև՝ մեկ մեկիս վրա էր փլվում, մեկ՝ մյուսիս, թեև ակնհայտորեն ավելի շատ՝ ինձ, հետո առաջարկեց, որ ես ու ինքը միասին մի շաբաթով գնանք Մոսկվա՝ Սաշային տեսնելու ու զվարճանալու. այնտեղ ինքը շատ ընկերներ ունի: Ես, քաշվելով, որ ինքս ընկերներ չունեմ՝ մեր երբեմնի գլխավոր մայրաքաղաքում, համաձայնեցի, բայց դրանով չհանգստացավ, ասաց, որ լուրջ է ասում և նկատի ունի հենց եկող տարվա գարունը: Լավ, թող լինի գարունը: Չէ՛՝ իսկապես: Եկող գարունը դասախոսություններ են կարդալու՝ ճիշտը պատասխանեցի ես՝ չհասցնելով ավելացնել, որ դրանք շաբաթը մեկ են լինելու, այնպես որ միևնույն կարգավորել կարելի էր, բայց գլխումս ծագել էր փողի հարցը, որը չէի պատրաստվում իտալական ձևով քննարկել՝ ի լուր ամենքի:

Ուտելիս ու հետո գովեցինք կերակուրները, որոնցից գլխավորը ոլորած պելմենիի տեսք ուներ, հետը՝ սունկ-բան: Դուրս եկանք նախագավիթ, մաքուր օդին զինի խմելու, ամաններն Անտոնն ու Սաշան էին լվանում, Ֆրանչեսկան խոսեց-խոսեց, հենց մենակ մնացինք, նետվեց ինձ համբուրելու, Ժուժան անցավ կողքներովս՝ համարյա բանի տեղ չդրեց, շոյում էր, հետո համբուրեց ձեռքս, ասաց, որ հարավ-իտալական է՝ կա՛մ թխության առումով, կա՛մ, միգուցե, Սիցիլիայի կողմերում դոնի ձեռքը համբուրելու սովորության:

Այնուամենայնիվ, ինձ թվաց, որ աչքի պոչով հետևում էր խոհանոցի դռանը, որտեղից, գործը վերջացնելով, մեզ միացան աման լվացողները: Ինչպես և սպասվում էր, առաջարկ եղավ, որ բոլորս մեր ազգային երգերը երգենք, ես՝ Բարով եկար, սիրուն կռունկ՝ -ը կատարեցի, որի հաջողությունը մինչև օրս անկասելի էր եղել արտասահմանում, Ֆրանչեսկան աղաչեց, որ իր համար գրեմ բառերը, ավելի ստույգ՝ տեքստի տառադարձությունը, նորից քննարկվեցին տարբեր ժողովուրդների ուտելիքները, մինչև որ իմ գահլան գնաց, ասացի, որ գնում եմ մի քիչ գրեմ, ինչը հասարակությունն ընդունեց սառնությամբ, թե՛ իբր ի՞նչ ես ձևեր թափում. եթե գրող ես, ուրեմն անպայման պե՞տք է գրես: Բանի տեղ չդրեցի և այդ օրից սկսած ամեն ուշ երեկոյան նույնն արեցի՝ հակադրվելով նաև առավոտ գրելու իմ երևանյան սովորությանը, բայց փրկելով ինձ ընդհանուր գրույցների տաղտուկից:

Մի բանի բոստ էր անցել, ներս մտավ էստոնացի տղան, ամաչելով առաջարկեց օգնել կոմպիս մեջ բարելավել հայկական այբուբենը, որի պատճառած հոգսի մասին հայտնի չէ, թե որտեղից գիտեր: Արդյունքի չհասանք, բայց երևաց, որ քաջատեղյակ է, Word-ի վերաբերյալ զիրք էր թարգմանել անգլերենից. խոստացավ շուտով խնդիրը լուծել: Նրա գնալուց հետո եկավ Ֆրանչեսկան, նորից պաշալվեցինք, արդեն սեքսին մոտ դրության էինք, երբ ասաց, որ հերիք է աշխատեմ, միանա՛նք նախագավթում նստածներին, ես կատակեցի, թե՛ ընդ՝, սկսվեց կանացի խանդը տղամարդու գործի նկատմամբ, գնաց՝ ստանալով հրավերս՝ վերադառնալու, երբ սիրտը կուզենա:

2 Ժամի չափ անկատար այբուբենով ինձ չարչարեցի: Արդեն գրում էի այստեղի՝ Տան անցուդարձի մասին, երբ պառկեցի՝ մտածելով, որ մեկ է, իտալուհին ուր-որ է կգա: Պատուհանս հարևան էր նախագավթին՝ ձայները հասնում էին իմ սենյակ. դատելով այն բանից, որ միայն Ֆրանչեսկային էի լսում, մյուսները ցրվել էին, հետը

Մաշան էր մնացել, որին լսելը նույնիսկ այն ժամանակ էր դժվար, երբ որ կողքիդ էր: Իտալուհու բոբոռոցը երբեմն լռում էր, ենթադրում էի, որ ռուսն է քրթմնջում, իսկ մի անգամ մտքովս անցավ, որ համբուրվում են: Մի քիչ կարդացի՝ քնելս չիմացա:

Չեմ հիշում, առավոտ քանիսին վեր կացա, բայց իրենք ինձանից ուշ հայտնվեցին, Ֆրանչեսկային հարցրի, թե ինչպես է քնել, սառնոտ քաղաքավարությամբ ասաց՝ լավ, որոշ ժամանակ անց Մաշայի հետ գնաց լճափ: Վերադարձան, Մաշային խնդրեց ուղեկցել իրեն կայարան, որ գնացքների չվացուցակն իմանա՝ մյուս օրը մայրաքաղաք էր մեկնում:

Էստոնացին եկավ իմ սենյակ, այբուբենի գործը հասցրինք հաղթական ավարտին՝ բացատրեց, թե ինչն ինչպես անեմ, և իր բերած տառերով ինքս հայկական հնչյունաբանական ստեղնաշար սարքեցի:

Հետո բոլորով ամերիկյան ընթրիքին էինք (‘ազգային կերակուրը’ կոչվում էր ‘գրիլ’), որին Անտոնն ու Ինեսան (2 ծախսը մեկ անելով) իրենց տեղացի ընկերներին էլ էին հրավիրել, որոնցից մեկը՝ Ալոիզին, *-ական ծագումով ամերիկյան հրեա միլիարդատեր-բարերարի առաջին հավատարմատարներից էր այս երկրում: Պատմեց, որ նա դեռ սոցիալիստական ժամանակներում, սկսելով 1 միլիոն դոլարից, 600-ի է հասցրել գիտական ու մշակութային ծրագրերի տարեկան ֆինանսավորումը:

Այգում էինք ընթրում, Անտոնը, որ խոսում էր երկար դադարներով, բայց ոչ թեմաներն էին թարմ, ոչ մտքերը, տրտմուցաց, որ շատ բան է վատացել երկրում, մասնավորապես կենցաղի լեզուն գոեհկացել է իր նախորդ այցելությունների համեմատ. մայրաքաղաքում մի 70-ամյա, բարեկիրք տեսքով տիկնոջ փողոցի տեղ է հարցրել, սա պատասխանել է, թե՛ Լնպե՛ս են խառնել ամեն ինչ փչացածները, որ մարդ իմանա՝ ինչը որտեղ է: Առաջ այդ տարիքի կինը դրսում նման արտահայտություն գործածե՛ր՝ եզրավիակեց Անտոնը, որին Ինեսան արձագանքեց, թե միգուցե կինը 70 չի եղել, ամուսնու՞ն է այդքան մեծ թվացել... Ծիծաղեցինք, Ալոիզին հետ ընկավ՝ աթոռի առջևի ոտքերն, անհարթ գետնի պատճառով, հետևիներից բարձր էին, մեջքի վրա գլորվեց՝ իր բախտն էր, որ փռվեց թիկունքում գտվող 3 քանդակների ուղիղ մեջտեղում, այլապես, այդ մոդեռն ստեղծագործությունները ժանգոտ երկաթից էին՝ հացը ցամաք կուտեր:

Էստոնացին հյուրերի մեքենայով իր գործերով գնաց մայրաքաղաք, կարծեմ իրենց տանն էլ գիշերել էր, տեսքից հո չե՛ս ասի, որ էդքան ճարպիկ է, ոնց պահը բաց չթողե՛ց՝ արձանագրեց Ժուժան, ով մնաց, նորից նախագավթում հավաքվեցին, իսկ ես քաշվեցի ներս: Մինչև ուշ գիշեր ծիծաղում էին, հետաքրքիր չէր, թե ինչ էին խոսում՝ քնեցի մենակ:

Հաջորդ օրը Ֆրանչեսկայի հետ երես-երեսի հանդիպեցինք, ես հայացքս թեքեցի, նա խնդրեց վերադարձնել իր մկրատը, որ ուզել էի՝ իմը չգտնելով, ես էլ հո մկրատը չէի՞ ուտելու. ասացի, որ մտնի-վերցնի՝ երբ ուզում է, իսկույն արեց, ես էլ իր ետևից նախաարահի մեծ սեղանին, որն ի դեպ 16-րդ դարի էր, դրեցի նաև կարճիկ մոմը, որ բերել էր իր հետ, բայց չէինք վառել, դա էլ լոպսեների ընթացքում անհետացավ:

Կեսօրից հետո մի անգամ էլ տեսա նրան, երբ Մաշայի հետ իրերն էր բարձում Ժուժայի ավտոն: Ես չշեղվեցի այդ կողմը, զբաղված էի՝ մայրաքաղաքից 150 կմ կտրած-եկած մի գրող նախագավթում ինձանից հարցազրույց էր վերցնում, ինչից բոլորի սիրտը ճաքեց. իրենք ավելի մեծ երկրներից էին, ավելի վաստակաշատ թարգմանիչներ, իսկ հարցազրույց ինձ հետ էին անցկացնում: Դ-ա հանգիստ տարա. վեջս չէր, թե ինչ էին մտածում:

Հրաժեշտ տալու այստեղ ընդունված ձևով՝ ես ու Ֆրանչեսկան 2 անգամ իրար թուշ պաչեցինք, ինքը խտալավարի, ձայնով, ջիզյարով իսկականից, ես ֆրանսիացիների ոճով՝ օր, ասաց, որ ծննդյանս օրն անպայման հյուր կգա. ես չասացի, որ ուրախ կլինեմ, քանի որ ուրախ չէի լինի: Մաշան նրան ուղեկցեց, վերադարձավ, երբ նախորդ օրվա ընթրիքի մնացորդն էինք վերջացնում, կերավ, ես հրավիրեցի նախագավթում գինի խմելու, զանգեց Ֆրանչեսկան, Մաշային ուզեց, Մաշան ինքը հետո զարմացավ, որ իտալուհին ընկերոջ մոտից զանգել էր իրեն: Բազմանշանակ հայացքներին ի պատասխան միայն ասաց, որ Ֆրանչեսկայի ընկերը գործազուրկ է, ‘կրկնակի’, որը չգիտեմ, թե ինչ էր նշանակում, ոչ էլ հարցրեցի: Այնուհետև շարունակեց, թե ինքը՝ Ֆրանչեսկան էլ, ավտովթարի ենթարկվելով, 2 ծանր վիրահատություն է տարել, որից մեկի ընթացքում հեռացրել են համարյա

ամբողջ փայծաղը: Ինձ համար մութ մնաց՝ ռուս թարգմանիչ-գրականագետը մյուսների խղճահարություն էր ուզում հարուցել, որ իտալուհուն շատ խիստ չղատեին բամբասելիս, թե՛ ի՞նքն էր այնքան խղճում նրան, որ ցանկացավ բարձրաձայնել դա. ամեն ինչի մասին նույն միօրինակ հնչեցանգով էր խոսում:

Ի վերջո, ես նորից ամենքից շուտ վերադարձա սենյակ, աշխատեցի, պառկեցի, բոլորն էլ շուտ պառկեցին:

Մի քանի օր ոչինչ չկատարվեց. Ֆրանչեսկան չկար:

Ցերեկները քարզմանում էի, իրիկուններն՝ այս պատմությունը գրում: Թարգմանությունը ստեղծագործական ազարտ չէր առաջացնում մեջս և բարդ չէր՝ Հայաստանում էլ երբ ասես հանգիստ կանեի, բայց գոռով ինձ զբաղեցնում էի: Երկու օր այդպես անցկացնելուց հետո զգացի, որ շունչս կտրվում է, ճամբարի կենսալի զգացողություններիս հետքն էլ չի մնացել, խմելու հրավիրեցի Մաշային. նա գիտակցությանս մեջ լրիվ առանձին էր Ֆրանչեսկայից՝ եթե խնդիր ունեի, միայն իտալուհու հետ էր: Անտոնն ու Ինեսան՝ այդ կապիտալիստներն, առանց մեզ ձայն հանելու դրսում, ինչ-որ պանդոկում ճաշելու էին գնացել, սա էլ մեր վրեժի պես բան կլիներ. այսինքն, իմացե՛ք, մենք էլ տանը չենք փակվել-մնացել: Իհարկե, կարելի էր Ժուժային էլ ձայն տալ, բայց այդ դեպքում խոսակցությունն էլի «պարտադիր ծրագրի» շրջանակներում կանցներ՝ գեղասահքի լեզվով ասած: Զայեցինք լճափով, Մաշան քափառել էր այդ տեղերում, բացատրեց, թե որ կողմում մոտավորապես ինչ կա, տասնյակ խմելատեղերից մեկում հանգրվանեցինք: Իր համար կարմիր գինի պատվիրեցի, մատուցողից հարցրի, թե ինչ գարեջրեր կան, դրանցից մեկը տակառի էր՝ Մաշան հուշեց, պատվիրեցի մեծ գավաթ, բերեցին կասկածելի սիրուն, բարձր բաժակով, համը տեսա՝ մի այլանդակություն. քաղցր, մեջը՝ կիտրոն, ըստ բաժակի ու տակդիրի գրության (ճաշացուցակը սեղանի վրա էր) գտա-համոզվեցի, որ անակոհով միակ տեսակն էի ընտրել: «Փող ես տվել, չէ՞, ափսոս է»՝ չմտածելով հանդերձ, խմեցի, քանի որ երկար չէր հաջողվում մատուցողի հայացքը բռնել, մինչև որ բռնացրի, մի մեծ գավաթ՝ «Հոլսթեն» պատվիրեցի: Համարյա ինքս ինձ փիլիսոփայեցի, որ անձանոթ տեղում մարդը միշտ սխալվում է, սա միջին վիճակագրական վրիպում է:

Կուշտ ռուսերեն խոսեցի՝ *-երեկից հոգնած: Տուն գնալուց Մաշան խմած էր, որ անսպասելի էր. մինչև այդ լավ էր դիմանում խմիչքին՝ 2 հատ 200 գինի էր ընդունածը: Առանց արկածի տուն հասանք, իր բացած գարեջուրն էլ խմեցինք, գնացինք մեր սենյակները: Հաջորդ օրերին սովորություն դարձրի ցերեկով լճափ գնալը, որպեսզի քայլեմ՝ շունչս բացվի, և առհասարակ դարպասից դուրս գամ: Նստում էի, նայում կարապետներին ու բաղերին, մի անգամ ծոցատետրս տարել էի, նշում արեցի, թե՛ թոչունները վե՛ն ու վայելու՛չ են, քանի հանգստացողները ուտելիք չեն գցել: Այդ ժամանակ բավական է մեկը մի խոշոր կտոր բռնի, մյուսներն ընկնում են հետևից, մի կարաս, օրինակ, երկար հետապնդում էր բաղիկին՝ բոյից չամաչելով, մինչև խեղճը կարողացավ ընթացքում կուլ տալ պատառը: Անցողարձողներին էի վերլուծում, որ մի տեսակ արատավոր էին թվում, նրանք էլ ինձ էին նայում, որ բոլորից տարբերվում էի մաշկիս թխությամբ, մորուքով, երկար շավարով ու մուգ գույնի շորերով, բայց անկեղծ ասած չէի էլ ուզում նմանվել: Անձրև եկավ, պատասպարվեցի մի ծառի տակ, որը 1926 թ. նոյեմբերի 8-ին տնկել էր Ռ-աբիդորանաթ Թագորը՝ այստեղ առողջությունը վերականգնելու կապակցությամբ, ինչպես վկայում էին նրա արձանը և կից մակագրությունը:

...Ծննդյանս օրվա հետ կապված իմեյլագրությունն օր-օրի թեժանում էր, պարզաբանումներ էի հղում ժամի ու քնելու հարմարությունների վերաբերյալ, իտալուհին զանգեց՝ հարցնում էր, հյուրերս ինչքան են, աներեսի նման ուզում էր մեծ խմբով գալ, իբր իրեն շատ էի հրավիրել, հիմա էլ շրջապատը քարշ տար-բերեր, երբ որ տնտեսուհին ինձ մոտ նեղարտել էր, թե Ֆրանչեսկան գրություն ու գումար է բողել, որ իր սենյակը ծննդյանս օրն էլ է զբաղեցնելու՝ առանց հարցնելու. արդյո՞ք այն այդ օրն ազատ կլինի: Ես հասկացրել էի, որ իտալուհու գալը ինձ համար ավելի ցանկալի չէ, քան՝ իր, և այժմ հնարավորինս մաշյ լասփոդի մեջ մրթմրթացի, թե՛ Ֆրանչեսկա, ընկերուհիս է գալիս արտասահմանից՝ ինձ մոտ կմնա, մի 10 հյուր էլ *-իայի մայրաքաղաքից եմ ունենալու, գիշերելու տեղի տրություն կլինի, ինչից նորից կոտր չընկավ, թե՛ լավ, հետո կզանգեմ, որ իմանամ, թե դրությունն ինչ է, երկի (ԵԲԵՎԻ) մենակ ես ու ընկերս գանք:

Հաջորդ օրը երեկոյան ուշ փոստու ստուգեցի-վերջացրի՝ հեռուստացույցը միացրի (մոտ մի ամիս է, չէի նայել, նույնիսկ մի քանի նամակիս մեջ նշել էի այդ փաստը), սեքս ալիք բռնեցի՝ անգլերեն, անունը՝ ԳՈԼԳ, հետո գերմաներեն էլ՝ մի էրոտիկը, համարյա մի ժամ նայեցի, մինչև որ շատ միօրինակ դարձավ, կարողացա կտրվել ու վերադառնալ սենյակ: Միտքս ընկավ շվեյցարուհու հետ հեռախոսագրույցը, երբ ասաց, որ չվախենամ, չի կծի, ես էլ պատասխանեցի, որ կկծի, լավ, չի կծի՝ թող չկծի... Այն ժամանակ կարգին չանդրադարձա, թե ինչու էրոտիկ հնչեցին խոսքերս, հիմա բացատրեցի նրանով, որ մի բաղաձայնի փոփոխությամբ նախադասությունը կատարելապես ուրիշ իմաստ էր ձեռք բերում:

Շվեյցարահայուհին հաջորդ օրը պետք է գնացք նստեր, որից առաջ զանգելու էր, բայց իր նշած ժամն անցավ, չզանգեց, անհանգստացա. գալու՞ էր, թե՞ ոչ, ինչպես էի բացատրելու իր բացակայությունը, երբ բողբոխ տեղյակ էի պահել, որ ծննդյան օրվա հյուրասիրությունը միասին ենք կազմակերպելու: Առավել տհաճ կլիներ, որ Ֆրանչեսկան, որի մտահոգվածությունն ակնհայտ էր, երբ իմացավ շվեյցարուհու գոյությունը, կարծես թե ինքը պետք է անպայման մի հիմնական ընկեր, դեռ ամեն այցելած տեղում էլ մեկ ուրիշն ունենար, իսկ ես ընդհանրապես՝ ոչ, չհանդիպեր նրան իմ կողքին՝ իր փոխարեն: Լավ էր, որ երեկոյան ուշ այնուամենայնիվ զանգ եկավ: Թե՛ սցենարիս հետ կապված շտապ գործ է ծագել, բեմադրիչը, ‘ինքն էլ լավ չհասկանալով ուզածը՝ պահանջում է ինչ-որ բաներ փոխել, որը պայմանագրով իր իրավունքն է, ուստի շտապ պետք է Գերմանիա գնամ, բայց եթե որոշ բաներ արագ տնօրինեմ, ծննդյանդ օրը տեղ կհասնեմ, մանավանդ եթե նախատեսել ես, որ 2-ս ենք լինելու տանտերերը, ինչպես որ ասում եմ: Տեսեք-տեսեք՝ ասացի ինքս ինձ դաժան բեմադրիչների ու պայմանագրային պայմանների առումով, բայց ներքուստ հանդարտվեցի:

...Հետո, չգիտեմ ոնց պատահեց, ձախ կողքս շոշափեցի, զգացի, որ մի ահագին մեծ ուռուցք կա վերջին կողիս հենց տակ: Այ՛քեզ բան, այ՛քեզ բան, այ՛քեզ բան: Երկար ժամանակ շոշափում էի: Թե ինչ էի մտածում՝ չեմ ասի, իմաստ չունի, ինքներդ կպատկերացնեք: Վերջը չիմացա, թե ինչ անեմ, մի քիչ գինի ունեի՝ 2 բաժակի չափ, Սաշային առաջարկեցի, խմեցինք, ինքը զարեջուր բերեց 3 բանկա, տաք էր, 2-ը սառցարանը դրեցինք, մեկը (ես սառույց լցրեցի բաժակները) խմեցինք, հետո նորից Անտոն-Ինեսայի հյուրերից եկան, դատարկ կամ ինձ անձանոթ թեմաներով խոսակցության ունկնդրեցի, երկու շիշ տարբեր տեսակի գարեջուր ունեի՝ ավելի լավ որակի, քան Սաշայինն էր, բերեցի՝ դրանք էլ խմեցինք, հետո գնացի գուգարան, հավեսս չեկավ հետ վերադառնալու (արդեն 3-ով էինք մնացել՝ ես, Անտոնը, Սաշան՝ Անտոնն էր հիմնականում իր պրոֆեսորական տոնով անալի-անալի խոսում), բարձրացա 2-րդ հարկ՝ մտքումս որոշեցի, որ կասեմ՝ փոստս էի ստուգում, ու հեռուստացույցը միացրի (ինձանից առաջ ինչ-որ մեկն էլ էր նայել, վառվող փոքր կետից երևում էր): Համենայն դեպս աչքս աստիճաններին էր, որովհետև թե սեքս ալիքով իրար ինչե՛ր էին անում՝ Աստված ազատի, մի ժամվա չափ դրա պատճառով չէի կարողանում կտրվել, հետո իջա, պատշգամբում դեռ գրույցը շարունակվում էր, բարի գիշեր մաղթեցի, որին մի քիչ սառը պատասխանեց Անտոնը՝ երևի անբաղաձայնության էր թվացել անհետանալս, ու մտա սենյակ, հանվեցի-պառկեցի՝ քանի թարմ էին հեռուստացույցի տպավորություններս: Հիշեցի ԳՈԼԳ-ով (ահա թե որտեղ էր լռության ոսկին) տեսածս աղջիկներից մեկին՝ հիանալի մարմնով ու դիմագծերով, որը գրավիչ էր դարձնում անմիտ ու փուլգար ֆիլմը, բայց ջղայնացել էի, որ մեղմ ու հանգիստ հայացքով տեսախցիկին էր նայում, երբ էդ բուք կենդանիներից մեկը դեմքին ու բերանի մեջ էր թափում, ու մտքով քննեցի, թե չէ՞ր կարող (յարար) ուրիշ մի զբաղմունք գտնել իր համար: Հետո մի կերպ վանեցի նրա ճակատագրին միջամտելու ցանկությունս՝ այն փաստարկով, թե ես իմ արժանապատիվ կենցաղն եմ դժվարանում ապահովել Հայաստանում, ինչ կարող եմ անել իր համար. ո՛չ ամուսնանալու է՝ ամուսնանաս, ո՛չ իր նմաններից առաջինը կամ վերջինն է...

Կարդացի էլ, մտածեցի ուռուցքիս ու իր չարագուշակ նշանակության մասին, քնեցի:

Առավոտ լոգանք էի ընդունում՝ մտքերիս մեջ ընկած, երկար-բարակ, երբ դուռը ծեծեցին, թե հեռախոսի մոտ արի, արագ դուրս թռա՝ արբիչով փաթաթվելով, բայց լսավողի մեջ արդեն «տու-տու» էր, երբ հագնվեցի, իմացա, որ զանգը Շվեյցարիայից (կամ արդեն Գերմանիայից) է եղել, ապուշ էստոնացին տեսել է՝ սենյակում չեմ, ասել է՝ տանը չի (չեմ հասկանում, թե ինչի համար լոգանքս հարամեց էր դեպքում), գերմանախոս «տիկինը» հայտնել էր, որ մի ժամից նորից կզանգի:

Մի թեթև նախաճաշեցի, որոշեցի ուռուցքի մասին ոչ մեկին բան չասել, բայց 5 րոպեից մեկ շապիկիս վրայից կամ տակից շոշափում էի, ի վերջո, մտածեցի՝ գոնե պարզեմ, թե ինչպես կարող եմ բժշկի գնալ, միուլ տվեցի խոհանոցում, որ Ժուժային մենակ բռնացնեմ ու հարցնեմ. ամենատեղյակն ինքն էր՝ հինգերորդ անգամ էր Թարգմանչի տանը հյուրընկալվում: Հակառակի պես երկար չէր ստացվում, հետո խոհանոցի սեղանատանը, որ կիսամիջնորմով անջատված էր վացարանային հատվածից, դեմառդեմ եկա այդ կնոջն ու հարցրի, թե ի՞նչ պետք է անել, երբ բժշկի դիմելու կարիք ունես: Հարցրեց, թե ի՞նչ է պատահել: Ինչքան էլ որ հարցը ենթադրվող էր, պատասխան չէի նախապատրաստել ու շնչառությունիցս բողոքեցի: Ասաց, որ անմիջապես կլսի թոքերս, փորձ ունի, հաճախ է պետք եղել տղայի թոքերը լսել: Անցավ մեջքիս կողմը շապիկս բարձրացրեց, ականջը մի 2 տեղ կպցրեց, հայտարարեց, թե բան չկա՝ լրիվ մաքուր եմ, ինչ իմաստ ունի 80 դոլար տաս բժշկին, որ նույն բանն ասի. ներվերիցդ կլինի, որ լավ չես շնչում: Ճիշտն ասած, դա էլ ինձ համար որոշ չափով միսթարական էր. գիտեի, որ էդ գարշելի հիվանդությունը շատ հաճախ է թոքերին կաչում, ու իմ ամենամոտ ընկերն էլ դրանից մահացավ 1995 թվի օգոստոսի 20-ին:

Մեր խոսակցությունը խոհանոցի ներսի մասից որսաց Ինեսան, որն իրար խառնվեց, թե այդ ինչ պատմություն է բժշկի հետ կապված: Հենց իմացավ, որոշեց, որ գույնս լավ չէ, ես մտքումս քննադատեցի, թե բավական է ասես, որ հիվանդ ես, բողոքն ասպացույցներ կգտնեն, բայց մի քանի օր հետո էլ, երբ նույն թեմայով խոսք եղավ, պնդեց, որ այդ ժամանակ իրոք գույնս կանաչ էր: Մեր գրույցի վերջին Սաշան էլ հասավ, որի համար, դեմքից զգացվեց, չնչին, քամահրելի առիթ էր շնչառության խնդիրը:

Այս բողոքով հանդերձ, իմ սովորական օրակարգից չշեղվեցի, նույնիսկ չենթարկվեցի Ժուժայի ճնշմանը, որի մեքենայով էինք գնալու ծննդյան օրվա գնումներն անելու՝ թե շուտ գնանք-հետ գանք, որ ինքը աշխատանքին դառնա, ինքս առավոտներն էի լավ գրում, ու մի քիչ մատեցի կոմպի առաջ, նախքան թե կշարժվեինք: Ժամանակը ձգում էի նաև, որ խոստացված զանգը հասնի, բայց չհասավ, ու Անտոնին՝ միակին, որ մեզ հետ չէր գալիս, խնդրեցի, որ ընկերուհիս իր միջոցով հաղորդի, ինչ որ պետք է:

Մագործի խառնոթ մտանք: Երևակայությունս ավելի չէր գոռել, քան՝ հայկական խորովածը, որը հնարավորություններին համեմատ թանկուտ էր: Հանրախառնոթի համեմատ էժան գնով խոզի չալաղաջ առա՝ մարդա մի կտորի հաշվով, մի քիչ էլ ավել, զինին, որ «տնեցիների» նվերն էր ծննդյան օրվա առթիվ, լիտրով առանք, էժան (20 լ), ես նույն տեղից գարեջուր գնեցի, որ սովորականից մի բան էլ թանկ էր, հետո մտանք շուկա, Ինեսան բիբար-պոմիդոր-բաղրիջան ընտրեց՝ ես փողը տվեցի, հաց, մի քիչ էլ թթու վերցրինք, եկանք տուն:

«Ընկերուհուց», ինչպես ներկայացնում էի նրան, դեռ լուր չկար: Երբ նախագավթում մենակ էինք Սաշայի հետ, ասացի, որ ուռուցք եմ հայտնաբերել կողքիս, ու բժշկի մասին առավոտվա հարցուփորձս դրա հետ էր կապված: Շոշափեց, առաջին հարցն այն էր, թե երբ եմ վերադառնում տուն՝ դեռ 12 օր կար, երկրորդը՝ ապահովագրություն ունեմ, թե՛ ոչ, պատասխանեցի՝ ոչ, չէին էլ պահանջել նախօրոք, ասաց՝ այդ դեպքում, երբ որ հայերը մայրաքաղաքից գան, խնդրի, որ օգնեն, քանի որ առանց ապահովագրության սարսափելի թանկ կլինի նույնիսկ

ամենահասարակ հետազոտությունը, որը և ես ընդամենը ակնկալում էի, պարզ ասած՝ գոնե մի ռենտգեն: Խնդրեցի ոչ մեկին բան չասել, իսկ իրեն ասելս բացատրեցի նրանով, որ ուզում էի գոնե մեկն իմանար տխրությանս պատճառը, եթե ծննդյան օրվա խնջույքին հանկարծ ինձ չտիրապետեմ:

Միջօրեին վերջապես զանգեց «ընկերուհիս», ասաց՝ ամեն ինչ կարգավորել է, երեկոյան 10-ին ճանապարհ կընկնի ճեպընթացով, շաբաթ առավոտ 11.46-ին կհասնի տեղ: Ասացի՝ կդիմավորեմ, նորից հետաքրքրվեց, թե ի՞նչ բերի Գերմանիայից, ծննդյան օրվա ի՞նչ նվեր կուզենայի, մի քանի բանի կարիք ունեի, բայց որպեսզի երկար տարիներ ի վեր մեր առաջին հանդիպումը շահադիտական երանգ չստանար, գարեջրի գավաթ խնդրեցի, որ իր գործը հեշտացնեմ, մանավանդ թանկ բան էլ չէր՝ մեկը տեսել էի այստեղի հանրախանութում՝ մի դուլարի կարգի էր: Ուրախ էր որոշակի ցանկության համար, հարցրեց, թե ինչով է պայմանավորված նվերի ընտրությունը, դե, - ասացի, - Գերմանիան 2 բանով է հռչակավոր՝ ֆաշիզմով ու գարեջրով, բայց հո ծննդյան օրվա առթիվ ֆաշիզմ չեմ պատվիրի:

Ժուժայի համառ պնդմամբ մի 2 կտոր մսով «փորձնական» խորոված արեցի. և՛ ոչ անտեղի, այստեղ խորովածի համար պատրաստի ածուխներ էին վաճառում, որ հազիվ իրենք իրենց էին տաքացնում, ժամուկեսից ավելի քաշեց, մինչև գործը գլուխ եկավ, «տղերքով»՝ ես, Սաշան, Էստոնացին, համտես արեցի՞նք՝ վատ չէր ստացվել (Ժուժան ասաց, որ ինքը թարգմանում է, մնան բաների վրա շեղվելու «գլուխ չունի»):

Երեկոյան դեմ դարպասի զանգը տվեցին, չգիտես ինչու ոչ ոք չլսեց՝ ուրիշ ժամանակ միանգամից 3-4 հոգի կվազեր, ինչպես և՛ հեռախոսի դեպքում էր, վեր կացա, դուրս եկա պատշգամբ՝ դարպասը մի 30 մետր հեռու էր, երևաց, որ կին է սպասողը, ինքնահրկիզվողի կատաղի շարժումներից կռահեցի, որ Ֆրանչեսկան է, հետ դարձա սենյակ, որ դարպասի բանալին վերցնեմ, նորից զանգեց, մտմտում էի, որ չգնամ՝ տանջվի, բայց հապաղումս կարճ էր, ներս թողեցի, իրար այտեր համբուրեցի՞նք՝ ընկերա-քաղաքավարական պահանջներին համապատասխան, մուննաթ եկավ, որ ուշ եմ բացել, կարծես թե առանց բանալին վերցնելու հնարավոր էր:

11-ն անց նախազավիթ դուրս եկա, հավաքված էին բոլորը՝ առաջարկեցի համտեսել խնջույքի համար նախատեսված գինին, չառարկեցին, 5-լիտրանոցը դատարկեցի՞նք կեսգիշեր չեղած, Ֆրանչեսկան սկսեց աղմկել, որ արդեն շնորհավորել է պետք ինձ, հասկացա, որ նվեր է բերել. փորագավր դա է, դիմադրեցի, որովհետև կարծեմ ռուսները վատ նշան են համարում նախօրոք ծննդյան օրը շնորհավորելը, որն իմ ուռուցքի ֆոնի վրա էլ ավելի անդուր էր՝ ինչքան էլ որ սնոտիապաշտ չեմ: Բայց հաջողություն չունեցա. 12-ին 5 պակաս երգեցին «Հեփի բրոդերս թու յու», ու Ֆրանչեսկան տվեց իր նվերը՝ հավիկներ, փայտե, 4 հատ, որ նկարած կորեկ էին կտցում կլոր տախտակից այն արագությամբ, որով կկարողանայիր պտտել տակը կախված գնդիկը: Մի քիչ վարպետացա վառեկներին կերակրելու գործում՝ մյուսներին ի զվարճություն, հետո բարձրացա, որ փոստս ստուգեմ՝ միզուցե հյուրերիցս ոմանք դեռ ճշտելու բան ունեին՝ արդեն չունեին, ԳՈԼԳ-ը գցեցի. 2 մսագործ պահեստ-սառնարանում 3 քնձռոտ, ‘փչացած’ նմուշի աղջկանով էին զբաղված՝ տավարի ջանդակներն էլ ուսներին գցած: Անջատեցի-իջա սենյակ՝ ինքս ինձ հույս տալով, որ վաղն արդեն մերձակայքումս ավելի նյութական, ինձ հասանելի ու հաճելի կին կլինի, քան մսագործներին սպասարկող անուղեղներն էին:

Հուլիսի 27-ին լավ տրամադրությամբ զարթնեցի, լողացա, բողբոն առանձին-առանձին հարցրեցին, թե ոնց եմ, Սաշան նույնիսկ ճշտեց, որ առողջական վիճակս նկատի ունի, ես միանգամայն լավ էի զգում ինձ ու ինքս էլ տարակուսած էի, թե ահա մարմինն իմ... որ լիովին անհոգ է, երբ այդ չափի ուռուցք է բուն դրել իր մեջ: Մանր-մուրր գործեր արեցի, մինչև կայարան գնալու ժամանակը եկավ (կասկածներս, թե արդյոք 2 կայարան չկա այս փոքրիկ քաղաքում, նախօրոք փարատեցի. կար, բայց մեկում լուրջ գնացքները չէին կանգնում), բաց կառամատույցին երկար արևի տակ մնացի, որովհետև գնացքը 20 րոպե ուշացավ, ի վերջո տեսա ընկերուհուս, մոտեցա, երբ արդեն իջնում էր, փաթաթվեցինք, խնդրեց՝ թե օգնի այն տղային, որ ճամպրուկն է իջեցնում, օգնեցի, տեղական լեզվով շնորհակալություն հայտնեցի՝ նրա զարմանքը շարժելով, հետո վերջապես մենք մեզ մնացինք:

Վերջին անգամ 3-3,5 տարի առաջ էինք հանդիպել Հայաստանում, երբ ես կապը խորացնելու ոչ մի փորձ չէի արել, արտաքննապես կամ հոգեպես ինձ չէր գրավել, մինչդեռ այստեղ սկսել էր մարմնավորել մի երազանք, որը կարելի է ձևակերպել այսպես. մեր թշվառ հայրենիքից հեռու, ընդհանուր սովետահայ անցյալի ու միջավայրի ներկայացուցիչը իր «նվաճած» բարեկարգ երկիրը թողնում-գալիս է իր մնանին տեսության... Իրար թեթև սիրահարված էինք եղել ավելի քան 15 տարի առաջ, բայց բանը մի քանի համբույրից չէր անցել, ու հիմա ես նայեցի նրան այն աչքով, որ շուտով ըստ ամենայնի իմ անկողնում է պառկելու: Լիքը-լիքն էր, խոշոր կրծքերով, կարճատեսի ակնոցը մեղմում էր կամային (համարյա՝ բռնատեր) կնոջ ուրվագծվող կերպարը:

Թարգմանչի տուն ճանապարհվեցինք ոտքով՝ ընդամենը 5-6 րոպե պետք է քայլելիք, ամենաձանր պայտասակն էլ անհիվներով էր, քարշ տալը դժվար չէր: Ասաց, որ շատ չեմ փոխվել, միայն նիհարել եմ, սովորականի պես պատասխանեցի, որ դա առաջին տպավորությունն է ինձանից, քանի որ մարդիկ մտածում են, թե հազիվ թե որևէ մեկը միշտ այսքան նիհար եղած լինի, ավելի հավանական է, որ նոր է նիհարել: Այդ ընթացքում քիչ էր մնացել մոռանալի ասել, որ ինքն էլ համարյա չի փոխվել ու ահագին լավ տեսք ունի: Երկմտանքով, բայց հավատաց, մանավանդ երբ թույլ գրկեցի ու մի թեթև համբուրեցի: Փոխանակման կետի մոտ դադար տվեցինք, որ տեղական դրամ ձեռք բերի, որից՝ «ոչ մի գաղափար չունեմ», սիգարետ գնեց, եկանք տուն, տեղավորվեցինք, նվերներս տվեց՝ օժանելիք ու զարեջրի գավաթս, որ հախճապակուց էր, վրան միջնադարյան դարբնոցի նկարով ու մետաղե ծանր, հնարավոր է՝ արծաթյա գմբեթածև կափարիչով, որը նախասառնարանային ժամանակներում պաղ է պահել խմիչքը և կույմերի միջև մեծ դադարների ընթացքում արգելել ճանճերի ոտնձգությունները. մի խոսքով՝ համարյա արվեստի գործ:

Ներկայացրի մյուսներին, մի անգամ առանձին էինք՝ գրկվեցինք խոհանոցում, զգացի, որ ուզում եմ, ինքն էլ կատակեց, թե ննջարանի կարիք ավելի ունենք, քան՝ խոհանոցի, պատասխանատվության զգացումս հաղթեց, կոչ արեցի հապաղել, քանի որ նաև ամեն վայրկյան հյուր կարող էր գալ կամ ինձ հետ կապված հարց ծագեր, ու սենյակիս դուռը բախտեին-բացեին: Զգուշացրի, որ այնպես չանի՝ շորտիցս գրգռվածությունս երևա, քանի որ ‘տրուսիկ’ չէի հագել (որ մեկը կեղտոտվում էր, թափում էի՝ հին էլ էին, վերջացրել էին, նորը չէի առել, բայց նաև հաճելի էր, որ օդ էր խաղում մարմնիս վրա՝ ամեն տեղ), դա երևի գլոխգովանություն համարեց, ես էլ փոշմանեցի՝ ինչքան էլ որ ասածս ճիշտ էր. վախեցա, որ գիշերը մի բան խանգարեր՝ իրեն չցանկանալի հիմնիկվա չափ (որ արդեն պատահել էր ու երբ ասես կկրկնվեր), և հիմար դրության մեջ հայտնվելի: Ինքն էլ գնացքում նստած էր եղել 14 ժամ, երկար չմնաց առույգ, ուժեղ գլխացավ բռնեց, որոշեցինք, որ մի քիչ հանգստանա, իսկ ես ծառերի տակից ճյուղի փշուրներ հավաքեցի, աշխույժ կրակ սարքեցի, էստոնացում էլ իր սենյակից դուրս քաշեցի, որ ինձ փայտ մատակարարի, ինչը պլոնների խանդավառությամբ կատարեց, ու խորովեցի ամբողջ բանջարեղենը, որին * -երեն սխալմամբ նրգեղեն էի ասում:

Ի վերջո, խրվեցինք ուտելիքի պատրաստման գործերի մեջ. Ֆրանչեսկան, Ինեսան խորոված բանջարեղենն էին մաքրում, ես միսը նոր էի կրակին դնում, երբ մայրաքաղաքից եկան հայկական ինքնավարության ղեկավարները, հետները՝ մի էջմիածնական միաբան, որի անցկացրած պատարագին ներկա էի գտնվել 2 շաբաթ առաջ, մի * -ական կաթոլիկ եկեղեցում, ցերեկը, երբ տեղացի հավատացյալներ սակավ էին լինում: Մեր 35 հոգանոց համայնքը մի քանի մասի էր բաժանվել, հայկական միակ եկեղեցին, որ Վիեննայի միսիթայանների տնօրինության տակ էր, մնացել էր ուրիշների ձեռքը, և ‘այլընտրանքային թեմն’ իր համար այլ աղոթքի տաճար էր հայթայթել: Թե ինչպես եղավ՝ ասացի երիտասարդ հոգևորականին, որ ծանր հոգեվիճակում եմ, թե՛ ինչու՞, ասացի՝ մեղքեր եմ գործել, միաբանը ելքը խոստովանությունը համարեց. ‘Ես գիտեմ, որ ճշմարտությամբ կարող եմ բացել ցանկացած մարդու աչքերը, ախպեր՝ հայտարարեց: Ես ոչինչ իհարկե չխոստովանեցի, բայց ջանք չգործադրեցի էլ նաև, որ իր այդ համոզումը ասասնեմ. միգուցե նա պակաս վտանգավոր էր հասարակության համար, երբ վստահ էր, թե նման մեծ առաքելություն ունի... Աշխատեցի ինձ ներշնչել, որ ուրախանալ է պետք, որ մարդն այնուամենայնիվ ժամանակին կտրվել է թաղի քրեաժին միջավայրից:

Մայրաքաղաքցիները բաստուրմա դրած միս էին բերել, դրա համար էլ առանձին կրակ արեցինք, և երկրորդ մեքենան դարպասից թեքվեց ներս. քանդակագործ հայ ընկերս էր հրեական ծագումով իր սիրած աղջկա ու նրա ֆլամանդուհի ընկերուհու հետ՝ ջինջ հայացքով, միջահասակ, շիկահեր ու լուսաճառագ մի կնոջ, որի հետ մեր ծանոթության պահը ձգվեց 15 րոպե՝ ավարտին համբույրով, որը ծննդյան օրվա առթիվ էր: Դա հարուցեց ընկերուհուս խանդն ու ֆլամանդուհու հիասթափությունը, երբ շվեյցարահայուհին մոտեցավ ինձ - գրկեց, որպես իր իրավունքների ցուցադրություն, ֆլամանդուհին էլ հոգոցով հայտնեց, որ Վիեննայում ապրող ընկեր ունի, որն ինձ նման վերջերս է բաժանվել կնոջից, իսկ շվեյցարահայուհին, մի քիչ հյուրերին պրպտելուց հետո, ամենամոտիկ պատրվակն օգտագործելով, ինձ լուսավորեց, թե նախքան վիեննացին՝ ֆլամանդուհին ընկերուհի է ունեցել, որին շատ է սիրել: Ակնհայտորեն, բայց անտեղի հույս տաժելով, որ իմ մեջ բավականաչափ պահպանողականություն կգտնվի, որ հետաքրքրությունս լուսաճառագ շիկահերի հանդեպ կորի:

Քիչ ժամանակ անց, քանդակագործ ընկերս իր մեքենայի ուղևոր կանանց հետ գնաց լճափ՝ զբոսնելու, բայց բուն պատճառն ուրիշ էր. հայերը սկսել էին գռեհիկ կատակներ անել, այն էլ՝ անպայման բարձր ու տեղացիների լեզվով, և նա գերադասեց առժամանակ խուսափել նրանցից:

Հայերը դա զգացել էին և, հենց զբոսնողները վերադարձան, այս անգամ իրենք հրաժեշտ տվեցին մեզ, որ վերադառնան: Ես, որ քանդակագործին արդարացնում էի՝ նշելով արվեստի առանձնահատուկ բնույթի հանգամանքը, ծաղրում ինքնավարականների հաստ փորերն (իհարկե ոչ բոլորն էին հայաստանյան հասկացողությամբ հաստափոր) ու ոչ մտավորական հետաքրքրությունները, ստիպված էի հիշել ուռուցքիս մասին և մի կողմ քաշել համայնքի ղեկավարին, որ իմանամ, թե արդյոք հնարավորություն ունի ինձ համար որակյալ բժշկական հետազոտություն ապահովել: Հարցրեց, թե ինչ խնդիր ունեմ, ցույց տվեցի ուռուցքը, ուրախ բացականչեց, թե ինքն էլ ունի դրանից արդեն քանի տարի է՝ ճարպագնդիկ է, շատերը խորհուրդ են տվել վիրահատել, ինքը չի լսել. հիմա կգտնի՞ ցույց կտա, բայց չգտավ: Ինչ վերաբերում է բժշկական հետազոտությանը, այն պետք է ամբողջական լինի, որը կպահանջի հսկայական ժամանակ (ֆինանսական կողմի մասին 2-ս էլ չխոսեցինք) և, միգուցե, ստացիոնար հսկողություն: Ես հրաժարվեցի ստուգվելու մտադրությունիցս:

Գնաց նաև Ֆրանչեսկան, որի չմնայն ուր-որ է տեղի սակավության խոսակցություններին էի վերագրելու, բայց ինքը պարզաբանեց, որ մտերիմ ընկերուհին է եկել Իտալիայից, պետք է հասնի խնջույքին, որն այդ առթիվ կազմակերպել են մայրաքաղաքում, որտեղ ինքն առանձին բնակարան ունի, ի դեպ, դատարկ. եթե պետք լինի ինձ ու ընկերուհուս, բանալին կտրամադրի:

Հետո բոլորը գովեցին խորովածը, ես իմ մեջ փքվեցի, ընկերուհուս պատրաստած սալաթ-բանն էլ ավտոժալի էին որակվել, զարմանալի էր, ուտելիքը դեռ առատ էր, մինչդեռ ճամբարի ժողովրդից, որ անընդհատ հետաքրքրվում էին, ոչ ոք չէր եկել: Երեկոյան 10.30-ն էլ անց էր, երբ հայտնվեց մեր կազմակերպչուհին՝ եղբոր հետ, արդարացավ, որ առագաստանավի վրա են եղել, որը վարձել են ընկերներով, երկար չարչարվել են անքամի եղանակին, մինչև խարխախ են զգել: Ջերմ գրկախառնությանս չընդառաջեց, ես էլ, հենց պատեհություն եղավ, Մաշային

քողեցի, որ Տունը ցույց տա իրեն, բայց հետո, իհարկե, հյուրասիրում էի կարեցածիս չափ: Ասաց, որ ես 2 առագաստանավորդ հիմա ափին եմ, սիրով կմասնակցեին խնջույքին, հրավիրեցի, հետո ինքը տատանվեց, թե հոգնած կլինեն, ձգձգեց, մինչև եղբայրը գնաց, որ չսպասեցնի նրանց և չվերադարձալ: Ինչ-որ մեկն ուզեց պարզել, թե որքանով թանկ հաճույք է առագաստանավ (որպեսզի ավելի ազդեցիկ հնչի հայաստանցիներիս համար՝ յախտա) վարձերը, աղջիկը պատասխանեց՝ մարդագլուխ օրական 15 դոլարի չափ, դա մի քանի անգամ էժան է, քան հյուրանոցը կամ տունը: Դիշտ է, շան տանջանք են քաշում՝ ամբողջ օրը նավի վրա բանելով:

Ինձ Էվանսից հարցրեց՝ չգիտեի, թե ինչու չէր եկել, զանգեց, անգլիացին ասաց, որ արդեն մեր քաղաքում է, մեքենայով է, բայց մեզ չի գտնում: Ես կարծում էի նրան ծանոթ էր տեղը (նախանձով էր խոսել մի անգամ, թե ամառը Թարգմանչի տուն ընկնելու բախտը ոմանց վիճակվում է, իսկ ավելի երիտասարդ ու անփորձ թարգմանիչները պետք է սպասեն), այլապես ուղեցույց նամակ կգրեի՝ թշնամուս չէի ցանկանա, որ տրամաբանությանն ապավինելով փորձեր Տունը գտնել. մայրաքաղաքի կողմից մեր փողոցը 58 համարից նվազում էր մինչև 30-ը, որին հաջորդում էր 36-ը, որը մերն էր: Երկար բացատրեցինք, թե ոնց գա, ես, կազմակերպչուհին, Սաշան դուրս եկանք փողոց դիմավորելու: Կազմակերպչուհին ասաց, որ Դամբարի վերջին օրերի մթնոլորտը լարված էր, ինչու՞ առանց հենց իրենց՝ *-ացիների վարքին բացատրություն տալու: Ես վայելելով՝ հարցին 1000 ու 1 մույնքան ոչ անկեղծ պատասխան տալու հնարավորությունը, ծամծմեցի դրանցից 1-2-ը, ինքն էլ անմիջապես արդարացավ, թե ճամբարականներս չգիտենք, թե ինչքան ծանր էր իր գործը: Հետո իրենք գնացին ներս, ես մենակ սպասեցի անգլիացուն, որի ձեռքի հեռախոսը նստել էր, կապը կտրվել էր:

23.45 էր, «Էս 5 ավտոն էլ անցնի, էս 3-ն էլ» հաշվելու վերջին էի, երբ մեքենայի միջից ինձ տեսնելով Էվանսը ճանապարհի մեջտեղից աջ քաշեց ու արգելակեց: Իր Կամիլա անունով ընկերուհու հետ էր եկել, որը մի փոքր արծվաքիթ, ճերմակամորթ ու մուգ կապույտ աչքերով նրբակազմ աղջիկ էր: Հաց կերան՝ Էվանսը կազմակերպչուհու հոգու հետ էր խաղում, մինչև Սաշան սրան ճանապարհեց նավածոց, հետո վրա պրծավ ինձ՝ բացահայտորեն սրամտության ու ուղղախոսության տեստի ենթարկելով ընկերուհու մոտ: Քիչումիչ դիմագրավեցի փորձությանը, որոշ ժամանակ էլ կազմակերպչուհու հետևից խոսեցինք (‘Ի՞նչ էիք մտածում այս ստեղծագործությունը գրելիս’... ‘Վեպը գրեցի՞ք, հետո՞՝ զնացիք հրատարակչի մոտ, թե՞...’ Ախր ի՞նչ՝ «թե»,- ծիծաղեցինք,- հո հրատարակիչը նախ գիրքը չէր տպելու, հետո հեղինակը գնար): Վատ չէի զգում ինձ, որ հետևից խոսում էինք՝ երևի բոլորովին յուրային չէր կամ իր դերին չէր համապատասխանում, չգիտեմ, ճշգրիտ բացատրությունը չգտա:

Շատ խամիչքը վրաս լավ է ագրում՝ գիշերն անխոնջ էի, մանավանդ որ պահպանակի կարիք չեղավ. երբ ասացի, որ չունեմ՝ ‘վայ’-ի նման մի բացականչություն արեց, բայց շարունակությունից դատելով՝ հենց այնպես, որովհետև հետագայում ևս ոչ մի անգամ չպահանջեց:

Առավոտյան ամերիկացի գույզը բողբոխ նախաճաշի հրավիրեց մի քաղցրավենիքային սրճարան՝ «Ինչիմանամինչֆիլդ և չգիտեմինչելեր», որն այս կողմերում չտեսնված մարդամոտություն ու առատածեռնություն է՝ 20 դոլարից ոչ պակաս միանվագ ծախս:

Վերադարձին Էվանսին ու Կամիլային գտանք շփոթահար, խեղճերին թողել էինք քնած, բայց մեզանից անմիջապես հետո զարթնել էին ու տեսել՝ տանը մեն-մենակ են, դուռը՝ դրսից փակ. ես ալարելուց, խոզաբար երկտող չէի թողել իրենց: Ֆլամանդուհին, որի զբաղմունքը, ավելի ճիշտ մասնագիտությունը մերսումն էր, դեռ մինչև նախաճաշը դրսում, պարտեզի ամենամոտ ծառի ստվերում մերսել էր ընկերուհուս ու քանդակագործ ընկերոջս, ես էլ երեսս պնդեցի, խնդրեցի (այնպիսի զգացում ունեի, կարծես անմահական ջրի աղբյուրը գտած լինեի)՝ և արժանացա նույն բախտին:

...Աննկարագրելի թարմացա, հոգսերս ու դժբախտություններս կարծես թափվեցին վրայիցս... մանավանդ որ ինձ կրկնակի մերսեց, մի ուրիշ «հերթագրվածի»՝ Անտոնի տեղն էլ, որը վերջին պահին հրաժարվեց (ասացին՝ վախեցավ): Մինչ ես մերսման ողջ միջոցին ինձ ստիպում էի եվրոպացի լինել, իրեն որպես կին չընկալել՝ ուշադրությունս շեղելով բաց պիրկ փորի, շիկամազ ոտքերի մոտիկությունից, բայց ինքն ընկերուհուս ուղղակի ասել էր, որ քանդակագործին ու ինձ մերսելուց հետո այն օրն է ընկել, որ պետք է զանգի ընկերոջը՝ խնդրի, որ տանն իրեն սպասի՝ արդեն անկողին մտած:

Կեսօրին Էվանսը նորից ընկերուհուն բերեց ինձ մոտ, սենյակս և հմուտ վարժեցնողի նման սաղրում էր ինձ սրախտության ցուցադրական ելույթի, իսկ ես, վայրի զազանի անհարմարության զգացումով, բայց ներգրավվեցի խաղի մեջ, որի ամենաթունդ պահին դրնեղի մեջ հայտնվեց Յուդիթը: Ես խնդրեցի, որ անհետանա, չէր անհետանում, ավելի վճռական խնդրեցի, անհետանում էր, երբ հետ պահեցի, փաթաթվեցինք: Ասաց՝ մոտիկ էր, հիշում էր, որ երեկ ծննդյանս օրն էր, բայց այսօր կարողացավ գալ: Բացի այդ, ուզում էր կարճ ժամանակով Տան ինտերնետից օգտվել, առաջարկեցի իմ ծածկաբառը, քանի որ ինտերնետից միայն այդպես կարելի էր օգտվել, ու վճարն էլ գրվում էր ծածկաբառի տիրոջ հաշվին, շնորհակալություն հայտնելով պատասխանեց, որ Ժուժան, որի հետ այստեղ մի անգամ ապրել է, արդեն տվել է իրենը: Յուդիթը՝ նույնպես թարգմանիչ, Բազելից, *-երեկից թարգմանում էր ֆրանսերեն: Ես սիրով, բայց զգույշ էի նրա հետ, որովհետև 3 տարի առաջ, նույնպիսի Թարգմանչական ճամբարում՝ հայերեն Բվաջնջում թարգմանվող անունով վայրում անասելի հուսախաբություն էի ապրել իր պատճառով. վերջին օրերին գրկված էինք շրջում՝ դառնացնելով ինձ հետ ընկերության ձգտող մի հիանալի, թեև ոչ սիրուն չելս աղջկա, բայց հետո մայրաքաղաքի իր բնակարանում ինձ ստիպեց առանձին քնել՝ որովհետև ինքն ընկեր ունի, որի հետ միասին իրենք տուն են սարքում... Ասածո ջանդամում: Ես չթույլատրեցի ինձ հարցնել, թե այդ դեպքում ի՞նչ էր մտածում մեր գրկախառնությունների պահին, երբ ինձ զսպում էր՝ ‘համբերիր, մի քիչ էլ համբերիր’ հորդորով, որը հիշելով մոխրանում էի նախ ...-Մոսկվա, ապա Մոսկվա-Երևան ինքնաթիռում:

Սովորականից շուտ ճաշեցինք Կամիլայի պատճառով. շտապում էր, պետք է տանը լիներ, երբ իր երբեմնի ընկերն ու երեխայի հայրը տեսությունից հետո վերադարձներ զավակին: Ուստի Էվանսին էլ գործի լծեցի՝ Ֆրանկֆուրտից ընկերուհուս բերած երշիկները խորովեց՝ վախվորած, Յուդիթը՝ մի բերան ասելուցս հետո,

նույնպես մնաց՝ ‘իմ խաթեր’, համառեցի՝ դիմացս նստիր, որ կարգին տեսնեմ, նստեց, անթարթ ինձ էր նայում, բացի այն վայրկյաններից, երբ իր վրա ուժ գործադրելով (եթե միայն 3 տարի առաջվա պես երևակայության գոռ չեմ տալիս) խոսում էր ընկերուհուս հետ, բարեկրթություն ցուցաբերում:

Հետո Յուդիթը գնաց միանալու իր աստղձագործ ընկերոջը, որից արդեն 2 տարեկան տղա ուներ, ես, անտեսելով այն հանգամանքը, որ * -երեկից մի փոքր ժողովրդի լեզվի թարգմանչի համեստ դերում էի այստեղ, դրվատեցի Էվանսի հողվածը, թե՛ արդեն հանգիստ եմ, որ գրողի իմ մասնագիտությունը հետո չի մեռնի: Գովեստս արտառոց էր Թարգմանչի տանը շրջանառող չափված-ձևված գնահատականների ու մաշված կատակների համեմատ, այնպես որ միայն Էվանսն ընկալեց ու ամաչելով իր երախտագիտությունն հայտնեց:

Գնացին:

Երեկոյան նորից կրակ վառեցինք, փոքրիկ գերմանական երշիկներ ու կարտոֆիլ խորովեցինք և բարի ճանապարհ մաղթեցինք Անտոնին ու Ինեսային, որ հաջորդ օրը լքելու էին մեզ: Կեսգիշերը հագիվ էր անցել, երբ հրաժեշտի գրկախառնությունների բռնվեցինք նրանց հետ՝ ‘առավոտ շուտ ենք շարժվելու, շատ շուտ’: Ամերիկյան * -ացիները Մաշայից կարծես ավելի ջերմորեն բաժանվեցին, քան ինձնից, բայց է՛, ի՛նչ անենք:

Պատկեցինք, իմ մեջ մեծ կրծքերը դրանց տարբեր կողմերից մոտենալու նոր հետաքրքրություն բորբոքեցին, շվեյցարուհին անսպասելի հարցրեց, թե Հայաստանում ընկերուհի ունե՞մ, ասացի՝ ոչ, ասաց՝ ավստո է, ասջեցի, հարցրեցի, թե՛ ինչու, լռեց, ես էլ իրեն հարցրի, թե՛ իսկ դու՞, փոքր հապաղումից հետո (փոքր բան էլ քողարկելի՞քն էր), պատասխանեց՝ ոչ:

Առավոտյան 8.30-ին զարթնեցի, ամերիկացիները դեռ չէին գնացել, 9-ն էր, չէին գնացել, 9.30 էր, չէին գնացել, մյուսները վեր կացան, նորից հրաժեշտ տվեցին իրար, ես դիտմամբ պատկած մնացի, հետո նույնիսկ համա-կարգչի առաջ նստեցի-աշխատեցի, բայց սենյակից դուրս չեկա՝ հո հազար անգամ մնաս բարով չէի ասելու:

Էստոնացին էլ հետները գնաց մայրաքաղաք, բայց՝ ոչ Մաշան, նախատեսվածի պես, որը մնաց, որպեսզի երեկոյան Ժուժայի հետ գնա, ես ասացի, որ մենք էլ կուզենայինք, բայց էդ կնիկը, չոր-չոր, թե՛ չի կարելի, Տանը պետք է մարդ մնա: Կարծես աշխարհի գողերը սպասում էին, թե որ զիշերը Թարգմանչի տունը դատարկվի, որ անբավ գանձերը կողոպտեին, երբ իր բոլոր բարեհարմարություններով հանդերձ, այստեղ արժեքավոր ոչինչ չկար, բացի համակարգիչներից, որոնք արժեքավոր էին միայն որպես հնություն, այնքան որ դանդաղ էին աշխատում: (Ճիշտ է, հիմա հիշեցի՝ նաև 1563 թվականի նկարագրող սեղանը կար՝ նախասենյակում, բայց այնքան մեծ էր, որ դուրս հանելու համար պետք է Տունը քանդեին): Չայն չհանեցի՝ իր մեքենայով էինք գնալու, գոռով որ չէինք նստի, իսկ գնացքով երկար կտներ՝ 3 ժամ, բացի դրանից պատկերացում էլ չունեի, թե մայրաքաղաքում որտեղ էինք գիշերելու, հյուրանոցները շատ թանկ էին, Ֆրանչեսկայի մոտ հավանական է Մաշան կմնար, քանդակագործ ընկերոջս մոտ մի ծալովի մահճակալ կար, որի վրա ես շատ լավ հարմարվեցի մի շաբաթ, բայց թե երկու հոգո՞վ, այդ կրծքերի էլ պարագայում...

Մի քիչ աշխատեցի, գնացինք, որ ընկերուհուս ցույց տամ քաղաքը, տոնավաճառի նման մի տեղ կար, մտանք իբր ինձ համար հովարով գլխարկ առնելու, քանի որ վերջապես տաք օրերը սկսվել էին, իսկ ես տանել չեմ կարողանում բաց գլխով արևին քայլել, բայց ի՛ր համար կարմիր, շապիկի գույնին հովար առանք՝ առանց գլխարկի, հողաթափեր, իր տղայի համար՝ երիտասարդական նորաձև գլխարկ: Գ-ները իմ հայաստանյան երևակայությունից այնքան բարձր դուրս եկան, որ այդպես էլ ոչ մի գլխարկ ‘չհավանեցի’, ինքը միգուցե զգալով, թե բանն ինչ է, ուզում էր նվեր առնել՝ ինքնասիրությունս դիմադրեց:

Թափառեցինք, լճափի նկարիչներից մեկն ինձ ձայն տվեց, թե նստեք նկարեմ՝ պրոֆեսիոնալ դիմագծեր ունեք, արտահայտությունը չհասկանալով հանդերձ, միայն ‘շնորհակալություն’ պատասխանեցի * -երեն, հեռանում էինք, ձայնեց, թե ո՞ր երկրից եք՝ Հունաստանի՞ց, ասի՝ չէ, ավելի հեռու, Իրանի՞ց, չէ՛, մի քիչ ավելի մոտիկ, Իսրայել՞, ոչ, Հայաստան: Բա ինչպե՞ս եք այդքան լավ խոսում մեր լեզվով: Մեզ մոտ բոլորն էլ ազատ խոսում են ձեր լեզվով: Այդտեղ բոլոր մյուս նկարիչները ծիծաղեցին ու տեղներից վեր կացան, որ տեսնեն, թե ում հետ է խոսում իրենց գործընկերը, սա էլ վազելով մոտեցավ, թե՛ ծանոթանանք. մայրաքաղաքի քանդակագործ էր,

ամառը եկել էր լճափ փող աշխատելու, ահագին բան գիտեր Հայաստանի մասին, հատկապես՝ ցեղասպանության, բաժանվեցինք, հիմա մտածեցի, որ ափսոս ես էլ չհարցրի՝ նորմալ փող գալի՞ս է այդ գործից, թե՞ ոչ:

Ընկերուհիս ուզում էր նստեցնել-ճաշեցնել, բուրժուական տեղերն ինձ վանում էին, իրեն հակառակը ձգում՝ առնվազն մի պատճառով, որ տուրիստական էին՝ ցուցանակները գերմաներեն էին գրված: Ի վերջո մի տեղ ընտրեցի, որտեղ, պարզվեց, տեղական հարբեցողներ էին նստած, հասկացրի, որ սխալվել եմ, պնդեց, որ մնանք՝ զուգարան էր ուզում, բայց նույնիսկ զուգարանն էր բարդ տեղ, դուրս եկանք, ոչ հեռու մի վայելուչ բացօթյա ռեստորանում հանգրվանեցինք: ‘Տիկիներ’ 2/3 մասով ջուր խառնած գինի ու տապակած հավի միս ուզեց, ես թթվասերով տապակած ծովային ձուկ ու գարեջուր, կերանք, խոսեցինք կինոներից, իր սցենարների մասին պատմեց, որոնք արդեն նկարվում էին, մտահոսացումների, որոնցից մեկը՝ մոլատարի կտրված մատների մասին, ծանոթ սյուժե թվալով հանդերձ, հետաքրքիր էր: Իբր սննդամթերք պետք է առնեինք, դա էր տնից մեր դուրս գալու բուն նպատակը, բայց ռեստորանը թողեցինք ուղիղ 8-ին՝ սուպերմարկետի փակվելու ժամին: Գնացինք սոուն, խեղճ Սաշան դեռ փոքր պայուսակը նախագավիթ հանած սպասում էր. Ժուժան, որ մոտիկ ապրող ընկերուհուն տեսնելուց պետք է հետ գար ու իրեն վերցներ, ավտոյով ընկել էր ճամփեզրի փոսը, բայց բան չէր եղել. վերջը եկավ՝ գնացին:

Մնացինք մեն-մենակ: Ինտերնետի փոստս ստուգեցի՝ հիվանդության նման, Էվանսից մի նամակ կար, թե մայրաքաղաքում լինելուց ձայն հանեք՝ սուրճ խմենք, ինքնաքննադատաբար ծնունդիս այդքան ուշ ժամի գալն էլ «կլիիրություն» էր համարել:

Կեսգիշերին մոտ նկատեցի, որ աջ ոտքիս բութ մատն ուռել ու ուժեղ ցավում է: Պառկեցի, ոտքս բարձր էի դրել, շվեյցարուհին քսմսվեց, հավես չունեի, բայց մտածեցի, որ այդ գործից հետո մարդ ամենալավն է քնում՝ փորձեն: Մի անգամը չօգնեց, հետո երկրորդ անգամ էլ պրծա, բայց ոտքիս ցավը դեռ զգում էի, սենյակի դարակներից մեկում քնաբերի կիսատ տուփ էի գտել՝ ռուսերեն մակագրությամբ, ոչ ժամկետանց, 2 հար խմեցի – քնեցի:

Մյուս օրը պատշգամբում նստած էի՝ ոտքս տնկած, տնտեսուհին եկավ մի շիշ շամպայնով՝ ծննդյանս օրվան նվեր, իրեն չէի հրավիրել անձամբ մի 2 ցերեկ չտեսնելուս պատճառով, չէի էլ զանգել, քանի որ չգիտեի, թե այստեղ որքանով է կարգ նրան թարգմանիչներին հավասար պատիվ ցուցաբերել, տվյալ պահին այլ ելք չտեսա, քան ամուսնու հետ ընթրիքի հրավիրելը, սա էլ երեկոյան եկավ՝ սիրուն թղթի մեջ փաթաթած մի շիշ խանութի սովորական գինի առած, 25 (քսանհինգ) տարի առաջ եղել էր Սևանի ափին, միջազգային շինջոկատի կազմում, լավ պահպանված հիշողություններ ուներ, որոնք բոլորը պատմեց, ես էլ լսում էի համբերությամբ՝ նայելով կոկիկ բեղերին ու ազնիվ աչքերին, հարցրեցի մասնագիտությունը, ասաց անտառի ճարտարագետ՝ անտառների նախագծման ու վերակազմավորման պետական գրասենյակի աշխատակից, բայց գործի մասին նվազ ոգևորությամբ խոսեց, քան՝ հայերիս ինչ-որ բացառիկ հատկությունների, որ նկատել էր ճամբարում: Մեզ միացել էր նաև մի գերմանուհի տիկին՝ 56-ամյա, որը * -երենի հետ կապ չուներ, անգլերենից ու ֆրանսերենից գերմաներեն էր թարգմանում, բայց գերադասել էր այստեղ անցկացնել ստեղծագործական արձակուրդը և զբաղեցրեց ամերիկացիների սենյակը:

Հաջորդ երեկոյան ընկերուհուս հետ գնացինք լճափ: Հարցրեց, թե՞ դու իսկապես չե՞ս եղել Երևանի այսինչ տեղի իմ բնակարանում (իբր թե՛ ո՞նց է հնարավոր), խոստովանեց, որ ունեցել է ինձ սիրահարվելու մի քանի շրջան (ինչպես երևի,- ավելացրեց,- շատ ուրիշ աղջիկներ համալսարանում, ուր մշտական սկանդալներով սովորում էի, հետո էլ հանգամանքների աներևակայելի շրջադարձով մի քիչ դասախոսեցի, ինչը շուտով թողեցի): Ես ադոտ մտաբերում էի, որ մի 2 անգամ համբուրվել էինք: Ինքը հիշեց, որ մի անգամը լսարանում, երբ ինքն ուսանողուհի էր, ես՝ դասախոս, իմ կարծիքով (հիմա մտածեցի), հարմար տեղ՝ ընկերոջ բնակարան չի եղել, որ տանեի, իսկ մեր ընդհանուր հաշմանդամ ընկերուհին իր տանը մեզ առանձին չէր թողնի նույնիսկ մի երկար համբույրի չափ... Հանկարծ իր վիրավորանքն արտահայտեց, որ իր նախավերջին երևանյան այցելության ժամանակ արճարանում տեսնելով չեմ բարևել, ես չհետաքրքրվեցի, թե ինչու ինքն էլ չէր զանգել ինձ խոստացածի պես իր վերջին գալուց, երբ որ իր նախնական բացատրությամբ դա իմ Փարիզում եղած օրերին էր համընկել, իսկ այստեղ խոսքի մեջ մատնել էր, որ՝ ոչ, ասացի, որ բարևել, բայց չեմ մոտեցել իրեն. պատճառն այն էր, որ

մեր խմբի մեջ իմ այդ պահի աշխատանքային ղեկավարն էր, որի ու ներկայիս շվեյցարուհու կապը ժամանակին հանրահայտ էր, նաև՝ վարկաբեկիչ, քանի որ այդ մարդը խտրություն չէր դնում ո՛չ կանանց, ո՛չ նրանց ձեռք գցելու միջոցների մեջ: Արի ու տես, որ շվեյցարուհիս կապը ժխտեց, համարեց այդ կնամուխ երևակայության արդյունք: Ես ինչ է, հո՞ չէի երդվեցնելու իրեն, ընդամենը, ինքնապահովագրման համար, ոչ մի պատասխան չտվեցի, երբ հարցրեց՝ իսկ արդյոք նշանակություն ունե՞ն ինձ համար հին պատմությունները:

Հարց տվեցի իր այդ այցելության գլխավոր առիթի շուրջ. ինչպե՞ս է զգում իրեն հայ ահաբեկիչը, որին եվրոպական դատարաններից մեկը ցմահ բանտարկությամբ էր պատժել, իսկ շվեյցարուհին, որ նրա անմեղությունը փողհարողներից ու արդարացման համար պայքարողներից էր, Հայաստան էր ուղեկցել 20 տարվա կալանք կրած այդ տղային առողջության վատթարացման կապակցությամբ ազատ արձակվելուց հետո: Ասաց, որ չարաչար զղջում է աջակցության համար, ահաբեկիչը շատ չանցած սկսել է իրենից հետ պահանջել այն փողը, որ նրա հարուստ ազգականները, բազմաթիվ դիմումներից հետո, ‘լայաղ’ են արել տալ՝ հազիվ 10 տոկոսը հոգալով անհրաժեշտ ծախսերի, որոնց զգալի մասն ընկերուհիս էր հոգացել իր սուղ միջոցներից, անհատույց, ընկերուհուս քույրն էլ նրանից ու բոլորից թաքուն ուղարկել է ահաբեկչին նրա ազգականների /եղբայր, մայր/ տված գումարը... Ահաբեկիչը նաև լուր է տարածել, թե սիրային կապ է եղել շվեյցարահայուհու և իր միջև, երբ որ ինքը հիմարություն է ունեցել սեռական անկարողության խնդրով դիմել մի երևանցի բժշկի, որի բուժքույրը չգիտեմ ում հարևանն է, ու այդպես ողջ քաղաքն իմացել է, թե ինչն-ինչոց է: Ահաբեկիչն ինքն էլ փոքր-մոքր մեկն է, դյուցագուն չէ, ինչպես նկարագրել է ցեղասպանության ու ահաբեկչության թեմաների մեջ մասնագիտացած հայաստանցի գրող-հրապարակախոսը...

Ասածներից ամենացնցողն այն էր, որ ահաբեկիչն իսկապես անմեղ է եղել, որին մենք չէիք հավատում, համարում էինք դատապաշտպանական հնարք: Եվ շտ է, տղան իսկապես, որպես գաղտնի կազմակերպության անդամ, զենք տեղափոխել է, իր պաթոնն էլ ցեղասպան բուրքերի դեմ դատարանում անկեղծ է եղել, բայց դա իսկական ահաբեկիչներին հայտնաբերելը չբաշարած ոստիկանությունը շահարկել է, որպեսզի կծկի ասպացույցների անբավարարությունը:

*-երենից հողանդերեն քարզմանող մի նոր կին եկավ՝ քառասունին մոտ, փոքրամարմին, սկնդավոր, տեղավորվեց վերևի միակ ազատ սենյակում (Ֆրանչեսկայի): Նոր ծանոթության համար նախատեսված բոլոր հոգեկան պաշարներս արդեն սպառվել էին, հնարավորինս քիչ հարց տվեցի իրեն, իր հարցերին միավանկ բառերով էի պատասխանում: Բայց մեկուսի կյանք վարելը հեշտ չէր, քանի որ նույնիսկ մայրաքաղաքից վերադարձած անմարդամոտ էստոնացին ցանկանում էր ինձ պատմել իր արտագնա կյանքի արկածները: 2 բառի արանքում տված դադարի միջոցին, որ սովորաբար երկար էր լինում, հաջողացրի ճողոպրել համակարգչիս մոտ, որի պատճառով թրված էր հետևյալ մի քանի օրը:

Ժուժան նոր կենվորի պատվին էլի իր արևին իսպանական ընթրիք կազմակերպեց, որը նույն՝ հավանաբար մենակ իր համար պատրաստած դիետիկ հատիկեղենն էր՝ ոսպ, կիսաեփի դեղին բրինձ, խոշոր շերտերով խաշած գազար, սպիտակ ճակնդեղի ձողիկներ, որ բաժանեց մեզ՝ մինչև կերա, հոգիս բերանս եկավ: Ընթացքում էլ սեղանի միակ ուտելի բանը խորոված կծու բիբարը, որ նոր ժամանածին շատ դուր եկավ և, չծիծաղեք, ծննդյանս օրվանից էր մնացել, կոչեց՝ վրացական, թե՞ հայկական՝ ինչ որ է: Երբ ամաններիս պարունակությունը կուլ տվեցինք՝ պրծանք՝ իմի մեջ հակառակի պես շատ սրտանց էր լցրած, իսկ ես սովոր էի ավստեն մաքրելու ծնողներիս պատգամը չխախտել, Ժուժան երևի դեմքիս ինչ-որ ծայրահեղական արտահայտություն նկատեց, որովհետև ուսս շոյեց՝ հայտարարելով, որ լուրջ իսպանական կերակուր չհամարենք կերածներս, խոստանում է, որ իմ հրաժեշտի երեկոյան համեղ բան կպատրաստի՝ մեքսիկական, հետագա մի քանի օրն էլ սիրաշահում էր ինձ՝ ի լուր բոլորի հայտարարելով, թե խիստ զգայուն ու խորը մարդ եմ:

‘Ի պատասխան’ այդ ընթրիքի, թողեցի զբոսնելու գնացի ընկերուհուս հետ, մինչդեռ Ժուժան ցերեկը ‘տնեցիներին’ հրավիրել էր պարտեզում շամպայն խմելու, իսկ ես ասել էի, որ մի շիշ էլ մոտս կա. հիմա կարող էին կասկածել, թե ուզում եմ շամպայնս ընդհանուր սպառումից ազատել: ‘Պարտեզի իր միջոցառումը հետաձգեց’ կարծես ինձ ընդառաջելով, բայց, մեկ է, փողոցում սկսեցի նրան հիշել իմացածս ամենակոպիտ բառեր կցելով անվանը, ինչպես օրինակ՝ ‘դանջո’, ‘դավիա’, որոնց իմաստն ինձ համար ևս մշուշոտ էր, որովհետև մեր նախորդ սերնդի լեզվում, այն էլ իմ հայրենի Գյումրիում էին գործածական, բայց հնչողությամբ լրիվ բավարարում էին այդ պահի պահանջներս: Միաժամանակ վախս արտահայտեցի, որ այն սովորությունս, որ թեկուզ մտքիս մեջ մեկի հասցեին վատ բառ ասելուց հետո չէի կարողանում այդ մարդու հետ հարաբերվել առաջվա նման, կհանգեցնի պոռթկումի, եթե Ժուժան փորձի մոմենտը գալ վրաս որևէ առիթով, ինչն իր սիրած զբաղմունքն էր:

Միրոս հովացնելու համար ռուսերեն 1-2 հայիռյանք էլ տվեցի՝ զարմացնելով ընկերուհուս, որից հետո միայն զբոսանքը զբոսանքի նման դարձավ, մանավանդ որ արդեն ավանդույթի մեղմ հմայքն ուներ: Նորից համեմատելով ճամբարի բռուն և Թարգմանչի տան հանդարտ կյանքը՝ ինձ մխիթարեցի Շանդոր Մարաիի ‘ՀԱՄԱԳԱՐՄԱՆ’ գրքի մի կտորով, որը նույն օրն էի քարզմանում:

Այն մասին, որ մարմնամարզությունը ոչ միշտ է առողջարար

Ես, օրինակ, - միշտ է, արդեն հասուն փրանսարդ ժամանակս, - փարվեցի լողով ու թենիսով: Առանձնապես թենիսը սիրեցի, երբ արդեն քառասունն էլ անց էի: Սա եզակի մարդկային մարզաձև է, մրցակիցներն իրար դեմ են դուրս գալիս՝ ամբողջ իրենց ուժը գործադրելով, այսուհանդերձ որոշակի հեռավորություն միշտ մնում է՝ իրար երբևէ չեն դիպչում: Ինչպես որ Լյուքսերը երբևէ չտեսավ Էրազմուսին, որի դեմ մենամարտում էր ողջ կյանքում:

Իսկ ի՞նչ հաճելի էր լողալը, մանավանդ՝ ծովում: Երկար լողալը խուլ, քանձր ջրում, կարծես ետ է վերադարձնում գոյության նախնական տարրերի գիրկը...

Մակայն անդրադարձաւ, որ այս մարզանքները շեղում են ինչ աշխարանքից: Մարմնիս համար ախորժելի են, բայց հոգուս օգտակար չեն: Իսկ այն, ինչ աշխարանքիս ու հոգուս համար լավ չէ, ի վերջո մարմնին էլ է վնաս: Այդ պարնառով դադարեցրի զվարճանքներս, որոնցում սնասպարծությունն էլ էր զգալի. երիտասա՛րդ, առո՛ղջ ես մնացել...

Միայն թե իմ գործն այն չէ, որ երիտասարդ ու առողջ մնամ, ոչ էլ նույնիսկ՝ որ հիվանդություններից խուսափեմ: Մրավոր աշխարանքի կոչված մարդու գործը մեկն է՝ մրավոր աշխարանքը: Եվ միզուցե զքոսանքը մարմնի կոփման միակ տարատեսակն է, որ կարող ենք թույլ տալ ինքներս մեզ. ինչպես բանտարկյալներ, որ օրական մեկ ժամ շրջում են բանտի բակում: Արդյո՞ք աշխարանքն ամենամեծ բանտարկությունը չէ:

Ահա այս զարմանալի տեսանկյունի շնորհիվ կրկնակի հաճույք ստանալով զքոսանքից, այդ օրվա զրույցից իմացաւ, որ ընկերուհուս զարմուհու ամուսինը՝ նույնպես շվեյցարացի, հարբեցող է եղել, բայց այնքան մոլի, որ ինքնահրկիզվել է երկրորդ հարկի իրենց տան առանձին մուտքի աստիճանների վրա: Ավելի վաղ մի քանի անգամ ընկերուհիս էր պատմել իր հարբեցող ամուսնու մասին, որը դեղագործ է, տարիներ է արդեն բաժան են ապրում, ‘այլ հակումներ’ էլ ունի կարծես թե, բայց քանի ինքը չի ուզում, ընկերուհիս օրերների խստութեան պատճառով դեռ չէր կարող անկորուստ ամուսնալուծվել:

Մաշան Տուն վերադարձավ իր ասածից մի օր ուշ: Ժուժան, իբր անհանգստացած, բայց ավելի շուտ՝ հաջորդ օրվա համար ռուսի խոստացած բորշի դարդից, արդեն փնթփնթացել էր, թե՛ գոնե մի հատ զանգեր, չնայած ինքը գուշակում է, թե որտեղ, նույնիսկ՝ ում մոտ է: Ես պաշտպանեցի մարդուն, թե պետք է ուրախանանք ուրեմն, որ մեր ընկերն իրեն այնքան լավ է զգում, որ չի շտապում նորից ստեղծագործական աշխատանքին լծվել:

Մաշան էլ եփեց իր ռուսական բորշը, կերանք, համեղ էր, ես նույնիսկ հացով սրբեցի ափսես, ինքը նկատեց, հուզվեց, թե՛ էդ մեկն արդեն չափազանց չէ՞: Հետո գինի խմեցինք, գինովացանք, հոլանդուհին՝ Մարթան, ու ետ երգեր նվիրեցինք իրար, լավ բառեր էլ գեղգեղացինք, շվեյցարուհին ցուցադրաբար վեր կացավ, թե՛ հոգնած է: Չնայած պատմութեանս ավելի կսագեր, որ գիշերվա առաջին ժամերը Մարթայի անկողնում անցկացնելի, բայց իր ‘բարի ու անուշ գիշեր են ցանկանում բողբոխն’ բառերին, որ ինձ էր ասում՝ նախասենյակում 2-ով էինք, չպատասխանեցի, թե ես էլ քեզ հետ բարձրանամ՝ փոստս ստուգեմ, այլ միայն ձեռքիս երեսի կողմով շոյեցի շաքարի պես սպիտակ թևը, որը սառն էր, հակառակ զրույցի ընթացքում այտերին տված կարմրությանը, որ հիմա էլ կար, և խելոք մտա սենյակս: Իսկ շվեյցարուհին զգոն սպասում էր, թեև հետո սկսեց քնածի ձևեր քափել, ես գրգռված էի, բայց՝ ոչ իր հանդեպ, այնպես որ՝ եթե ինքը նախաձեռներ, մի բան կստացվեր, բայց ինքն էլ չնախաձեռնեց՝ վերջին 2 օրը տեսած-հագեցածի նման իրեն պահելով, արդյունքում սեքսուալ երագներ տեսա մի համառ աղջկա մասնակցութեամբ, որի վրա տաքու էի դրել, որն ահագին ժամանակ գործում էր:

Գնացի՛նք մեր հրաժեշտի տղամայի համար շուկայից բանջարեղեն առնելու, Ժուժայի մեքենայով. ինչ ճիշտ է՝ ճիշտ, պատրաստակամ էր այն ի սպաս դնել ընդհանուր գործին: Որոշել էին գինին իրենք առնել, 5 լիտր էլ ես էի ուզում վերցնել, ուրախացավ, թե՛ ուրեմն, դու ու ընկերուհիդ էլ փող դրեք ու վերջ:

Մթերային գնումներից հետո մեզ իջեցրեց հանրախանութի խաչմերուկում՝ տնեցիներին նվերներ առնելու ժամանակն էր: Առանք: Ես արդեն համարյա սնանկ էի՝ ավելի շատ ընկերուհիս էր վճարում, որը մի անգամ միայն դժկամությամբ արտահայտեց, երբ նախկին կնոջս էի նվեր առնում: Չհասկացավ, երևի, թե՛ ինչու, ոչ էլ բացատրեցի: Հոգնած սատկում էինք խանութներից հետո, բայց ինքը խրվեց մեծ եփուքափի մեջ, ես իրերս դասավորելու, ու եզրափակիչ գործերի՝ հյուրերի գրքում մակագրելու, համակարգչի ավելորդ նյութերը ջնջելու, որ ներկա ստեղծագործությունը, որ չփոխած անուններով էի գրում, մարդ ես, պատահական ձեռքերի մեջ չընկնի:

Ընթրիքն առատ էր ու համեղ: Մարթան սունկ ու գալուշկա էր սարքել, ընկերուհիս՝ մի գորամասի ուտելու ամառային տղամ: Մենք տոնական էինք հագնված, ընկերուհիս սև ու գույնզգույն շորեր, ես նոր սպիտակ կոստյում, որով բոլորը հիացան, ասացին մոդելի եմ նման, երբ որ ես ինձ ալֆոնսի դերում էի զգում, քանի որ փողն ինքս չէի տվել: Երեկոյան 9-ին սեղան նստեցինք, 11-ին վեր կացանք: Ես հայրենիքի մոտիկությունից նորից օդի էի հուսա տալիս, մյուսները մեկումեջ ընկերակցում էին, ինչպես ավելի ուշ խոստովանեցին՝ իմ առողջության հանդեպ վախից՝ շշերի պարունակությունը հետս կիսելով:

Նախագավթում գինի խմեցինք: Մարթան, որի արյան մեջ շատ հրեական, մի քիչ էլ հայկական արյուն կար՝ իր ասելով, բայց Հոլանդիա էր գաղթել *-իայից, երգեց *-ական երգեր: Ես՝ հայկական: Ինքը ազգագրական-լացակումած, իրենց ‘Արցախի’ կողմերի երգեր, ես՝ ‘Մի լար, մի լար’, ‘Կիլիկիա’, ‘Բարով եկար, սիրուն կռունկ’: Շվեյցարահայտիին գնում գալիս էր, աչքովուճքով ամում, որ շուտ պառկենք, 3-ն էր, իսկ մենք 5 անց կես արդեն կայարանում պետք է լինեինք: Ես մնացի մինչև սեղանի վերջին կաթիլ գինին. միևնույն չէ՞ր՝ վերջին օրով 2, թե՞ 1 ժամ կքնես:

Փաթաթվեցինք բոլորին: Որքան էլ ընկերուհիս նախապես պինդ գրկել էր Մարթային, սա ինձ փաթաթվեց ու բաց չէր թողնում: Ես իրավիճակը թեթևացնելու համար նրան գրկեցի այտերի 2 ավանդական համբույրից:

Պառկեցինք, շվեյցարուհին մի տեսակ թատերականորեն զգվում ու քաշքշում էր ինձ, որից գնալով անտարբեր էի դառնում: Ի վերջո, չդիմացա, ասացի՝ ‘Գառ ջան, դու հո ‘մանյակ’ չե՞ս’: Միանգամից հոգոցները մի կողմ թողեց՝ նորմալ քրքջաց: Իսկ առավոտ ես զարթնեցի ցանկությունից, բայց ուշ էր: Տեղատարափ անձրև էր, որի տակ պետք է գնայինք ընդամենը մինչև նախօրոք պատվիրած տաքսին: Գնացքում, որ ժամանակին եկավ, ժամանակին էլ հասանք մայրաքաղաք, ընդհանուր ինչ-որ ծրագրեր էինք կազմում-վերջացնում: Դա խիստ կարևոր էր, որովհետև իմ ինքնաթիռին ընդամենը մեկուկես ժամ էր մնացել:

Արագ հրաժեշտ տվեցինք իրար. ես սլացա դեպի կայարանի մոտ սպասող օդանավակայանի միկրոավտոբուսը, կինը դեռ մի քանի ժամ ուներ սպասելու, մինչև իրեն տանող գնացքը գար:

Այս գրվածքի երկրորդ մասն առայժմ տպագրության ենթակա չէ որոշ տրեդիկցիոնների հրատարակման վրա նրա գործող անջանցից ունանց դրած արգելքի պատճառով: Այսուհանդերձ, հետաքրքրվողները կարող են այն ստանալ որպես հեղինակի անջնական նամակ՝ դիմելով նրան հեղու.յալ ինտերնետային հասցեով. vammart@freenet.am: